

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 5, No 2, 2017

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 5, No 2, 2017



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
5 (2)

Ցեղասպանագիտական հանդես

Journal of Genocide Studies

Журнал исследований геноцида

Լույս է տեսնում 2013 թվականից

5 (2), 2017

Խմբագրական խորհուրդ

Հայկ Դեմոյան, պ. գ. դ. (գլխ. խմբագիր)

Սուրեն Մանուկյան, պ. գ. թ.

(գլխ. խմբագրի տեղակալ)

Լևոն Աբրահամյան, պ. գ. թ.

Մելինե Անումյան, պ. գ. թ.

Արսեն Ավագյան, պ. գ. դ.

Ռոբերտ Թաթոյան, պ. գ. թ.

Վալերի Թունյան, պ. գ. դ.

Անահիտ Խոսրոնա, պ. գ. թ.

Աշոտ Հայրունի, պ. գ. դ.

Նարինե Մարգարյան, պ. գ. թ.

Ռուբեն Սաֆրաստյան, պ. գ. դ.

Գևորգ Վարդանյան, պ. գ. թ.

Ցեղասպանագիտական հանդես, Երևան:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2017.– 114 էջ:

Հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ

Հրատարակիչ՝ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Հասցեն՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Երևան, 0028

Հեռ.՝ (+374 10) 39 09 81, էլ. հասցեն՝ handes@genocide-museum.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Շուշան Խաչատրյան

Իթթիհատական ջիհադը և հայոց ցեղասպանությունը.

Զիհադի ունեցած հետևանքները քրիստոնյաների համար 7

Սուրեն Մանուկյան

Ապամարդկայնացման երևույթը ցեղասպանությունների

իրականացման գործընթացում 18

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գոհար Խանումյան

Հայոց ցեղասպանության տարիներին «մեկ հայ՝ մեկ ոսկի»

փրկության առաքելության ձեվավորման հարցերի շուրջ 35

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Միհրան Մինասեան

Անտիպ փաստաթուղթեր 1909ի Անտիոքի հայոց կոտորածին մասին, Բ. 48

Նարեկ Պողոսյան

Ռաֆայել Լեմկինի ցեղասպանագիտական ուսումնասիրությունները

Ժխտողականների մեկնաբանությամբ..... 68

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Քրիստինե Նաջարյան

Կարինի Սանասարյան Վարժարանի Գործունեությունը (1881- 1919 թթ.) 94

Տաթևիկ Ղալթախչյան

«Համազգային մեծ հոբելյանի» տոնակատարություններն Արևմտյան

Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում 104

Հեղինակների մասին 113

CONTENT

IDEOLOGY

Shushan Khachatryan

The Ittihadist Jihad and the Armenian Genocide: Consequences of Jihad for the Christians 7

Suren Manukyan

The phenomenon of Dehumanization in Genocide Implementation18

HISTORY

Gohar Khanumyan

On the Issue of Formation of “One Gold Coin for One Armenian”

Mission during the Armenian Genocide 35

SOURCES

Mihran Minassian

Unpublished Documents about the Massacre of Antioch (Antakya) Armenians in 1909,

Part B..... 48

Narek Poghosyan

Raphael Lemkin's Genocide Studies with the Interpretation of Denialists.....68

REPORTS

Kristine Najaryan

The Activities of Sanasarian College (1881- 1919) 94

Tatevik Ghaltakhchyan

Celebrations of "Great nationwide jubilee" in Western Armenia and

in Armenian-populated regions of Ottoman empire.....104

About Authors 113

СОДЕРЖАНИЕ

ИДЕОЛОГИЯ

Шушан Хачатрян

Иттихадский джихад и Геноцид армян: последствия джихада против христиан 7

Сурен Манукян

Феномен дегуманизации в процессе осуществления геноцида18

ИСТОРИЯ

Гоар Ханумян

К вопросу о формировании миссии «один армянин-один золотой» в годы Геноцида армян 35

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ

Мигран Минасян

Неопубликованные документы о резне армян Антиоха (Антакия) в 1909 году 48

Нарек Погосян

Исследования геноцида Рафаэлем Лемкином и их интерпретации со стороны отрицателей 68

СООБЩЕНИЯ

Кристине Наджарян

Деятельность Колледжа Санасарян (1881- 1919) 94

Татевик Галтахчян

Празднования «Всенационального великого юбилея» в Западной Армении и армянонаселенных районах Османской империи104

Об авторах 113

ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ԶԻՀԱԴԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԶԻՀԱԴԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շուշան Խաչատրյան

1914 թ. նոյեմբերի 14-ին Օսմանյան կայսրությունը պաշտոնական հայտարարությամբ մտավ Առաջին համաշխարհային պատերազմի թատերաբեմ: 1914 թ. նոյեմբերի 14-ին Օսմանյան կայսրության սուլնի հոգևոր առաջնորդը՝ շեյխ ուլ-խալամ Հայրի Էֆենդին¹, Կոստանդնուպոլսի Ֆաթիհ մզկիթի դիմաց պետական պաշտոնյաների ներկայությամբ և հավաքված ժողովրդի առջև ընթերցեց իր և մի շարք հայտնի իսլամական աստվածաբանների կազմած 5 ֆեթվաները², որով հաստատում էր օսմանյան սուլթան Մեհմեդ V-ի՝ սրբազան պատերազմի հայտարարագիրը, և կոչ էր արվում աշխարհի բոլոր մուսուլմաններին ջիհադի դուրս գալ ընդդեմ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց զինակիցների: Զիհադի գաղափարի անմիջական հեղինակը երիտթուրքական կառավարությունն էր՝ այդ հարցում ակտիվ աջակցություն ստանալով նաև Կայզերական Գերմանիայից³: Հռովածում ականատեսների վկայությունների հիման վրա անդրադարձ կկատարվի այն հարցին, որ իթթիհատական ջիհադը՝ որպես ստրատեգիական գենք, ծառայեց ոչ թե գերմանական շահերին, այն է՝ չուղղվեց Անտանտի դաշինքի երկրների դեմ, այլ ներքին կիրառություն ու հսկայական ներգործություն ունեցավ Օսմանյան կայսրությունում:

1914թ. նոյեմբերին Օսմանյան կայսրության ջիհադի հայտարարությունները և կոչերը⁴ լավագույնս իրագործվեցին հենց միայն Օսմանյան կայսրության ներսում

¹ **Ուգրուփու Մուստաֆա Հայրի Էֆենդի** (Հայրի բին Ավնի Էյյուրգաբի, 1867-1921), երիտթուրք գործիչ, 1914-1916 թթ. եղել է Օսմանյան կայսրության *շեյխ ուլ-խալամը*:

² **Ֆեթվա** (արաբ. թարգմ.՝ «որոշում») – իսլամական կրոնաիրավական որոշում՝ կայացված բարձրագույն հոգևոր հեղինակություն ունեցող անձի (մուֆթիի, դադիի, շեյխ ուլ-խալամի) կողմից: Յուրաքանչյուր կարևոր պետական կամ հասարակական կյանքին վերաբերող որոշում կայացնելուց առաջ ֆեթվա ստանալը միշտ պարտադիր պայման է եղել: 1914 թ. նոյեմբերի 14-ին թողարկված ֆեթվաները գրվել էին հակիրճ՝ թվով 5 հարց ու պատասխանի տեսքով, այն ջիհադի էր կոչում բոլոր մուսուլմաններին՝ ընդդեմ Անտանտի երկրների ու նրանց համակիրների՝ սեփական հավատը և իսլամական «խալիֆայությունը» պաշտպանելու պատրվակով:

³ Որոշ գերմանացի մտավորականների ջանքերով տպագրված սրբազան պատերազմի գրքույկ-պարսավագրերի մասին տե՛ս հոլանդացի իսլամագետ Քրիստիան Ս. Հուրգրոնյեի հետևյալ աշխատությունը՝ Hurgronje Chr. S., *The Holy War Made in Germany*, New York & London, The Knickerbocker Press, 1915, էջ 34-ից սկսած, իսկ առհասարակ ջիհադի կոչի մշակման մեջ Գերմանիայի մասնակցության վերաբերյալ տե՛ս Lüdke T., *Jihad Made in Germany*. Münster, 2005:

⁴ Բացի հանրահայտ 5 ֆեթվաներից, կրոնական պատերազմ հայտարարելու առթիվ հրապարակվեց նաև պաշտոնական գրքույկ, մի լայնածավալ արաբերեն պամֆլետ, ռուսախոս մուսուլմանների համար թողարկվեցին երկվեզու թոռցիկներ՝ ռուսերեն և արաբերեն և այլ նյութեր: Քիչ թե շատ ամբողջական տեղեկություն ջիհադի վերաբերյալ տպագրված գրակա-

և համախառնական արձագանք չգտան: Այս առնչությամբ Ավետիս Թեքեյանն իր աշխատասիրության մեջ գրում է. «Ճիհատի կոչը չկրցաւ խաբել իսլամական Աշխարհը: Որովհետեւ արաբ աշխարհի գիտէր՝ թէ Աշխարհամարտը կրօնական պատերազմ մը չէր: Միւս կողմէ, ո՛չ թէ Ռուսիա, Անգլիա եւ Ֆրանսա յարձակում գործած էին Թուրքիոյ վրայ, այլ Ժէռն-Թուրք վարիչները, իրենց ազատ կամքով մտած էին պատերազմի մէջ, քրիստոնէայ Գերմանիոյ կողքին, եւ Խալիֆէ սուլթանին բանակներն էին որ յարձակում գործած էին Դաշնակից Տէրութիւններուն վրայ, գերմանական զէնքերով: Վերջապէս, ճիհատը բոլորովին հակառակ արդիւնքի մը յանգեցաւ: Իսլամ ազգեր՝ ազատագրական բանակներ կազմելով Դաշնակից Պետութիւններուն կողքին, կոռուի սկսած էին Թուրքիոյ դէմ, ի խնդիր անկախութեան: Արաբական Աշխարհը, մանաւանդ Ճեմալ Փաշայի Պէյրութի, Դամասկոսի, Հալեպի, Երուսաղէմի եւ այլ կեդրոնական քաղաքներու մէջ հաստատած կախաղաններէն սարսափած, իրենց արեան գնով ազատագրուիլ կ'ուզէին սուլթանի լուծէն, որ դարերէ ի վեր այնքան ողբերգական անդրադարձում մը ունեցած էր իրենց հին քաղաքակրթութեան, երկիրներուն եւ ժողովուրդներուն վրայ...»⁵:

Նշելի է, որ 1914թ. նոյեմբեր ամսին «Նյու Յորք Թայմս» թերթը ևս քանիցս հաղորդում է, որ ջիհադի հայտարարությանը չմիացան բազմաթիվ իսլամ հոգևոր առաջնորդներ, սակայն միաժամանակ տեղեկացնում է ճիշտ հակառակի մասին վկայող դեպքեր: Ժամանակագրորեն դիտելով՝ թերթի մեջ սկզբում կասկածի ենթակա է համարում այն միտքը, որ ջիհադի հայտարարությանը կմիանային աշխարհի բոլոր մուսուլմանները, քանի որ արդեն մինչև նոյեմբերի 19-ը Հնդկաստանի մուսուլմանների առաջնորդ Աղա Խանն իր հավատարմությունն է հայտնում Մեծ Բրիտանիային⁶: Մյուս կողմից ընդամենը երկու օր անց նույն թերթը հաղորդում է. «Շեյխ ուլ-իսլամը կապ է հաստատել Ասիայի և Աֆրիկայի մահմեդական գրեթե բոլոր ղեկավարների հետ, որոնք հայտարարում են, որ նրանք կաջակցեն Թուրքիային՝ Անգլիայի դէմ պատերազմում: Այլ հաղորդագրություններ. «Հռոմից հաստատում են, որ Ալեքսանդրիայի սուղանցի բանվորների շրջանում լուրջ քարոզչություն է տարվում՝ իբրև Խալիֆի (սուլթանի) մանիֆեստի՝ սրբազան պատերազմի կոչի հետևանք»⁷: Թերթի հաջորդ անդրադարձի համաձայն՝

նույնպէս՝ գրքույկների, թոուցիկների և այլ քարոզչական նյութերի մասին կարելի է քաղել Հենրի Մորգենթաուի հուշերից. նա այդ մասին խոսում է իր հուշերի XIV գլխում՝ նվիրելով դրանց 6-7 էջ (տե՛ս *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը*, ՀՅԹԻ, Երևան, 2012, էջ 127-133): Այս կոչերի շուրջ մեր կատարած մանրամասն ուսումնասիրությունը լույս կտեսնի անգլերեն լեզվով՝ հաջորդիվ:

⁵ Թեքեյան Ա., *Դրուագներ ապրիլեան Մեծ Եղեռնէն: Պեհեսնիհայութեան գողգոթան (1914-1918)*, Պէյրութ, Լա Ֆողո-Բրէս, 1956, էջ 18, 19: Արաբական միջավայրում ջիհադի հայտարարությունը չընդունվելու վերաբերյալ տե՛ս Մարգարյան Ն., *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հաստատված հայ փառագիտների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924 թթ.)*, Երևան, ՀՅԹԻ, 2013, էջ 46, 49:

⁶ Տե՛ս «KAISER INFORMS SON OF MOSLEM HOLY WAR,» *The New York Times*, November 19, 1914, էջ 1:

⁷ «EGYPT'S ATTITUDE MENACING; Berlin Reports Manifestation in Favor of a Holy War,» *The New York Times*, November 21, 1914, p. 1.

Կովկասի ռուսաստանցի մուսուլմանների հոգևոր առաջնորդ շեյխ ուլ-խալամն ավելի խիստ խոսքեր է ուղղում օսմանյան շեյխ ուլ-խալամի մտահղացման դեմ. «Դուրը (իմա՝ Բարձր դուրը-Շ. Խ.) ոչ մի կանոնական իրավունք չունի՝ Սրբազան պատերազմ հայտարարելու: Նրա հրահանգները կապ չունեն տեղական ուլեմաների հետ, և մենք էլ նույնիսկ չգիտենք, թե ով է Կոստանդնուպոլսի շեյխ ուլ-խալամը, կամ ինչ ցուցումներ է նա տալիս թուրքական ուլեմային»⁸ և ապա մեջբերում է Ղուրանից մի հատված, համաձայն որի արգելվում է հակամարտել նրանց հետ, ովքեր հավատի (իմա՝ իսլամի-Շ. Խ.) դեմ չեն գործում, մինչդեռ իրենց՝ Ռուսաստանի մուսուլմաններին, Ռուսական կայսրությունը կատարյալ ազատություն է տվել՝ դավանելու իրենց կրոնը, հետևաբար՝ իրենք հանդես չեն գա Ռուսական կայսրության դեմ⁹: Նույնը հայտարարում են նաև Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսիական գաղութների մուսուլմանները՝ արտահայտելով իրենց հավատարմությունը Ֆրանսիային¹⁰:

Ջիհադի կոչերի նպատակը քաղաքակրթական լայն բախում ստեղծելն էր, ինչը չկարողացավ իրականացվել, ըստ նախատեսվածի, համաշխարհային մակարդակով, քանի որ իսլամի ներքին հակասություններն այս պարագայում նպաստեցին նման ելքից խուսափելուն: Թուրք սուլթանին որպես խալիֆ ընդունում էին հիմնականում թուրքերը, մյուս մուսուլմանների շրջանում այդ հարցը տարատեսակ արձագանքներ էր ստանում. նույնիսկ սուլթանի խալիֆ լինելը համարում էին ինքնակոչություն¹¹:

Փաստացի, ջիհադն իր ողջ ուժգնությամբ իրականացվեց միայն Օսմանյան կայսրության ներսում բնակվող քրիստոնյաների դեմ. «Ափսոս՝ որ արտաքին ճակատի վրայ ողբերգութեան վերածուած Ճիհատը, ներքին ճակատի վրայ մեծ ազդեցություն ունեցած էր Թուրքիոյ մուլեռանդ իսլամութեան վրայ: Մեր տաճիկ եւ քիւրտ հարեւանները, Ճիհատի յայտարարութենէն բոլորքած, իրենց մինչեւ այդ՝ «բարի կեամբութիւն»ները սկսած էին անուանել «խնդրը կեամբութիւն»ներ եւ լուր խաչակրութիւն մը մղել անոնց դէմ: Անոնք կը ծեծէին եւ կը խոշտանգէին իրենց ձեռք անցուցած «կեամբութիւն»ները, առանձնութեան մէջ: Մեր գոյութեան իսկ չէին ուզել հանդուրժել»,–նշում է Ավետիս Թեքեյանը¹²: Այն Օսմանյան կայսրության սահմաններից ներս քրիստոնյաների քաղաքակրթության, մշակույթի դեմ ուղղված ավերիչ զենք եղավ: Պոլսի պատրիարք Զավեն արք. Եղիայանի գնահատմամբ ևս այդ «պանծացուած Ճիհատի» «արդիւնքը եղաւ շատ որոշ մահա-

⁸ “CANNOT DECLARE “HOLY WAR”; Sheikh-ul-Islam of Caucasus Denies Right of Turkish Confrere,” *The New York Times*, November 26, 1914, p. 3.

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ Տե՛ս “TO IGNORE HOLY WAR ORDER; Moslems in North Africa Loyal to France, Says Bishop Anderson,” *The New York Times*, November 26, 1914, էջ 3:

¹¹ Տե՛ս Առաքելյան Հ., «Նուիրական պատերազմը կամ դազավատը», «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթ, Թիֆլիս, 9 նոյեմբերի, 1914, No. 254, էջ 1, էլեկտրոնային պատճենը տե՛ս [http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914\(254\).pdf](http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914(254).pdf) (դիտված 25.XI.2017թ.):

¹² Թեքեյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 19:

ցումը քրիստոնեայ ժողովուրդի մը»¹³, այսինքն՝ հայերի կոտորածը¹⁴: Իսկ շվեդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնը ջիհադի կոչի վերաբերյալ գրում է. «... Այնուհետև Սրբազան պատերազմ հայտարարվեց, և մենք բոլորս հասկացանք, որ ժողովրդի ճակատագիրը կանխորոշված է: Բարձրաստիճան անձինք և հոգևորականները գրգռիչ ճառեր էին արտասանում այն մասին, որ բոլոր քրիստոնյաները պետք է կոտորվեն: ...Թուրքերը հաճախ էին ասում, որ մինչև ռուսների ժամանումը նրանք կկոտորեն բոլոր քրիստոնյաներին. հետո ռուսները կարող են գալ»¹⁵: Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեալի Դեյվիսն արտահայտում է այդ մասին վկայող հետևյալ միտքը. «Կրոնական մոլագարությամբ համակված մահմեդականները, թվում էր՝ որոշել են բնաջնջել ոչ միայն քրիստոնյա ազգաբնակչությանը, այլև վերացնել հավատի հետքերը, այն ամենը, ինչ քաղաքակրթությամբ էր ստեղծվել»¹⁶:

«Նյու Յորք Թայմս» թերթը ջիհադի հայտարարության օրերին ու դրանից հետո՝ մի քանի շաբաթվա ընթացքում, լուրեր է հաղորդում՝ հետևյալ վերնագրերով ու բովանդակությամբ. **«Հաղորդագրություն. Քրիստոնյաները վտանգի մեջ են»**. «Ավագակություն, մարդասպանություն և վայրագություններ են կատարվում, հայերը գլխավոր զոհն են, բայց **բոլոր քրիստոնյաները** (ընդգծումը մերն է-Շ. Խ.)

¹³ Զաւէն արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս*. Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 163:

¹⁴ Այլ կարծիք ու գնահատական ունի «Միություն և առաջադիմություն կոմիտե»-ի որոշ ժողովների մասնակցած լրագրող, ազգությամբ քուրդ Մելան Զադե Ռիֆաթը. գրքի իսկության ու տվյալների հավաստիության շուրջ որոշակի տարակարծություններ կան, սակայն հարկ ենք համարում դրանք ևս ներկայացնել որպես օժանդակ նյութ. «Յայտարարում Ա. Պատերազմը սպասուած ազդեցութիւնը չէր գործած: Իրականին մէջ կրօնական օրէնքներու տրամադրութեանց վրայ չհիմնուելով յայտարարուած այս Սբ. Պատերազմը, իր ազդեցութիւնը չունենալէ զատ միլիոնաւոր իսլամ հպատակ ունեցող մեծ տէրութիւնները Օսմանեան պետութեան դէմ լարած էր» (Բիֆաթ Մէվլան Զաւէ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրները*, Ե., 1990, էջ 70), կամ «Յայտարարում Սբ. Պատերազմը կրօնական բնոյթ չունենալուն, չէր կրցած իր ազդեցութիւնը ունենալ ո՛չ միայն իսլամական շրջանակներու, այլ եւ Թուրքիոյ մէջ անգամ լաւ ընդունելութեան չէր արժանացած: Սուլթան Մուհամմէտ Րէշատ Ե.-ին յայտարարել տուած Սուրբ պատերազմը կրօնական օրէնքներու բոլորովին հակառակ էր. Խալիֆան քանի մը քրիստոնեայ պետութիւններու դէմ Սբ. Պատերազմ յայտարարելով. ուրիշ քանի մը քրիստոնեայ պետութիւններու հետ զինակցած, իսլամական աշխարհը այս զինակիցներուն հաշույն եւ շահուն ոտքի հանել ուզած էր: Սբ. Պատերազմը կը յայտարարուի այն ժամանակ, երբ իսլամութեան վտանգ մը կը սպառնայ կամ կրօնքի դէմ հալածանք մը կը յայտարարուի: Անոր պաշտպանութեան համար ամբողջ իսլամութեան ոտքի կանգնելէն ուրիշ ճար չի մնար. մինչդեռ յայտարարուած այս Սբ. Պատերազմը տոյն հիմքերուն եւ ո՛չ մէկուն կը պատշաճի, միայն Գերմանիոյ հաշույն Իսլամական աշխարհը շարժման մէջ դնելու կրնար ծառայել» (*նոյն տեղում*, էջ 71): Ռիֆաթի գրքում նաև ներկայացված է Ռոստովի թերթերից մեկում՝ «Օթթոյողա»-ում, տպված «Ապրիլի 6-ից 16-ը, տասը օր» վերնագրով հոդվածը, որտեղ հայերը ջիհադը մեկնաբանում են հետևյալ կերպ՝ «Ասոք (իմա՝ թուրք բռնակալները-Շ.Խ.) դուրսը Ա. Պատերազմ յայտարարելով՝ ներսը կիններու, փոքրիկներու, ծերերու, երիտասարդների, հիւանդների եւ անկարողների ընդի. Զարդ կազմակերպեցին» (*նոյն տեղում*, էջ 93):

¹⁵ Յուհանսոն Ա., *Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պայքարնությունից*, ՀՅԹԻ, Երևան, 2008, էջ 48:

¹⁶ Լեալի Ա. Դեյվիս, *Սպանդի նահանգը*, Ե., 2001, էջ 166:

և օտարերկրացիները մեծ վտանգի մեջ են»¹⁷։ Հղում կատարելով Պետրոգրադի մի հաղորդագրության՝ 1914 թ. նոյեմբերի 29-ին տպագրվում է **«Էրզրումի ֆանատիկոսները կոտորում են քրիստոնյաների»** սրբազան պատերազմի հայտարարությանը հետևեց հայերի շինությունների ավերումը» վերնագրով մի լուր. «Այս թուրքական քաղաքից Օդեսա հասած հաղորդագրությունների համաձայն՝ մահմեդականներին սրբազան պատերազմի հրավիրող կոչից հետո բոլոր հայկական ակումբները, եկեղեցիները և դպրոցները ավերի են ենթարկվել ամբոխի ձեռքով։ Չորս հայ, որոնց թվում՝ մեկ կին, սպանվել են փողոցներում»¹⁸։ Նույն թերթը մեկ օր անց՝ նոյեմբերի 30-ին, **«Մուսուլման հոգևորականները հարկադրում են սպանել անհավատներին»** խորագրով հղում կատարելով Աթենքից ստացված մի հաղորդագրության՝ հայտնում է, որ Բեյրութում անհավատներին սպանելու հրահանգներ տրվում էին մզկիթներում՝ «անխտիր կոտորել անհավատներին՝ թշնամական որևէ շարժի նշույլ իսկ տեսնելու դեպքում»¹⁹։

Իթիվաայլ պատճառների ջիհադի իրագործումը և դերակատարումը կայսրության քրիստոնյաների կոտորածների մեջ, բացատրվում է թուրքական իսլամի առանձնահատկությամբ. թուրքական իսլամն անջատ չէ գինվորականությունից ու պետական համակարգից, և վերջիններս էլ իրենց հերթին՝ կրոնից. «Թուրքին իսլամությունը բոլորովին տարբեր է ուրիշ մահմեդական ցեղերէ. կրօնքը միացուցած գինուորականութեան ու պետութեան հետ՝ միշտ եղած են վայրագ, ահասարսուռ ու բարբարոս...»²⁰։

Մյուս կողմից, երիտթուրքերի և Կայզերական Գերմանիայի հաշվարկած լայն համաշխարհային արձագանքի բացակայությունը ջիհադ սկսելու հարցում սխալ է որակել որպես ամբողջական ձախողում։ Ջիհադի հրապարակված կոչերի շրջանառությունից օրինաչափորեն կարելի է հետևություն անել, որ երիտթուրքական ջիհադի ծրագիրը մանրամասն մշակված, տպագրված, տարբեր լեզուներով թարգմանված ու բաժանված էր մուսուլմանների շրջանում. այն կշռադատված ու ծրագրված էր, և հետևաբար՝ երիտթուրքերի ծրագրերին համահունչ էր և անիմաստ չէր կարող լինել։ Սուլթանը, որի անունն առկա է այդ կոչերի մի մասի մեջ, երիտթուրքերին միանգամայն ենթարկվող անձ էր, իսկ շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդին հայտնի երիտթուրք գործիչներից էր²¹։ Իսկ երիտթուրքերի

¹⁷ “REPORT CHRISTIANS IN PERIL IN TURKEY: Views of Refugees Now in Petrograd—All men Forced into the Army,” *The New York Times*, November 12, 1914, p. 3.

¹⁸ “ERZERUM FANATICS SLAY CHRISTIANS: Holy War Proclamation Followed by Destruction of Armenians’ Buildings,” *The New York Times*, November 29, 1914, p. 1.

¹⁹ “MOSLEM PRIESTS URGE KILLING OF INFIDELS: Massacre at Beirut on the First Appearance of Hostile Warships Is Threatened,” *The New York Times*, November 30, 1914, p. 1.

²⁰ Ճիզմեճեան Մ. Գ., *Խարբերդ և իր զաւակները*, Ֆրէզնոյ, 1955, էջ 558։

²¹ Ջիհադի ֆեթվաները թողարկող այս շեյխ ուլ-իսլամը 1915 թ. սեպտեմբերին հրաժարական է ներկայացնում, որը հետագայում մեկնաբանվում է՝ իբր նա դեմ էր օսմանյան քրիստոնյաների կոտորածներին։ Սակայն որոշ մասնագետներ գտնում են, որ Հայրի էֆենդին բոլորովին այլ պատճառով հեռացավ, նա ուղղակի դեմ էր ապագայում՝ 1916 թ., սպասվող իրավաբանական ռեֆորմին և հետագայում մնաց երիտթուրքերի համախոհը. տե՛ս Գայիտա Դձ., *Шейх Файез эль-Гусейн о геноциде армян: “Ислам непричастен к их деяниям!”*, ФАМ, Москва, 2007, с. 53.

գաղափարախոսությանը համահունչ էր քրիստոնեական քաղաքակրթությանը վնասելը²², ինչը հետևողականորեն իրականացվեց հիմնականում Օսմանյան կայսրության տարածքում: Նման մտքեր բազմիցս են արտահայտվել այլազգի ականատեսների կողմից, մասնավորապես Ցեղասպանությունը վերապրած Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանի հաղորդմամբ Բեռլին-Բադդադ երկաթուղու շինարարությամբ զբաղված ավստրիացի ճարտարապետ Լիցնայերը հետևյալ դիտարկումն է կատարում ջիհադի կոչի շուրջ. «...Եւրոպայի մեծ պետութեանց դէմ իրենց հռչակած կրօնական պատերազմը (ճիհատ) կը գործադրեն անպաշտպան մարդոց, կիներու եւ անմեղ մանուկներու վրայ...»²³:

Ջիհադի վերաբերյալ խոսելիս անհրաժեշտ է ընդգծել երկու հանգամանք, որոնք վերաբերում են ջիհադի շնորհիվ միսիոներություն իրականացնելու հեռանկարին: Օսմանյան մուսուլմանների միջավայրում (հավանաբար կանխամտածված) լուրեր էին շրջանառվել, խոստացվել էր, որ հաղթանակի դեպքում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերը հրաժարվելու էին քրիստոնեությունից և պետականորեն ընդունելու էին իսլամ. Վիլհելմ II-ն արդեն իսլամի պաշտպան էր հայտարարվել տարիներ առաջ: Իբրև այս մասին փաստող օրինակ՝ բերենք ականատեսի հետևյալ վկայությունը. «Բոլոր երիտասարդ թուրքերը ոտքի վրայ էին, գիշեր-ցերեկ կ'աշխատէին քրտական ցեղապետերը, շէյխերը քաղաք (Մուշ-Շ. Խ.) հրաւիրելու և համոզելու որ մեր խալիֆան *ճիհադ* (սուրբ պատերազմ) հռչակած է բոլոր *կեաւոր*ներուն դէմ, բայց քանի որ Գերմանիոյ թագաւորը խոստացած է մեր Սուլթանին, որ յաղթութենէն ետք, իր ամբողջ ազգով և դաշնակիցներով պիտի ընդունի *հազ րիհը* (ճշմարիտ կրօնքը), այդ պատճառով ալ՝ մեր դաշնակիցներէն զատ միւս բոլոր *կեաւոր* ազգերը պիտի ջնջենք աշխարհի երեսէն և կամ մեր *Գուրանը* ընդունիլ պիտի տանք անոնց»²⁴: Այս առնչությամբ խոսում է նաև Ավետիս Թեքեյանը. «Ճիհատի կոչին վրայ մեծ յոյսեր դրած էին Ժէռն-Թուրք վարիչները, նոյնիսկ Հաջի Վիլհելմ կ'անուանէին անոնք Գերմանիոյ իրենց զինակից երիտասարդ կայսրը, կատարեալ դարձնելու համար կատակերգութիւնը...»²⁵:

Եվ երկրորդ՝ մուսուլման, տարրական գրագիտությունից զուրկ թուրք և քուրդ ժողովրդի մեջ հավանաբար կանխամտածված ներարկվել էր այն մտայնությունը, որ պատերազմից հետո բոլորը մուսուլման են դառնալու²⁶ և դրան նպաստելը, բռնությամբ միսիոներություն անելով դրան մասնակցելը նրանց համար հետմահու *ջեննեթի*՝ դրախտի, երանության երաշխիք էր: Այս մասին խոսվում է ջիհադի պամֆլետում, ֆերվայում, թերթոններում և ջիհադի բոլոր մյուս վավերագրերում:

²² Այս մասին խոսել ենք մեր կողմից կատարված հետևյալ ուսումնասիրության մեջ. Խաչատրյան Շ. Երիտթուրքերի գաղափարախոսական ուղենիշները: Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ, *Ցեղասպանագիտական հանդես* 4(1), ՀՅԹԻ, Երևան, 2016, էջ 121-139:

²³ Պալաքեան Գրիգորիս ծ. Վարդ., *Հայ Գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն*, Բ հատոր, Պէյրոյթ, 1977, էջ 45:

²⁴ Սարգիս և Միսակ Բղեճաններ, *Հարազատ պայմանութիւն Տարոնոյ*, Գահիրէ, 1962, էջ 305:

²⁵ Թէքէեան Ա., *նշվ. աշխ.*, էջ 18, 19:

²⁶ Տե՛ս օրինակ՝ Ճէքըպարն Մ., *Օրագրութիւն*, 1907-1919, թարգմ.՝ Ներսէս եպս. Բախտիկեան, Միհրան Միմնեան, Անթիլիաս, 1979, էջ 170:

Ջիհադի հայտարարության հասցեատերերը մուսուլման զանգվածներն էին, թիրախը՝ քրիստոնյաները: Ջիհադի հայտարարության ճարտարապետները երիտթուրք ղեկավարներն էին, ովքեր կոչերի մեջ օգտագործեցին կրոնական եզրաբանություն, մեջբերումներ կատարեցին Ղուրանից, որպեսզի ջիհադի կոչը զանգվածներին արտոնվի և իսլամական օրենքին համահունչ իրականացվի, օրինականության քողի տակ անցկացվի:

Հետևենք ջիհադի կոչերի ունեցած ազդեցությանը: Առաջին հարվածներից մեկն ուղղվեց Օսմանյան կայսրության զինվորագրված քրիստոնյա տղամարդկանց դեմ, 1914 թվականին՝ անմիջապես ջիհադի հայտարարությունից հետո, և եղերական հետագա հիմնական կոտորածները ևս ընդհանուր տրամաբանությամբ հանգում են ջիհադին ու կապված են ջիհադի հայտարարության հետ՝ բացի մտավորականների ձերբակալումից, աքսորից և ապա՝ սպանությունից, քանի որ դրա անմիջական իրականացնողները երիտթուրք պաշտոնեության ներկայացուցիչներն էին և ոչ իսլամադավան թուրք և/կամ քուրդ զանգվածները:

Ինչպես նշվեց, ջիհադի բացասական ազդեցությունն ընդդեմ քրիստոնյաների սկսվեց զինվորագրվածների նկատմամբ. Ավետիս Թեքեյանն իր գրքում նշում է, որ ճակատից տուն դարձած, բարեկամներին հանդիպած զինվորների հաղորդմամբ. «Ճիհատի յայտարարութիւնը բոլորովին եղերական կացութիւն մը ստեղծած էր ճակատին վրայ եւ յառաջացուցած էր այնպիսի ահաւոր ողբերգութիւն մը, որմէ վերապրող գոհներն էին քաղաք հասնող փախստական զինուորները»²⁷: Նա նաև ներկայացնում է ռազմաճակատում գտնվող մի հայ զինվորի խոսքերը, որը հաղորդում էր հայերի դրության մասին մինչև ջիհադի հայտարարությունը և դրանից հետո. «Բանակի մէջ, ամբողջ ռազմաճակատի երկայնքին, կրակի առաջին գիծերուն վրայ կը գտնուէինք, մենք, հայ զինուորներս: Ամենէն շատ մենք կը վիրաւորուէինք յառաջացած խրամատներու մէջ: Տաճիկ զինուորական պետերը միշտ առաջ կը քշէին մեզ: Բայց բացէ ի բաց թշնամական վերաբերմունք մը ցոյց չէին տար մեզի: Ճիհատի յայտարարութենէն ետք անոնց այս խտրական ոգին ատելութեան ոգիի փոխուեցաւ մեզի հանդէպ: Անոնք զինաթափ ըրին մեզ եւ վերածեցին անզէն աշխատատրական գունդերու»²⁸:

Գերմանացի լյութերական աստվածաբան, միսիոներ Յոհաննես Լեփսիուսը հաղորդում է ջիհադի հայտարարության կարևորության մասին վկայող մի քանի փաստ. «Ճիհատի յայտարարութենէն յետոյ մոլլաները, շէյխերը և հրոսակները, իրենց գլուխը ունենալով նշանաւոր աւագակներ, սկսան շարժիլ: Մահմետականները զինուած էին, և մզկիթներու մէջ քրիստոնեաներու դէմ ատելութիւն կը քարոզուէր: Արդէն Դեկտեմբեր և Յունուար ամիսներուն, շատ մը չարագործութիւններ կատարուած էին»²⁹, «Մուրք պատերազմին» յայտարարութիւնը, ընդհանուր գրգռութիւն մը յառաջ բերաւ թուրք տարրին մէջ, ընդդէմ քրիստոնեայ տարրերուն.

²⁷ Թեքեյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 20:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Հայկական ջարդերը. Տոքթ. Յոհաննես Լեփսիուսի փեղեկագիրը, Մատենաշար «Ազդակ», թիւ 98, Պեյրութ, 1965, էջ 140, 141:

քրիստոնեայ ազգերը, շուտով պատճառներ ունեցան վախճալու թե, մի գուցե թուրք ազգայնամոլութիւնը օգտուիլ ուզէ իսլամ մոլեռանդութենէն, իսլամ ժողովրդեան աչքին պատերազմը ժողովրդական դարձնելու համար»³⁰:

Եվ իրապէս, Կոստանդնուպոլսում ջիհադի ֆէթվաներն ընթերցելուց հետո հենց քաղաքի ներսում տեղի ունեցան վայրագություններ, որից առաջին տուժողը հայկական Թոքատլյան խանութն էր: Դեպքը ներկայացնող մի ականատես հայ՝ Սիմոն Խոբեհը, պատմում է, թե ինչպիսի տրամադրություն էր տիրում այդ օրը. «Ֆաթիհի պատմ. Մզկիթին մէջ խոնուած ամբոխը Պօլսոյ առման 461րդ տարեդարձը տօնելով հանդերձ՝ պարզեց Ճիհադի դրօշը: Ճիհա՛տ, ի՛նչ կարմիր բառ. իսլամութեան կոչն էր ան որ նպատակ ունէր գրգռելու աշխարհիս բոլոր Միւսլիմանները: Մութը կոխեր էր. սոսկալի տեղատարափ մը կ'իջնէր: Թափօրը գերման դեսպանատունէն մեկնելով, Թօգաթեանի ապակիները ջախջախելէ վերջ՝ Եէնի Չարշըի կողմէն գոռում գոչումով կ'իջնէր աւատը. դեսպանատունը»³¹: Նույնի մասին հաղորդագրություն ունի «Մշակ» թերթը՝ որոշ հավելյալ մանրամասներով. «Բուխարէստից հաղորդում են «Речь»-ին Կ. Պօլսում քրիստոնեաների դէմ տեղի ունեցած վերջին ցոյցի մանրամասնութիւնների մասին: ...Այդ օրվայ գիշերը Կ. Պօլսում տեղի են ունեցել լուրջ անկարգութիւններ, որոնց ղեկավարներն են եղել թիւրք պաշտօնեաներ: Ամբոխը ուղևորվել է քրիստոնէական թաղը: Ռուսահպատակ հայ Թոքաթեանի հիւրանոցը բոլորովին քարոքանդ արված: Քարոքանդ են արված մի շարք կաֆէներ և ռեստորաններ, որոնք պատկանում էին ֆրանսիացիներին, յոյներին և հայերին:Քրիստոնյաների տրամադրութիւնը խիստ տխուր է»³²:

Սյուս կողմից ջիհադի հայտարարությունը մեր կարծիքով աստվածաբանական հիմքեր ուներ և, ցավոք, պետք է նշվի, որ թուրքական իսլամը աստվածաբանական մասնակցություն, արտոնություն տվեց քրիստոնյաներին ու հատկապես հայերին կոտորելու ուղղությամբ, քանի որ թուրք ու քուրդ մուսուլմանների պատկերացմամբ արդեն 1915 թ. տարբեր վայրերում ինքնապաշտպանության դիմած *ղիհնմի* հայերը հայտարարվել էին իսլամական օրենքից դուրս, այսինքն՝ դա-

³⁰ Նույն տեղում, էջ 270:

³¹ Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը*, 1916-1920, Ժ.-ԺԴ. Տարի, Բ. Հրատարակութիւն, Հալէպ, 2009, էջ 133:

³² Տե՛ս «Կ. Պօլսում» (խմբագրական), «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթ, Թիֆլիս, 16 նոյեմբերի, 1914, No. 260, էջ 1, էլեկտրոնային պատճենը տե՛ս [http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914\(260\).pdf](http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914(260).pdf) (ղիտված 25.XI.2017թ.), հմմտ. Հ. Մորգենթաուի վկայության հետ. «...ամբոխը կտրուկ շրջվեց և ուղղվեց դեպի Կոստանդնուպոլսի ամենանշանավոր «Թոքաթլյան» ռեստորան: Այն փաստը, որ ռեստորանը պատկանում էր հայի, դարձնում էր այն օրինական ավար: Երկար կեռիկավոր փայտերով զինված վեց տղամարդիկ կոտորել էին բոլոր պատուհաններն ու հայելիները, մյուսները պոկել էին սեղանի մարմարյա մասերը և ջարդուփշուր արել: Մի քանի բռնություն ողջ ռեստորանն ավերվել էր: Հենց դա էր «սրբազան պատերազմը», ինչպես այն հասկացել էին Կոստանդնուպոլսում» (*Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը...*, էջ 133):

վաճան, թշնամի³³։ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանն այս մասին ունի հետևյալ պնդումը. «Ճիհատը լիովին գործադրվեցաւ այս երկրին մէջ, որովհետև հայերը իբրև՝ օրենքէ դուրս ձգված և իսլամութեան թշնամի ժողովուրդ մը նկատվեցան և անոնց կյանքը, պատիվը և ինչքը հելալ համարվեցան, սպանութիւնը, բռնաբարութիւնք և կոդուպտում կրոնական պարտականութիւն մը եղան նույնիսկ պաշտոնական անձանց համար»³⁴։

Այսպիսի բացատրություններ հանդիպում են ընդհուպ ցեղասպանության ավարտը բազմաթիվ վկայություններում։ Ռուսական թերթերից մեկում՝ «День» թերթի 1915 թ. սեպտեմբերի 6-ի համարում, ականատեսի հետևյալ վկայությունը կա՝ ջիհադի գործունի բացատրությամբ. «Այդ սովահար, ուժասպառ մարդիկ միավորվել էին սոսկ «գազավաթի»՝ քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի ընդհանուր գաղափարով, որն այստեղ՝ փոքրասիական այս խուլ վայրերում, դեռ ընդունակ է կրոնականորեն տրամադրված մահմեդականների գլուխները մշուշել և սրտերը բոցավառել»³⁵։

Եվ ջիհադի հետագա ազդեցությունն ու գնահատականը ժամանակի հայտնի մտավորականներից մեկը՝ Յոզեֆ Մարկվարտը, տվեց հետևյալ բնորոշմամբ. «Ջիհադը՝ ի պատիվ ալլահի սպանությունն ու կոդուպտը, մեղմ անվանված «սրբազան պատերազմը», որը Թուրքիան հռչակեց գերմանական կառավարության հրահրմամբ կամ, առնվազն, հավանությամբ, այդ սրբազան պատերազմը, որի հետ այստեղ այնքան մեծ հույսեր էին կապում, ունեցավ այն մեն մի հետևանքը, որ թուրքերին օգնեց իրականացնելու սպանությունների իրենց ծրագրերը՝ կազմակերպելու Արևելքի քրիստոնյաների, գլխավորապես հայերի գրեթե լիակատար բնաջնջումը»³⁶։

Այսպիսով, ականատեսների ու ժամանակակիցների վկայությունների համաձայն՝ երիտթուրքերի ջիհադի հայտարարության հասցեատերերը մուսուլման զանգվածներն էին, ջիհադի վերջնական թիրախն Օսմանյան կայսրության ներսում բնակվող քրիստոնյաները եղան, այն Օսմանյան կայսրության սահմաններից ներս քրիստոնյաների քաղաքակրթության, մշակույթի ու գոյության դեմ ուղղված ավերիչ զենք եղավ։

³³ St' u Reid J. J., "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918" in *Studies in Comparative Genocide*, edited by Levon Chorbajian and George Shirinian, New York, 1999, էջ 62-65։

³⁴ Հատված Պատրիարք հոր մի նամակից՝ ուղղված Ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Ծ. Վրդ. Վեհոտուն, Կ. Պոլիս, 28 դեկտեմբերի 1915, Մեջբերումն ըստ հետևյալ գրքի՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, էջ 407, 408։

³⁵ Մեջբերումն ըստ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., էջ 429, 430 գրքի՝ „День“, No. 245, 6 сентября, 1915г. Ն. Օգանվսկու թղթակցության թարգմանությունը. „День“ թերթի էլ. պատճենը տե՛ս <https://vivaldi.nlr.ru/pn000156800/view#page=3> (դիտված 25.XI.2017թ.)։

³⁶ Մեջբերումն ըստ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., էջ 699, գերմաներեն բնօրինակը տե՛ս Professor Dr. Marquart. *Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation*, Berlin, 1919, S. 46-47.

ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ԶԻՀԱԴԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
ԶԻՀԱԴԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շուշան Խաչատրյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի մեջ ներկայացվում են 1914 թ. նոյեմբերի 14-ին հայտարարված սրբազան պատերազմի ունեցած հետևանքներն ընդդեմ Օսմանյան կայսրության քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի: Հոդվածը կառուցված է ակնատեսների վկայությունների և ժամանակի մամուլում եղած արձագանքների հիման վրա: Ուսումնասիրության եզրահանգումը հետևյալն է. երիտթուրքերի ջիհադի հայտարարության հասցեատերերը մուսուլման զանգվածներն էին, ջիհադի վերջնական թիրախն Օսմանյան կայսրության ներսում բնակվող քրիստոնյաները եղան, այն Օսմանյան կայսրության սահմաններից ներս քրիստոնյաների քաղաքակրթության, մշակույթի ու գոյության դեմ ուղղված ավերիչ զենք եղավ:

Բանալի բառեր՝ իթթիհատական ջիհադ, սրբազան պատերազմի կոչ, Օսմանյան կայսրություն, քրիստոնյաներ, հայեր, Հայոց ցեղասպանություն:

THE ITTIHADIST JIHAD AND THE ARMENIAN GENOCIDE:
CONSEQUENCES OF JIHAD FOR THE CHRISTIANS

Shushan Khachatryan

SUMMARY

The article presents the consequences of the holy war (declared on November 14, 1914) against the Christians of the Ottoman Empire, particularly-the Armenians. The research is based on eyewitness accounts and some feedbacks from the time press. The conclusion of the study is as follows: the addressees of the *jihad* call were the Muslims, the ultimate targets of *jihad* were the Christians living inside the Ottoman Empire, and it turned to be a devastating weapon against the civilization, culture and existence of Christians within the Ottoman Empire.

Keywords: Ittihadist *jihad*, call for holy war, the Ottoman Empire, Christians, Armenians, Armenian Genocide.

ИТТИХАДСКИЙ ДЖИХАД И ГЕНОЦИД АРМЯН:
ПОСЛЕДСТВИЯ ДЖИХАДА ПРОТИВ ХРИСТИАН

Шушан Хачатрян

РЕЗЮМЕ

В статье представлены последствия священной войны (объявленной 14 ноября, 1914 г.) в Османской империи против христиан, особенно - против армян. В статье приводятся свидетельства очевидцев и современников, а так же некоторые отзывы из прессы. В данном исследовании делаются следующие заключения: призыв к *джихаду* был адресован мусульманам, конечной целью джихада стало истребление христиан Османской империи, а так же *джихад* разрушительным

оружием, направленным против цивилизации, культуры и существовании христиан Османской империи.

Ключевые слова: иттихадский *джихад*, призыв к священной войне, Османская империя, христиане, армяне, Геноцид армян.

ԱՊԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Սուրեն Մանուկյան

Ցեղասպանությունները կազմակերպվում են քաղաքական վերնախավի, հաճախ նաև երկրի ղեկավարության կողմից, սակայն իրագործվում են շարքային քաղաքացիների ձեռքով: Վերջիններս սպանության գործընթաց են ներգրավվում տարբեր դրդապատճառներով՝ մարդասպաններ դառնալով հիմնականում քարոզչության և գաղափարական մշակման, հրահրման արդյունքում¹: Մարդկային զանգվածները նման ձևափոխման ենթարկելու կարևորագույն միջոցներից է «գոհերի ապամարդկայնացման» նպատակաուղղված գործընթացը:

Հոգեւոցիալական զարգացման տեսության հայտնի ներկայացուցիչ Էրիկ Էրիկսոնը նշում է, որ որոշ ազգեր առասպելականացնում են իրենք իրենց ժամանակի և տարածության մեջ՝ տիեզերքի կենտրոնում դնելով սեփական ազգը, մյուս ազգերին հաղորդելով նվազ կարևոր մարդկային հատկանիշներ: Սպառնալիքների ժամանակ սեփական ընտրյալության գաղափարն ուժգնանում է այլ տեսակների կողմից սպառնող վախի և ատելության հետևանքով: Այս ամենը ստիպում է խորհել ու գործել պատերազմի կամ նվաճումների միջոցով ուրիշներին ոչնչացնելու կամ «իրենց տեղը ցույց տալու» զգացման հրամայականով²: Այս պարագայում «մարդիկ կորցնում են մեկ տեսակ լինելու զգացումը և սկսում են ընկալել այլոց իբրև մահացու վտանգ ներկայացնող տեսակներ, ում կարելի է հաշվի չառնել, ովքեր նույնիսկ մարդ էլ չեն... Կարելի է ոչնչացնել առանց զգացում ունենալու, որ սպանում ես քո տեսակի ներկայացուցիչներին»³: Օրինակ, հրեաները երկար ժամանակ Եվրոպայում ընկալվում էին իբրև օտարներ, նույնիսկ չարիք ու դիվային արարածներ: Եվ այս՝ դարերով եկած հակասեմականությունն այնքան խորն էր ներկայացված եվրոպական մշակույթների մեջ, որ նացիստներին անհրաժեշտ էր ընդամենը վեր հանել այդ հին կարծրատիպերը և արդյունավետ ներհյուսել սեփական քարոզչության մեջ, ինչից հետո հրեաները սովորական գերմանացու աչքերում սկսում էին ընկալվել որպես մարդկային ավելի ցածր տեսակ, ինչն իր հերթին օգնում էր ավելի հեշտությամբ կազմակերպել նրանց սպանության գործընթացը:

Եթե ամերիկացի սոցիոլոգ Էրիկսոնը խոսում է որոշ այլ ազգերին ավելի ցածր մարդկային հատկանիշներ շնորհելու մասին, ապա հայտնի ցեղասպանագետ Լեո Կուպերը նշում է, որ ցեղասպանությունն ինքսին «մարդկային կարգավիճակի

¹ Այս գործընթացի մասին մանրամասն տե՛ս Մանուկյան Ս., Նախապատրաստելով ցեղասպանությունը: Ցեղասպանական միջավայրի ձևավորումը Օսմանյան կայսրությունում, *Ցեղասպանագիտական հանդես*, 3 (1-2), 2015, էջ 42-56:

² Erikson K., On Pseudospeciation and Social Speciation, in *Genocide, War, and Human Survival* (eds. Strozier Ch. and Flynn M.), Lanham, Md., Rowman and Littlefield, p.51-52, ըստ Waller J., *Becoming Evil: How Ordinary People Commit Genocide and Mass Killing*, Oxford University Press, 2007, p. 206:

³ Hall E., A Conversation with Erik Erikson, *Psychology Today*, June 1983, p.30 ըստ Waller, նշվ. աշխ., p.206:

ժխտումն է», քանի որ դա «հանցագործություն է հավաքականության» կամ «խմբի դեմ որպես այդպիսին», երբ ի սկզբանե մարդկանց սպանում են՝ առանց հաշվի առնելու նրանց անձնական հատկանիշները: Տեղի է ունենում «մարդկային անհատականության և կարևորության ժխտում», քանի որ սպանությունն իրականացվում է ոչ թե կոյր ատելությամբ, այլ հեռահար նպատակներով, երբ ընթացքում զոհերը ստանում են զուտ գործիքային դեր [նրանց սպանում են ինչ-որ նպատակի հասնելու համար]⁴:

Այս ամենը չափազանց կարևոր է, քանի որ մարդկային հասարակությունների դարավոր էվոլյուցիայի ընթացքում ձևավորվել են այլ մարդու սպանելու բարոյական և հոգեբանական արգելքներ: Սա մարդկային հասարակության կեցության հիմնարար և համընդունելի նորմերից է: Հետևաբար՝ մարդուն սպանելու այս արգելքը հաղթահարելու համար ոճրագործություն նախաձեռնողները և ծրագրողները հաճախ զրկում են հավանական զոհին, թիրախ խմբին մարդկային հատկանիշներից կամ լիարժեք մարդ լինելու իրավունքից: Պատմության ընթացքում այս հնարքը բազմաթիվ անգամներ է կիրառվել: Այսպես, Հին Հունաստանում հույները համարում էին, որ այլազգիները, իրենց բնորոշմամբ «բարբարոսները» և, առավել ևս ստրուկները, լիարժեք մարդիկ չէին: Նույն վերաբերմունքն ունեին եվրոպացի գաղութարարներն Աֆրիկայի, Ասիայի կամ Ամերիկայի տեղաբնիկների նկատմամբ, երբ սեփական առաքելությունը համարում էին այդ ժողովուրդներին քաղաքակրթելը՝ վերջիններիս «լիարժեք մարդ» դարձնելը:

Այդ՝ մարդկային հատկանիշներից զրկելու գործընթացը տարածվում էր ամբողջ խմբի վրա, և նրա բոլոր անդամներին վերագրվում էին նույն [բացասական կամ ոչ լիարժեք մարդկային-Ս. Մ] հատկանիշները, նրանք բոլորը հավասարապես մեղավոր կամ վտանգավոր էին ընկալվում⁵:

Պրոֆ. Գրեգորի Սթենթոնը, իր հայտնի «Ցեղասպանության փուլերի» տեսությունում⁶ խոսելով «ապամարդկայնացման» գործընթացի մասին, նույնպես նշում է այս՝ սպանության նկատմամբ մարդկային բնական արգահատանքը հաղթահարելու համար օգտագործվող ցեղասպանությունների փուլերից մեկի մասին⁷:

Գերմանացի փիլիսոփա և հոգեվերլուծաբան Էրիխ Ֆրոմը նույնպես իր

⁴ Kuper L., Genocide: Its political use in the Twentieth Century, pp 86–87, Matthäus J., Shaw M., Bartov O., Bergen D. & Bloxham D., Donald Bloxham, The Final Solution: A Genocide, (Oxford: Oxford University Press, 2009), *Journal of Genocide Research*, Vol.13, No.1-2, 2011, p.126.

⁵ McCauley C., Psychological Foundations, Will Genocide Ever End?, Paragon House, St.Paul, MN, 2002, p.80.

⁶ Հայտնի ցեղասպանագետ, պրոֆեսոր Գրեգորի Սթենթոնը «Ցեղասպանության 8 փուլերը» վերնագրով մի զեկուցագիր ներկայացրեց 1996 թ. ԱՄՆ Պետքարտուղարությունում, որում նա փորձ էր կատարել ուրվագծել ցեղասպանությունների (տվյալ դեպքում հիմնականում Ռուանդայի ցեղասպանության) զարգացման փուլերը: Հետագայում նա զարգացրեց իր տեսությունը և դասական 8 փուլերին (դասակարգում, սիմվոլացում, ապամարդկայնացում, կազմակերպում, բեռնացում, նախապատրաստում, բնաջնջում և ժխտում) ավելացրեց ևս երկուսը (խտրականություն և հալածանք):

⁷ Stanton Gregory, “The Eight Stages of Genocide,” www.genocidewatch.org/aboutgenocide/8stagesofgenocide.html.

«Մարդու անատոմիական ապակառուցողականությունը» աշխատության մեջ ընդգծում էր, որ մարդիկ դժկամությամբ են մասնակցում իրենց խմբի անդամի սպանությանը: Սակայն կարելի է այդ պատճենը հաղթահարել՝ տարանջատելով մարդկանց որոշակի հանրություն ամբողջ խմբից: Բոլոր կառավարությունները, ըստ Է.Ֆրոմի, փորձում են սեփական ազգի մեջ տարածել այն մտայնությունը, որ թշնամին մարդկային էակ չէ, օրինակ՝ խուսափելով օգտագործել հակառակորդի իսկական անունը, հորինելով նոր, վիրավորական դիմելաձևեր: Գերմանացիներն Առաջին աշխարհամարտի ժամանակ ֆրանսիացիներից ստացել էին «բոշեր», իսկ բրիտանացիներից՝ «հոներ» մականունները: Ամերիկյան զինվորները Վիետնամական պատերազմում հակառակորդին անվանում էին «գուքեր», ինչն ապիական ծագմամբ մարդկանց քամահրական բնորոշումն է⁸: Առաջին աշխարհամարտի ժամանակ տարածվող քարոզչական բացիկներում հակառակորդները միմյանց ներկայացնում էին կենդանիների⁹, արյունախում-պարագիտների¹⁰ դերում՝ փորձելով հանրային գիտակցության մեջ զրկել նրանց մարդկային կերպարանքից: Օսմանյան կայսրությունում քրիստոնյաներին «գյավուր»¹¹ էին անվանում:

Հայտնի հոգեբան Հերբերտ Քլլմանը քննարկում է երեք գործոն, որոնք նվազեցնում են բռնությունը զսպող ուժերը՝ թույլտվություն (authorization), ռութինիզացիա (routinization) և ապամարդկայնացում: Առաջին երկու գործոնները ծառայում են կատարած գործողությունների համար անհատական պատասխանատվության նվազեցմանը, մինչդեռ ապամարդկայնացումը զոհին բոլորովին դուրս է դնում մարդկային էակների համար բնական պաշտպանությունից¹²:

Էրիխ Ֆրոմը բերում է մի օրինակ, երբ վիետնամական պատերազմում կատարած ոճրագործությունների, մասնավորապես բազմաթիվ կանանց, երեխաների և քաղաքացիական անձանց սպանության համար հարցաքննվող ԱՄՆ զինված ուժերի լեյտենանտ Քելին ինքնարդարացման համար պնդեց, որ ինքը վարժեցված էր ընկալել վիետնամացի զինվորականներին ոչ թե իբրև մարդկանց, այլ ուղղակի որպես «թշնամիների»: Նույն սկզբունքով գործում էր նաև Հիտլերը՝ անվանելով «ոչ արիացիներին» «Untermenschen» («մարդկային էակներից ցածր»), «ոչ լիարժեք մարդիկ»¹³:

Այսպես, փաստորեն ջնջվում են մարդասպանության նկատմամբ գոյություն ունեցող բարոյական արգելքներն ու պատնեշները: Երբ զոհերն այլևս չեն ընկալվում որպես մարդկային էակներ, ոճրագործ հասարակությունը դադարում է զոհին հա-

⁸ Fromm E., *The Anatomy of Human Destructiveness*, Holt, Rinehart and Winston, NY, 1973, p.121.

⁹ ՀՅԹԻ Գիտական ֆոնդեր, Բ-13, 4321, 4304 /1/, 4304 /2/, 2279, 564, 3803:

¹⁰ ՀՅԹԻ Գիտական ֆոնդեր, Բ-13, 3246, 3250, 3973-3976, 2019, 3837:

¹¹ Գյավուր (նաև գյաուր, գավուր) (թուրքերեն՝ gâvur), թուրքերի կողմից ոչ մուսուլմաններին անվանելու արհամարհական ձև, որը հաճախ կրում է կամ ստորացուցիչ իմաստ: Բառացիորեն նշանակում է անհավատ:

¹² Kelman H., *Violence Without Moral Restraint: Reflections on the Dehumanization of Victims and Victimiziers*, *Journal of Social Issues*, 1973, vol. 29, no. 4, pp. 25-61, Kelman H. and Hamilton V., *Crimes of Obedience*, New Haven: Yale University Press, 1989.

¹³ Fromm E., *The Anatomy of Human Destructiveness*, Holt, Rinehart and Winston, NY, 1973, p.122

մարել արժանի կարեկցանքի, համակրանքի, ներողամտության կամ այլ զգացումի, որ կարելի է տածել մարդկանց հանդեպ: Անձի հասարակական ինքնությունը սոցիալական սանդղակում նվազեցվում է մի քանի աստիճանով¹⁴: Ապամարդկայնացումը նաև թույլ է տալիս խզել զոհ խմբի հետ գոյություն ունեցող բոլոր կապերը:

Այս ամենն իր հերթին հեշտացնում է սպանությունը, քանի որ թիրախն ապամարդկայնացման հետևանքով կորցնում է մարդկային հատկանիշները, անհատականությունն ու սկսում ընկալվել իբրև կենդանի (կապիկ, առնետ, շուն), միջատ (տզրուկ, խավարասեր) կամ վնասարար և վտանգավոր ինչ-որ երևույթ (վիրուս, բացի, հիվանդություն ծնող մանրէ, վնասատու, քաղցկեղ):

Որոշ կրոններում և հասարակություններում ապամարդկայնացման դրսևորում կարելի է համարել նաև զոհերին «անհավատներ» անվանելը, քանի որ դա փաստացի նրանց լիարժեք մարդկային հատկանիշներից զրկել էր նշանակում: Այսպես, Ինդոնեզիայում 1965 թ.¹⁵ հակակոմունիստական արշավի ժամանակ կոմունիստները հայտարարվեցին «հակակրոնական և անաստված», ինչպես նաև «սատանաներ»¹⁶: Պակիստանցի սպաները Բանգլադեշում իրականացրած վայրագությունների ընթացքում բենգալացիներին անվանում էին «անհավատներ և հինդուներ»¹⁷:

Զոհ խմբի ներկայացուցիչների նմանեցումը կենդանիներին

Որոշ կենդանիների հետ թիրախ խմբի անդամներին նույնացնելը չափազանց տարածված երևույթ էր ցեղասպանությունների ընթացքում:

Օսմանյան կայսրությունում հայերը և մյուս քրիստոնյա հպատակները դարեր շարունակ արհամարհական և նվաստացուցիչ վերաբերմունքի էին արժանանում. նրանք երկրորդ կարգի մարդիկ էին համարվում¹⁸: Բրիտանացի ազգագրագետ Ուիլյամ Ռամսին, ով հետազոտություն իրականացնելու ընթացքում երկար տարիներ էր անցկացրել Թուրքիայում՝ նկարագրելով թուրքերի քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքը, նշում է. «(Թուրքական իշխանությունը... նշանակում էր ծայրահեղ արհամարհանք... Հայերը (և հույները) [նրա համար] շներ ու խոզեր էին»¹⁹:

¹⁴ Dictionary of genocide, ed. Totten S. and Bartrop P., Greenwood, 2007, p.103

¹⁵ 1965-66 թթ. Ինդոնեզիայում տեղի ունեցան կոմունիստների, նրանց հարողների և համակիրների, ձախակողմյան քաղաքական գործիչների, ինչպես նաև էթնիկ չինացիների զանգվածային սպանություններ: Զոհերի թիվը, ըստ տարբեր տվյալների, հասնում է 500 հազարից մեկ միլիոն մարդ (Century of Genocide: Critical Essays and Eyewitness Accounts, Samuel Totten, William S. Parsons, Israel W. Charny, Garland Publishing, NY, 1997, pp. 233-262).

¹⁶ Gerlach Ch., Extremely Violent Societies: Mass Violence in the Twentieth-Century World, New York, Cambridge University Press, 2010, p.44.

¹⁷ Gerlach Ch., նույն տեղում, էջ.130:

¹⁸ Դրա մասին մանրամասն տե՛ս Մանուկյան Ս., Հայոց ցեղասպանության ժամանակ զանգվածային մասնակցության «մշակութային նախադրյալները», *Ցեղասպանագիտական հանդես*, 4(1), 2016, էջ 151-176:

¹⁹ Ramsay W., Impressions of Turkey During Twelve Years' Wanderings, New York, 1897, pp. 206-07 in Dadrian V., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to

Քրիստոնյաների նկատմամբ հաճախ կիրառվող անարգանքը «շուն» անվանումն էր: Մորգենթաունն նշում է, որ տարածված եզրը, որ օգտագործում էր թուրքը քրիստոնյայի հասցեին, «շուն» էր, և նրա գնահատմամբ սա ոչ միայն այլ խմբին տրված որոշակի պիտակ էր: Թուրքը փաստորեն քրիստոնյա դրացի ժողովուրդներին դիտարկում էր որպես ավելի քիչ արժանիքներ ունեցող, քան իր ընտանի կենդանիները²⁰: Նույնը հաստատում էր ռուսական արքունի խորհրդական Ալ.Լևիցկիի հաղորդումը. «...մուսուլմանների ատելությունը նրանց [հայերի] հանդեպ չի դադարում և ամեն առիթով «գյավուր» հայհոյանքի հետ այդ ատելության դրսևորումը, մանավանդ գյուղերում, երևում է հնչող այն խոսքերից, թե «սպիտակ կամ սև շուն» իրենց համար մեկ է, այսինքն՝ հույները թե հայերը միևնույն քրիստոնյաներն են»²¹: Խարբերվում գործող դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենը, նկարագրելով Մեզրե գնացող թուրքերին և քրդերին, գրում էր. «Երբեք տեսած չեմ կատաղի և վայրի տեսք ունեցող նման մարդիկ: Նոյնիսկ իրենց պզտիկ տղաքը, ինքզինքնուն հասուն մարդու ձևեր կու տային ու մեր ետևէն կը պոռային՝ կեավոր, քրիստոնեայ շուն...»²²:

Այս արտահայտությունները ոչ միայն գրկում էին զոհին մարդկային հատկանիշներից, այլև վիրավորում և նսեմացնում էին նրան, քանի որ խոգերն ու շներն իսլամում ավանդաբար համարվում էին «հարամ», ոչ մաքուր կենդանիներ²³:

Ջոհերին կենդանիների հետ նույնացնելը միայն Հայոց ցեղասպանության պարագայում բնորոշ չէր: Այսպես, Ռուանդայի ցեղասպանության ժամանակ ոճրագործները՝ հույթուները, իրենց զոհերին՝ թուֆսիներին, անվանում էին «խավարասերներ»՝ դրանով իսկ թուֆսիների ոչնչացումը դրական գործողություն դարձնելով: Հույթուների քարոզչությունը հռչակում էր. «Խավարասերը կյանք է տալիս մեկ այլ խավարասերի... թուֆսին միշտ նույնն է մնում»²⁴: Ռուանդայի ցեղասպանության ականատես, դպրոցական ուսուցիչ Էդիթ Ուվանյիլիգիրան հետևյալ դրվագն է

the Caucasus, Berghahn Books, 2003, p.158.

²⁰ Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, Garden City, New York: Doubleday, Page & Company, 1919, p. 276.

²¹ АВПРИ, Посольство в Константинополе, д. 3184, п. 146, ըստ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (խմբ. Ներսիսյան Մ., Սահակյան Ռ.), Երևան, «Հայաստան», 1991, էջ. 119:

²² Ճեքըպարն Մ., Օրագրություն, 1907-1919, Խարբերդ, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1979, էջ 171:

²³ Օրինակ՝ մուսուլմանի աղոթքը չի ընդունվում, եթե աղոթողի կողքով շուն է անցնում: Նման վերաբերմունքի պատճառները բացատրվում են այն հանգամանքով, որ շները միջնադարում Մերձավոր Արևելքում տարբեր հիվանդությունների տարածման պատճառ էին, իսկ մեկ այլ բացատրությամբ իսլամը շան նկատմամբ անբարենպաստ դիրքորոշում որդեգրեց, քանի որ եկավ փոխարինելու զրադաշտականությանը, որտեղ այս կենդանու նկատմամբ շատ դրական վերաբերմունք կար: Պետք է սակայն նշել, որ իսլամում շների նկատմամբ դիրքորոշումը որոշ չափով երկակի է, և իսլամական տարբեր հոսանքներում, այդ թվում՝ Դուրանում և հադիսներում, հանդիպում են նաև շների դրական բնորոշիչները: (Մանրամասն տե՛ս, օրինակ՝ Berglund J., Princely Companion or Object of Offense? The Dog's Ambiguous Status in Islam, *Society & Animals*, No. 22, 2014, pp.545-559.

²⁴ Des Forges A., Leave None to Tell the Story Genocide in Rwanda, 1999, p.73

ներկայացնում. «...երբ նախագահի ինքնաթիռը վթարի ենթարկվեց²⁵, երեք օր անց ռադիոկայանները մեզ արգելեցին տնից դուրս գալ: Դրանից հետո չգիտեմք, թե ինչ ճակատագիր է սպասվում մեզ: Մեր տարածաշրջանի հոթոնները նույնպես անորոշության մեջ էին: Մեզ նման նրանք էլ սպասում էին: Հետո մենք լսեցինք բուրգումիստերներին, ոստիկանությանը, տեղական պաշտոնյաներին, ուժեր, շրջելով անտառներում, տարբեր հրամաններով խրախուսում էին գյուղացիներին. «Ի՞նչն է խանգարում ձեզ սպանել այս թուփներին, ինչպե՞ս նրանք վարվեցին Կիզալիում: Նրանք խավարասերներ են: Թուփների համար այլ բան չի մնում, դուք պետք է սպանեք նրանց ցանկացած ձևով, որով կարող եք, նրանք թունավոր օձեր են, և հիմա եկել է նրանցից ազատվելու ժամանակը: Ոչ ոք դրա համար չի պատժվելու»: Այդ նույն ժամանակ «ինտերահամվեն»²⁶ և զինվորները Գակո գործարմսից ներգրավվեցին առաջին սպանությունների մեջ այն տներում, որոնց վրա ներկով նշաններ էին արված: Հինգ օրից մեր հուրի ընկերները շրջվեցին նախկին թուփի բարեկամների դեմ»²⁷: Աչե հնդկացիների սպանությանը մասնակցող պարագայցիները²⁸ նրանց անվանում էին «գուայակի»՝ կատաղած առնետներ²⁹: Գերմանացի բազմաթիվ գաղութարարների և սպանների համար աֆրիկյան տեղաբնիկները «բարոյիներ» էին, նրանք մարդ չէին համարվում, նրանց սպանությունը չէր առաջացնում այն նույն զգացումները, որոնք կառաջանային մարդու սպանության դեպքում: Առավել ևս, այս վայրի կենդանիներին լապտամբ ցեղերին կարելի էր ոչնչացնել, երբ վերջիններն ի ցույց էին դնում իրենց գազանային էությունը: Ավելին, սա ընկալվում էր իբրև բարի գործ խաղաղասեր բնակչության լառավել հնազանդ ցեղերի համար³⁰:

Հոլոքոստի ժամանակ գերմանական համակենտրոնացման ճամբարներում հրեաներին անվանում էին «Haftlinge» (կալանավոր), իսկ երբ խոսքը վերաբերում էր սնունդ ընդունելուն, կիրառում էին «fressen», ինչն ավելի օգտագործելի էր անասունների պարագայում: Երբ խոսվում էր գազախցիկներից սպանված հրեաների մարմինները հանելու մասին, նույնիսկ գրագրության մեջ գործածվում էին ոչ թե դիակներ, այլ «Figuren» (թվեր կամ կտորներ), բեռ, ապրանք բառերը³¹:

²⁵ Խոսքը 1994թ. ապրիլի 6-ին Ռուանդայի նախագահ Յովենալ Հաբյարիմանայի ինքնաթիռի վթարի մասին է, որը և ազդանշան հանդիսացավ՝ ցեղասպանությունը սկսելու համար:

²⁶ Ինտերահամվեն ռազմականացված կազմակերպություն էր՝ կապված Ռուանդայում կառավարող Ժողովրդավարության և զարգացման ազգային հանրապետական շարժում կուսակցության հետ: Ակտիվորեն ներգրավված էր Ռուանդայի ցեղասպանության իրականացման մեջ:

²⁷ Hatzfeld Jean, Into the Quick of Life, the Rwandan Genocide: The Survivors Speak, trans. Gerry Feehily (London: Serpent's Tale, 2005), p 119 cf. Fletcher L., Turning interahamwe: individual and community choices in the Rwandan genocide, Journal of Genocide Research, Vol.9, No.1, 2007, p.46, fn.64

²⁸ Խոսքը 1960-70-ականներին Պարագվայի տարածքում բնակվող Աչե ցեղախմբի նպատակաուղղված ոչնչացման քաղաքականության մասին է:

²⁹ Sereny G., Into That Darkness, New York: Vintage Books, 1983, p.201, Wolf E., Killing the Aches in Genocide in Paraguay, (ed.Arens R.), Philadelphia: Temple University Press, 1976, p.53.

³⁰ Century of Genocide, Eyewitness Accounts and Critical Views, p.25.

³¹ Lanzmann C., Shoah: The Complete Text of the Acclaimed Holocaust Film, New York, Da Capo press, 1985, pp.92-93 ըստ Waller W, նշված աշխ., էջ.207:

Հետաքրքիր օրինակ է բերում Յեհուդա Բաուերն իր գրքում՝ նկարագրելով Գեստապոյի պաշտոնյաի խոսքերը Վարշավայի Հրեական խորհրդի ներկայացուցչին. «Դու մարդ չես, դու շուն չես, դու հրեա ես»³²:

Թունատրում³³

Ցեղասպանագիտության մեջ վերջին տարիներին ներմուծվել է նոր բառեզր՝ Toxification³⁴ «թունատրում», ցեղասպանության ժամանակ ապամարդկայնացման գործընթացն ավելի ճշգրիտ բացահայտելու համար: Այն համարվում է ապամարդկայնացման ծայրահեղ ձև, ցեղասպանության մասին նախազգուշացնող ավելի հստակ նշան: Եզրի հեղինակ Ռիաննոն Նիլսենը պնդում է, որ եթե ապամարդկայնացումն ազդանշում է, որ որոշակի խմբի անդամներին սպանելը թույլատրելի է, ապա թունատրումը թիրախ խմբի ներկայացուցիչների սպանությունը համարում է անհրաժեշտություն:

Այս տեսության հեղինակները նաև շեշտում են, որ ապամարդկայնացման դրսևորումներ կան նաև «ամենօրյա հասարակական ընկալման մեջ և կարող է առաջանալ նույնիսկ ինտենսիվ հակամարտության կամ ագրեսիայի բացակայության դեպքում»³⁵: Օրինակ՝ այն հանդիպում է կանանց, ներգաղթյալների, փախստականների և անտունների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքում³⁶: Նրանց կողմից բերված մեկ այլ օրինակում նշվում է տղամարդկանց կողմից կանանց ապամարդկայնացման մասին, երբ վերջիններն ընկալվում են որպես միջոցներ և գործիքներ³⁷ և ոչ թե տղամարդկանց համարժեք: Այս և ավելի շատ օրինակներ բերելով՝ հեղինակները պնդում են, որ ապամարդկայնացման այս օբյեկտները, այնուամենայնիվ, զանգվածաբար որպես խումբ չեն ոչնչացվում³⁸: Մելբուռնի համալսարանի պրոֆեսոր Նիկ Հապլամը նաև պնդում է, որ «կենդանիների կամ մեքենաների հետ նույնացվելը կամ մարդկային հատկանիշների կամ զգացմունքների ժխտումը պարտադիր չէ, որ բացասական հետևանքներ ունենան»³⁹, դա պարզապես թույլ է տալիս ղեկավարներին դժվար որոշումներ կայացնել, հարվածներ հասցնել և մահվան ուղարկել քաղաքացիական թիրախ խմբի ներկայացուցիչներին: Թեև վերոհիշյալ խմբերը բախվում են նախապաշարման, հալածանքների

³² Bauer Y, The Holocaust in Historical Perspective, Seattle: University of Washington Press, 1978, p.8

³³ Բաուի համարժեք հայերեն տարբերակը որոշելու համար շնորհակալություն Հայաստանում Ամերիկյան համալսարանի դասախոս Դավիթ Բաաջանյանին:

³⁴ Neilsen R., “Toxification” as a more precise early warning sign for genocide than dehumanization? An emerging research agenda, Genocide Studies and Prevention: An International Journal, Vol. 9, Iss. 1, 2015, pp. 83-95, Williams T., & Neilsen R., They will rot the society, rot the party, and rot the army: Toxification as an ideology and motivation for perpetrating violence in the Khmer Rouge genocide?, Terrorism and Political Violence, 2016, pp.1-22.

³⁵ ըստ Neilsen R., Toxification as a more precise early warning sign for genocide than dehumanization, p.86:

³⁶ նույն տեղում:

³⁷ նույն տեղում:

³⁸ նույն տեղում:

³⁹ նույն տեղում:

և հաճախ բռնության են ենթարկվում, սակայն ամեն դեպքում ցեղասպանական մտադրություններ նրանց նկատմամբ չեն դրսևորվում⁴⁰:

Այսպիսով, թեև ցեղասպանությունները հազվադեպ են տեղի ունենում ապամարդկայնացման բացակայության պայմաններում, այս վերոնշյալ օրինակները, որ բերում են հոդվածի հեղինակները, ընդգծում են, որ ցեղասպանությունը պարտադիր չէ, որ սկսվի ապամարդկայնացումից, և դրա օգտակարությունը որպես զանգվածային սպանությունների վաղ ահազանգման ցուցիչ, կարող է վիճարկվել⁴¹:

Հայտնի ցեղասպանագետներ Ջեյմս Ուոլլերը և Իսրայել Չառնին նույնպես նշում են, որ անհրաժեշտ է քննարկել մի ավելի զարհուրելի երևույթ, քան ապամարդկայնացումն է, որը ցույց կտա մարդկանց կյանքը խլելու մտադրությունը⁴²: «Թունատրում» (Toxification) եզրույթի հեղինակները հենց այս գործողության մեջ են տեսնում ապամարդկայնացման այդ ավելի ահագնացող փուլը: Թունատրումը թիրախային խմբի ընկալումն է ոչ միայն իբրև անմարդկային և օտար, այլև սպառնալիք, որի այս վտանգավոր գործունեությունը կարելի է կանխել միայն ոչնչացնելով⁴³: Այս տեսության կողմնակիցներն այս փուլին են նմանեցնում ոճրագործների կողմից օգտագործվող բժշկական հոետորաբանությունը կամ պետությունն ու հասարակությունը մաքրելու գործընթացի հետ կապված բառապաշարը⁴⁴:

Այսպես, 1933-1945թթ. նացիստական Գերմանիայի քարոզչության նախարար Ժոզեֆ Գեբբելսն ընդգծում էր ոչ միայն այն միտքը, որ հրեա ժողովուրդը վարակիչ խոց է, որին պետք է վերացնել, այլ նաև այն հրատապությունը, ինչի համար պետք է դա անել. «Մեր խնդիրն այստեղ վիրաբուժական է... կտրուկ միջամտություն, կամ մի օր Եվրոպան կվառվի հրեական հիվանդության պատճառով»⁴⁵:

Բժշկական եզրաբանության կիրառում

Ապամարդկայնացման կամ արդեն իսկ թունատրման տարածված եղանակ է բժշկական եզրույթների օգտագործումը՝ որպես թիրախավորված համայնքի համատարած ոչնչացման հիմնավորում: Ախտահանման և վիրաբուժական անդամահատման հայեցակարգը կիրառվում է որպես հասարակությանը հիվանդությունից բուժելու միջոց⁴⁶:

Այս բառապաշարը Հայոց ցեղասպանության պարագայում չափազանց տարածված էր նաև այն պատճառով, որ երիտթուրքական վերնախավում զգալի տեղ ունեին մասնագիտությամբ բժիշկները, ովքեր իրենց համար հանրաժանոթ եզրաբանությունը կիրառում էին նաև քաղաքական գործունեության մեջ: Երիտթուրքական կուսակցության առաջին բջիջը ստեղծվել էր Կ.Պոլսի Թագավորական բժշկա-

⁴⁰ նույն տեղում:

⁴¹ նույն տեղում:

⁴² նույն տեղում:

⁴³ նույն աշխ., էջ 87:

⁴⁴ նույն աշխ., էջ 88:

⁴⁵ նույն աշխ., էջ 89:

⁴⁶ Dadrian V., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide Studies, vol. 1, no. 2, 1986, p.177.

կան ակադեմիայում: Հենց բժշկական դպրոցներից էին երիտթուրքերը ներշնչվել կենսաբանական նյութապաշտական գաղափարախոսությամբ⁴⁷: Տոգորված սոցիալ-դարվինիզմի գաղափարներով՝ թուրքական էլիտան ընկալում էր իրեն իբրև «հասարակության բժիշկը», միակը, ով կարող էր լուսավորել մարդկային զանգվածներին⁴⁸: Բժշկական կրթություն ունեին երիտթուրք առաջնորդներ Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը, Մեհմեդ Ռեշիդը:

Հետաքրքիր է, որ սեփական գործողություններին բժշկագիտական հիմնավորում տալով՝ երիտթուրք ոճրագործները միաժամանակ գիտակցում էին մարդկային և մասնավորապես բժշկական բարոյականության տեսակետից գործած արարքների հանցավորությունը, սակայն նշում էին, որ նախընտրում են առաջին հերթին գործել իբրև քաղաքական գործիչ և ոչ թե բժիշկ: Այսպես, Հայոց ցեղասպանության ամենաեռանդուն կազմակերպիչներից մեկը՝ երիտթուրք բժիշկ, Դիարբեքիրի նահանգի վալի Մեհմեդ Ռեշիդը, հայտարարել էր Իթթիհաթի գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրու /Բլեդա/-ին. «Չնայած ես բժիշկ եմ, ես չեմ կարող անտեսել իմ ազգությունը: Ես այս աշխարհ եմ եկել իբրև թուրք: Իմ ազգային նույնականացումը գերադասելի է ամեն ինչից: Հայ դավաճանները տեղ են արել հայրենիքի ծոցում: Նրանք վտանգավոր մանրէներ են: Արդյո՞ք բժշկի պարտքը չէ ոչնչացնել այդ մանրէները: Կամ հայերը կվերացնեն թուրքերին և կտիրեն այդ հողատարածքին, կամ նրանք պետք է վերացվեն թուրքերի կողմից... Իմ թուրքականությունը գերազանցեց իմ բժշկի կոչմանը: Իհարկե, իմ խիղճը տանջում է ինձ, բայց ես անկարող էի տեսնել իմ երկրի անհետացումը: Ես փակեցի աչքերս և շարժվեցի առանց վարանելու: Ինչ վերաբերում է պատմության առջև պատասխանատվությանը, ես նշանակություն չեմ տալիս նրան, թե ինչ են գրում այլազգի պատմաբաններն իմ մասին»⁴⁹:

Այս ապամարդկայնացման դրսևորումներից էին հայ, հետագայում նաև հրեա զոհերին որպես բժշկական փորձարկման օբյեկտ օգտագործելու բազմաթիվ օրինակները: Վահագն Դադրյանը բերում է Մեհմեդ Հասանի օրինակը, ով մեղադրվեց աշխատանքային գումարտակի 2000 զինվորի սպանության մեջ, Ալի Սաիբի օրինակը, ով հազարավոր հայ երեխաների և կանանց էր սպանել՝ նրանց թույն ներարկելով Կարմիր խաչի հիվանդանոցներում և դպրոցներում, ինչպես նաև օգտագործելով բաղնիքները՝ զոհերին շոգիով սպանելու համար: Նա նաև բերում

⁴⁷ Hanioglu Ş., *The Young Turks in Opposition*, Oxford University Press, New York, 1995, p.71.

⁴⁸ Hanioglu Ş., *Preparation for a Revolution: The Young Turks, 1902-1908*, Oxford University Press, New York, p. 308.

⁴⁹ Հարցազրույց Իթթիհաթի գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրուի հետ (Բլեդա) Resimli Tarih, 5 July 1953, *Imparator/ugun CokOSO* (Istanbul: Remzi, 1979), pp. 57-9: Ռեշիդը օրագիր էր պահում, մանրամասնություններով արձանագրելով իր ամենօրյա աշխատանքը և իր մտորումները: Պատերազմի ժամանակ նա նույնիսկ հրատարակեց մի գրքույկ՝ «Ինչպես վարվել հայերի հետ» վերնագրով, որում նա արդարացնում էր հայերի ոչնչացումը Ժողովուրդի ձայն, 25 հունվար 1919 in Dadrian, Vahakn N., *The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide Studies*, 1:2 (1986) p.175:

է վկայություններ, թե ինչպես են Երզնկայի հիվանդանոցում փորձարկումներ իրականացնում՝ հայ տեղահանվածներին ներարկելով տիֆով հիվանդների արյունը⁵⁰:

Մաքրվելու, սանիտարական մաքրմանը ենթարկելու հղումներ

Ապամարդկայնացման ընթացքում բժշկական եզրույթներին զուգահեռ օգտագործվում էր բուժման, նաև սանիտարական մաքրման և հիգիենայի պահպանման անհրաժեշտության թեման: Այս գործողություններին վերաբերող բառապաշարը հաճախ կիրառվում էր քարոզչության, հոեոտորաբանության և նույնիսկ գրագրության մեջ՝ սպանությունների և կոտորածների բառացի հիշատակման փոխարեն:

Հիվանդության և այլասերման մետաֆորները նպաստում էին ապամարդկայնացման գործընթացին: Օրինակ՝ նացիստները հրեաներին անվանում էին «սիֆիլիս», «ժանտախտ», «տուբերկուլյոզ», «քաղցկեղ» և ներկայացնում էին իբրև վտանգավոր «բացիներ», որոնք պետք է ամեն գնով վերացվեն: Այս որակումները տագնապ էին առաջացնում հասարակության մեջ և մղում սպանության՝ «բուժման», սեփական կյանքը, համայնքի բարեկեցությունը և նույնիսկ հենց գոյությունը պահպանելու համար:

Նացիստական բժիշկների մասին իր հետազոտության մեջ հանրահայտ հոգեբան Ռոբերտ Ջեյ Լիֆթոնը նշում է, որ սպանություններն իրականացվում էին բուժման անվան տակ: Չափազանցություն չի լինի ասել, որ ՄՍ բժիշկների յուրաքանչյուր գործողություն հղվում էր ինչ-որ ձևով բուժման վրա: ՄՍ-ական բժշկի համար մասնակցությունը սպանության գործընթացին հավասարվեց բուժման⁵¹:

Առշվիցի համակենտրոնացման ճամբարում աշխատած բժիշկ Ֆրիթ Քելյերը հայտնում էր, որ ինչպես «նա կհեռացներ հիվանդ մարմնից գանգրենայի ենթարկված հատվածը», նա հեռացրեց հրեաներին որպես «մարդկության մարմնի գանգրենային հավելված»: Այսպիսով, Քելյերը հրեա ժողովրդի ոչնչացումը դիտում էր որպես «մարդկային կյանքի պահպանման թերապևտիկ հրամայական»⁵²: Նույն կերպ, երբ թուրքիները հայտարարվում էին ինյենզի՝ խավարասերներ, դա նույնպես թունատրման հատկանիշ էր կրում, քանի որ խավարասերները վա-

⁵⁰ Այս մասին տե՛ս Dadrian V., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide Studies, vol.1, no.2, 1986, pp.169-192, Հոլոքոստի ժամանակ բժշկական փորձարկումների մասին տե՛ս Annas George J., The Nazi Doctors and the Nuremberg Code: Human Rights in Human Experimentation, Oxford University Press, 1992, Baumslag N., Murderous Medicine: Nazi Doctors, Human Experimentation, and Typhus. Praeger Publishers, 2005, Lifton R., The Nazi Doctors: Medical Killing and the Psychology of Genocide, Basic Books, 2017.

⁵¹ Lifton R., Medicalized Killing in Auschwitz, Psychiatry, 45, 1982, p.292, in Eric Markusen, *Genocide and Total War: a preliminary comparison, Genocide and the Modern Age. Etiology and Case Studies of Mass Death* (ed.by Isidor Wallimann and Michael N. Dobkowski), p.111.

⁵² Tatz, "The Doctorhood of Genocide," 89 ըստ Neilsen, Rhiannon S. "‘Toxification’ as a more precise early warning sign for genocide than dehumanization? An emerging research agenda," *Genocide Studies and Prevention: An International Journal*, Vol. 9, Iss. 1 (2015) p. 89.

րակներ տարածելու հատկանիշներ ունեն⁵³, և այդ պատճառով անհրաժեշտ էր նրանցից օր առաջ ազատվել:

Նման երևույթ նկատելի է նաև Հայոց ցեղասպանության ժամանակ: Այսպես, Օսմանյան կայսրության Բողազլյանի շրջանի տեղական հրամանատար Մուսթաֆան հետագրում էր հինգերորդ բանակային կորպուսի հրամանատար Հալիլ Ռեքաիին այն մասին, որ «հայ պարագլխները/վնասատուները հավաքվել են գիշերն իրենց քաղաքներից և գյուղերից ու տեղափոխվել են նախատեսված վայրեր»⁵⁴:

Սպանությունների նկարագրության բառապաշարը բժշկականով փոխարինելը հնարավորություն էր ստեղծում հոգեբանորեն մեղմելու այս ոճրի ուժգնությունը. ոճրագործը որոշակիորեն վերացարկվում է իրականությունից, իսկ նրա հոգեկան ապրումները մեղմացվում են:

Այս առումով շատ հետաքրքիր է Երկրորդ աշխարհամարտի ռազմաճակատից գերմանացի զինվորների՝ տուն ուղարկված նամակների բովանդակությունը: Նրանցում երևում է գերմանացի զինվորի հավատն իր առաքելությանը, այն է՝ մաքրել և «կարգի գցել» երկիրը: Նախնական որոշակի նպատակից այն վերափոխվել էր ավելի «բարձր» նպատակի՝ «վարակի», «սոցիալապես թունավոր» և «պարագլխ» հրեաներից երկիրը «հիգիենիկ մաքրման» ենթարկելու մակարդակի:

Մարդկային «կեղտից» ամբողջ շրջաններ մաքրելու գաղափարը չափազանց տարածված է գերմանացի զինվորների նամակներում, հատկապես պարտիզանների դեմ պայքարի նկարագրությունում: Այս գործողությունների վերաբերյալ կիրառվում է նույնիսկ հատուկ եզրույթ՝ «Sauberungsaktion» (մաքրման գործողություն), «պարտիզաններով աղտոտված շրջաններ» և «տարածքների մաքրում» ձևակերպումները, որոնք հետագայում բնորոշում են որպես «հրեաներից մաքուր» («judenrein») ⁵⁵:

Այս գաղափարները ձևավորվել էին նացիստական պաշտոնական քարոզչության թեզերի հիման վրա, որոնք առատորեն տարածվում էին գերմանական ԶԼՄ-ների միջոցով: Օրինակ՝ 1943 թ. մայիսի 16-ին Lippische Staatszeitung-ը գրում էր. «Բժշկի իրագործելիք խնդիրը խուլերայի ամբողջական վերացումն է, նույնատիպ ժողովրդի իրագործելիք խնդիրը պետք է լինի հրեաների լիակատար վերացումը»⁵⁶: Բացի հասարակության մեջ տարածվող ամենօրյա քարոզչությունից, գերմանական բանակն իր զինվորներին հենց նման կարգախոսներ էր քարոզում:

⁵³ Neilsen, Rhiannon S. (2015) "‘Toxification’ as a more precise early warning sign for genocide than dehumanization? An emerging research agenda," *Genocide Studies and Prevention: An International Journal*, Vol. 9, Iss. 1, p.89.

⁵⁴ Ըստ Akçam, Taner, *The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton University Press, 2012, p.201.

⁵⁵ Richter Tim C., "Die Wehrmacht und der Partisanenkrieg in den besetzten Gebieten der Sowjetunion," pp 837–857 ըստ Kipp Michaela, *The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44)*, *Journal of Genocide Research*, Vol.9, Iss.4 (2007), p.609.

⁵⁶ Lippische Staatszeitung, May 16, 1943 ըստ Kipp Michaela, *The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44)*, *Journal of Genocide Research*, Vol.9, Iss.4 (2007), p.608–609.

Այսպես, 1939 թ. գերմանական բանակում գաղափարական դաստիարակության նպատակով տպագրված մի ուսումնական գրքույկ հռչակում էր. «...մենք պայքարում ենք համաշխարհային հրեության («Weltjudentum») դեմ, քանի որ պետք է պայքարենք թունավոր պարագիտի դեմ: Մենք հարվածում ենք ոչ միայն մեր ժողովրդի թշնամուն, այլև բոլոր ժողովուրդներին պատուհասած ժանտախտին»⁵⁷: Այս քարոզչությունը զինվորների կողմից մեծ ոգևորությամբ էր ընդունվում:

Կարծրատիպերը, որոնք նվազեցնում են զոհերի մարդկային էությունը, վերահսկողության հզոր տեխնոլոգիա են⁵⁸, և դրանց օգտակարությունը լավ գնահատված է տոտալիտար համակարգերում: Սպանությունն այս դեպքում սոցիալական հրամայական էր, հասարակության բուժում⁵⁹: Ընդ որում նման թիրախ կարող էին դառնալ նաև ազգակիցները, եթե նրանք չէին տեղավորվում իշխող վերնախավի իդեալական հայրենակցի մասին պատկերացումների մեջ: Այսպիսին էր նացիստական Գերմանիայում իրականացված հոգեկան և ֆիզիկական խնդիրներ ունեցող մոտ 93 հազար քաղաքացիներին ոչնչացնելու քաղաքականությունը՝ այն պատճառաբանությամբ, որ նրանց «կյանքն արժանի չէ շարունակման»⁶⁰:

Բառապաշարի այս փոփոխությունը նաև թույլ էր տալիս այս դաժան, արտառոց գործողություններին հաղորդել որոշակի կարգ՝ դրանով իսկ օգնելով զինվորներին կամ քաղաքացիական անձանց հաղթահարել պատերազմի և զինվորական տրամաբանությանը չհամապատասխանող գաղափարների⁶¹ և գործողությունների բախման հետևանքով առաջացած անհանգստությունը:

Կամբոջայում իշխող կուսակցության թշնամիներին անվանում էին «միկրոբներ» և «պարագիտներ»⁶²: Հայտարարվում էր. «Քանի որ ժողովրդական հեղափոխության կրակը և դեմոկրատական հեղափոխության կրակը անբավարար էին...

⁵⁷ Վերմախտի համար 1939թ. ստեղծված դասագիրք “Der Jude in der deutschen Geschichte,” Oberkommando der Wehrmacht, ed., Schulungshefte für den Unterricht über nationalsozialistische Weltanschauung und nationalpolitische Zielsetzung (Berlin: Zentralverlag der NSDAP, 1939) ըստ Kipp Michaela, The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44), *Journal of Genocide Research*, 9:42007, 608-609).

⁵⁸ Fiske, S. T.: 1993, 'Controlling Other People: The Impact of Power on Stereotyping', *American Psychologist* 48, 621-628 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, , *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), pp. 301.

⁵⁹ Um, K., 1998, The Broken Chain: Genocide in the reconstruction and De-struction of Cambodian Society', *Social Identities* 4, pp.131-154 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), pp. 301

⁶⁰ Burleigh Michael and Wippermann Wolfgang, The Racial State: Germany 1933-1945 (Cambridge, Cambridge University Press), p.153 in Valentino Benjamin A., Final Solutions: Mass Killing and Genocide in the 20th Century, Cornell University Press, 2005, p.20.

⁶¹ Kipp Michaela, The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44), *Journal of Genocide Research*, Vol.9, No.4, 2007, pp.608-609.

⁶² Short, P.: 2004, Pol Pot: The History of a Nightmare (John Murray, London), p.254 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), p.300.

մենք անհաջողությամբ փնտրում ենք միկրոբներ կուսակցության մեջ: Նրանք թաքնված են: Մեր սոցիալիստական հեղափոխությունը զարգացման հետ կթափանցի կուսակցության յուրաքանչյուր անկյուն, բանակ և ժողովրդի մեջ, մենք կբացահայտենք այդ վտանգավոր միկրոբներին»⁶³:

Նման մտայնությամբ համակված էր նաև երիտթուրքական վերնախավը: Պրինսիպների համալսարանի պրոֆեսոր Շյուքրու Հանիօղլուն նշում է, որ երիտթուրքական շարժման հիմնադիրները տարբերություն չէին դնում կենսաբանական և սոցիալական միավորների միջև: Նրանց հիմնադիր հայրերից մեկը՝ Ահմեդ Ռիզան, բացատրում էր դա հետևյալ կերպ. «...հասարակությունը բարդ օրգանիզմ է, որը հիմնված է միայն բնական օրենքների վրա: Այս մարմինը ենթարկվում է ցիկլային հիվանդությունների»: Նրա խոսքերով սոցիալական խնդիրները կարող են բժշկվել գիտական մեթոդների կիրառմամբ⁶⁴: Հետաքրքիր է, որ նման մտածողությունը համատարած էր նրա միջավայրում: Այսպես, նրա հակառակորդներից մեկը 1897-ին նույն Ահմեդ Ռիզային Իթթիհաթից արտաքսումը նկարագրեց որպես «Կոմիտեի մարմնից գանգրենայի ենթարկված օրգանի անդամահատում/ամպուտացիա»⁶⁵:

Երիտթուրքերի այս ծայրահեղ կենսաօրգանական նյութապաշտական հայացքները մեծապես ազդված էին այս ուղղության հայտնի ներկայացուցիչներ Ռենե Ուրմսի⁶⁶ և Յակով Նովիցքի⁶⁷ գործերից: Երիտթուրքերը ձգտում էին կառուցել սեփական հեղափոխական պրակտիկան՝ օգտագործելով կենսաօրգանիկ տեսությունների հիմնավորումները: «Հասարակությունը նման է մարդու մարմնի, քանի որ յուրաքանչյուրն ունի բազմազան և բազմաթիվ կենդանի բջիջներ: Ինչպես անհատին է անհրաժեշտ թերապիա՝ վերականգնվելու համար հիվանդությունից, այնպես էլ հասարակությունը պետք է բուժվի իրեն հատուկ հիվանդություններից: Որպես բժիշկներ հանդես են գալիս օրենսդիրները, վարչարարները և քաղաքական գործիչները: Եթե հասարակությունն առանց նման բժիշկների է, կամ նրանց ներկայության դեպքում նույնիսկ ճշող խումբը համարձակվում է խախտել գոյություն ունեցող կարգի հավասարակշռությունը և հաջողության շնորհիվ հասնում է ուժեղ իշխանության ...այդպիսի վտանգավոր հիվանդությունը անշուշտ վատ հետևանքների կրերի, և ազգը փրկելու միջոցը բռնության ենթարկված մարդկանց ապստամբությունն է ճնշողների դեմ: Ապստամբությունը միակ միջոցն է, որում թույլ և հիվանդ ազգը կարող է բուժվել ինքն իրեն»⁶⁸:

⁶³ Chandler, D.: 1999, *Brother Number One: A Political Biography of Pol Pot* (Westview, Boulder, CO), p.129 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, *Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations*, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), p.300.

⁶⁴ Ahmed Riza, Layiha, 17 ըստ Hanioglu Ş., *The Young Turks in Opposition*, p.208.

⁶⁵ Magmumi, Hakikat-i Hal, 4 ըստ Hanioglu Ş., *The Young Turks in Opposition*, p.208.

⁶⁶ *Organicisme et societe* (Paris, 1896) և *Philosophie des sciences sociales*, 3 vols. (Paris, 1903-1907).

⁶⁷ *La guerre et ses pretendus bienfaits, La critique du darwinisme social* (Paris, 1910)

⁶⁸ "Kiyam," *Osmanh*, no. 5, February 1, 1898, 5, ըստ Hanioglu Ş., *The Young Turks in Opposition*, p.208.

Այսպիսով, ցեղասպանության ճարտարապետները հնարավոր մարդասպաններին մղում են սպանությունների՝ հռչակելով, որ այդ ճանապարհով «մաքրում են ազգը, ոռոտում», «վերացնում են ազգի մարմնում գոյացած քաղցկեղը»՝ ապամարդկայնացնելով գոհերին և արժեզրկելով թիրախ խմբին: Հետաքրքիր է, որ այս ամենի մեջ կա երկակի մի ուղերձ: Մի կողմից՝ գոհ խումբն ընկալվում է որպես ուժեղ (վտանգ, սպառնալիք), մյուս կողմից՝ թույլ (նրանց կարելի է հեշտությամբ ոչնչացնել)⁶⁹:

Ապամարդկայնացման ձևերը

Ապամարդկայնացումն արտահայտվում էր ոչ միայն հոետորաբանության մեջ, այլ նաև ոճրագործների կողմից ցեղասպանության ընթացքում իրականացված գործողություններով, երբ գոհերին շարունակաբար փորձում են զրկել մարդկային արժանապատվությունից: Զոհերը երկարատև ճնշման և բռնության արդյունքում հետզհետե փոխակերպվում էին՝ կորցնելով մարդկային կերպարանքը: Այս ապամարդկայնացումը կարող է դրսևորվել շատ տարբեր ձևերով:

Հայոց ցեղասպանության ժամանակ ապամարդկայնացմանը նպաստում էր տեղահանությունը: Երկար օրեր և ամիսներ կիզիչ արևի տակ, մշտական հարձակումների ենթարկվելով, առանց բավարար սննդի և ջրի, քայլելով հազարավոր կիլոմետրեր, մարդիկ, նույնիսկ հասնելով սիրիական անապատներում իրենց համար հիմնված ճամբարները, արդեն իսկ կորցնում էին մարդկային կերպարանքը: Ճանապարհին նրանց հաճախ նույնիսկ չէին թողնում քաղաքներ կամ այլ բնակավայրեր մտնել՝ համարելով, որ իրենց հետ կրեքեն հիվանդություններ և համաճարակ, նաև քանի որ նրանց կմախքացած, անմարդկային տեսքը վանում էր քաղաքների բնակչությանը: Հաճախ ապամարդկայնացնելու նպատակով տեղահանվողներին, հատկապես կանանց մերկացնում և ստիպում էին ճանապարհին անցնել մերկ վիճակում: Բացի դրանից, իրենց և իրենց երեխաների համար ուտելիք հայթայթելու նպատակով նրանք մշտական պայքարի մեջ էին գտնվում մյուս տեղահանվածների հետ, ինչը մեծացնում էր նաև ներխուժային թշնամանքը: Տեղահանության ժամանակ հանդիպում էին նույնիսկ դիակերության և մարդակերության դեպքեր, ինչն իջեցնում էր գոհերին քաղաքակրթական սանդղակի մի քանի աստիճան ներքև⁷⁰:

Այդպիսի ապամարդկայնացումը նաև որոշակիորեն մեղմում էր մինչցեղասպանական ժամանակներում հայերի հաջողությունների նկատմամբ մոսուլմանների մեջ գոյություն ունեցող խանդը և բարդույթը, երբ նախկինում հաջողակ և բարեկեցիկ հայերն արդեն կորցնում էին մարդկային կերպարանքը:

⁶⁹ Encyclopedia of Genocide and Crimes against Humanity (ed. Shelton Dinah), Macmillan Reference USA, 2004, p.839

⁷⁰ Տե՛ս Գеноцид армян в Османской империи: Сб. документов и материалов: Сост. М. Г. Нерсисян, Р. Г. Саакян; Ер., Изд-во АН АрмССР, 1966, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount James Bryce and Arnold Toynbee, Uncensored Edition. Ara Sarafian (ed.) Princeton, N.J., Gomidas Institute, 2000

Ապամարդկայնացման տարրեր էին պարունակում նաև հայ զինվորներին զինաթափելուց հետո աշխատանքային գումարտակներ տեղափոխելը և այն վերաբերմունքը, ինչին նրանք արժանանում էին: Մորգենթաուն գրում է. «Ծառայելու փոխարեն իրենց երկրին իբրև հրետանավոր կամ հեծելազորային, այս նախկին զինվորները հանկարծ բացահայտեցին, որ վերածվել էին ճանապարհաշինարար բանվորների և բեռնակիր անասունների»⁷¹:

Հոլոքոստի ժամանակ նույն արդյունքն էր ապահովվում, երբ հրեաներին հավաքում, հաշվառում և տեղափոխում էին կենդանիների համար նախատեսված գերբեռնված գնացքներում, առանց հացի, ջրի կամ բնական կարիքները հոգալու հնարավորություն տալու, տեղավորում գերբնակեցված գետտոներում, որտեղ մի ընտանիքի հատկացվում էր մեկ սենյակ, անկախ ընտանիքի անդամների թվից, նրանց աշխատեցնում էին անմարդկային պայմաններում, նրանց նկատմամբ սարսափելի փորձարկումներ էին իրականացնում և սպանում «ինդուստրիալ եղանակով»՝ օգտագործելով գազային խցիկները և այրելով իսպառ ոչնչացնում դիակները: Դրան էր ուղղված նաև ճամբարներում, մասնավորապես Աուշվիցում գերիներին անուններից զրկելը, երբ նրանք անունների փոխարեն ստանում էին համարներ:

Համակենտրոնացման ճամբարն ինքն ապամարդկայնացման մի կարևորագույն միջոց էր: Այս համակարգված ապամարդկայնացման մասին Աուշվիցի ճամբարի հայտնի բանտարկյալ Պրիմո Լևին գրում է. «Ճամբարը մի մեծ մեքենա էր, որի նպատակն էր մեզ իջեցնել կենդանիների մակարդակի»⁷²: Նացիստական համակենտրոնացման ճամբարներում բանտարկյալների հանդեպ մշտապես կիրառվում էին սահմոկեցուցիչ գործողություններ, նրանց նվաստացնում էին այն աստիճան, մինչև որ կալանավորները զրկվում էին մարդկային տարրական արժանապատվության զգացումից, ինչն անհրաժեշտ էր դիմակայելու նացիստների դաժան վերաբերմունքին⁷³: Այսպիսի ապամարդկայնացման գազաթնակետն էր գոհի կողմից դիմադրության դադարեցումը, երբ նա արդեն թույլ էր տալիս անել իր հետ այն ամենը, ինչ կցանկանար դահիճը: Կարելի է ասել, որ այդ պահին անձի ինքնապատկերը բառացիորեն անմարդկային էր դառնում: Զոհը դադարում էր ինքն իրեն ընկալել իբրև մարդկային էակ⁷⁴: Հաճախ նշվում է, որ ապամարդկայնացման գործընթացն անցած գոհերը յուրահատուկ ուրբոտներ են դառնում՝ համակենտրոնացման ճամբարներում դրսևորելով անձնական բոլոր հատկանիշներից զուրկ վարքագիծ⁷⁵:

Այսպիսով, ապամարդկայնացումը կարևորագույն գործոն է՝ ցեղասպա-

⁷¹ Ambassador Morgenthau's story by Morgenthau, Henry, 1918, Garden City, N.Y., Doubleday, p.302

⁷² Levi, P. Survival in Auschwitz. New York: Collier Books, Macmillan Publishing Company, 1961, p.36

⁷³ Totten Samuel and Bartrop Paul R., Dictionary of genocide by, Greenwood, 2007, pp.103-104.

⁷⁴ Նույն տեղում, էջ 104:

⁷⁵ Shi'u Grey, C. and C. Garsten, Organized and Disorganized Utopias: An Essay on Presumption, in M. Parker (ed.), Utopia and Organization, Blackwell, Oxford, 2002, pp. 9-23, Pina e Cunha Miguel, Rego Arménio and. Clegg Stewart R, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), pp. 301.

նություններն իրականացնելու համար: Թիրախ խմբի նպատակաուղղված զրկումը մարդկային հատկանիշներից վերացնում է իր տեսակի սպանության անթույլատրելիության հետ կապված այն պատժները, որոնք կառուցված են մարդկային հասարակության դարավոր ավանդույթների ուժով, ինչպես նաև կրոնական գաղափարախոսությունների ազդեցության տակ: Ապամարդկայնացման հաջորդ փուլում թունատրման հետևանքով զոհերը սկսում են ընկալվել ոչ միայն իբրև ոչ մարդկային էակներ, այլև վտանգավոր և սպանության արժանի:

ԱՊԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Սուրեն Մանուկյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Ապամարդկայնացումը կարևորագույն գործոն է ցեղասպանություններն իրականացնելու համար: Թիրախ խմբի նպատակաուղղված զրկումը մարդկային հատկանիշներից ջնջվում է մարդասպանության նկատմամբ գոյություն ունեցող բարոյական արգելքներն ու պատժները: Ջոհը ապամարդկայնացման հետևանքով կորցնում է մարդկային հատկանիշները, անհատականությունն ու սկսում ընկալվել իբրև կենդանի (կապիկ, առնետ, շուն), միջատ (տզրուկ, խավարասեր) կամ վնասարար և վտանգավոր ինչ-որ երևույթ (վիրուս, բացի, հիվանդություն ծնող մանրէ, վնասատու, քաղցկեղ):

Ապամարդկայնացման հաջորդ փուլում թունատրման հետևանքով զոհերը սկսում են ընկալվել ոչ միայն իբրև ոչ մարդկային էակներ, այլև վտանգ և սպանության, «մաքրման», ոչնչացման արժանի:

THE PHENOMENON OF DEHUMANIZATION IN GENOCIDE IMPLEMENTATION

Suren Manukyan

SUMMARY

Dehumanization is a crucial factor in the implementation of genocides. The targeted deprivation of the victim group from the human features is the eradication of existing moral limitations to human killing. In the result of dehumanization, the victims lose human characteristics, personality, and begin to be perceived as animals (monkeys, rats, dogs), insects (leeches, cockroaches) or harmful and dangerous objects (virus, bacilli, bacterium, parasite, cancer).

At the next stage of toxification, victims begin to be identified not only as non-human beings but also threats, deserving of "cleaning", destruction and killing.

Keywords: Деруганизация, психология геноцида, пропаганда ненависти, токсификация.

ФЕНОМЕН ДЕГУМАНИЗАЦИИ В ПРОЦЕССЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА

Сурен Манукян

РЕЗЮМЕ

Дегуманизация является решающим фактором в процессе осуществления геноцида. В результате целенаправленного лишения жертвы человеческих черт исчезают также существующие моральные барьеры и психологические препятствия для убийства людей. Вследствии дегуманизации жертва теряет человеческие характеристики, личность и начинает рассматриваться в качестве животного (обезьяны, крысы, собаки), насекомых (пиявки, тараканы) или вредных и опасных явлений (вирусы, бациллы, бактерии, вредители, раковые клетки).

На следующем этапе дегуманизации – токсификации, жертв начинают воспринимать не только как нелюдей, но и в качестве угрозы заслуживающей «чистки», уничтожения, убийства.

Ключевые слова: Дегуманизация, психология геноцида, пропаганда ненависти, токсификация.

**ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ «ՄԵԿ ՀԱՅ՝ ՄԵԿ ՈՍԿԻ»
ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ**

Գոհար Խանումյան

Որբահավաք առաքելության ձևավորման պատճառները

Հայոց ցեղասպանության իրագործման սկզբից կանայք¹ և երեխաները, ովքեր երիտթուրքական իշխանությունների կողմից դիտարկվում էին իբրև առանձին թիրախային խումբ, ենթարկվեցին բազմաթիվ փորձությունների²։ Թուրք, քուրդ, չերքեզ տղամարդիկ և կանայք, ինչպես նաև թուրքական բանակի զինվորներն ու սպաները տեղահանության ճանապարհին առևանգում էին բազմաթիվ հայ երեխաների, կանանց և սովորաբար վաճառում Օսմանյան կայսրության տարբեր քաղաքների ու մարդաշատ բնակավայրերի ստրկական շուկաներում։ «Երեխաները «կամավոր կերպով» հանձնվում էին մահմեդական ընտանիքներին կամ գնվում ճանապարհի վրա, առևանգվում, ինչի վրա պաշտոնյաներն աչք էին փակում, կամ խլվում ու վաճառվում էին ստրկության։ Շարասյուններն ուղեկցող ժանդարմների համար հայ աղջիկների ու կանանց առքուվաճառքը (trafficking) եկամտի ամենակարևոր աղբյուրներից մեկն էր»³։ Ստրկության վաճառված հայ երեխայի, կնոջ արտաքին և ֆիզիկական տվյալներից կախված՝ որոշվում էր գինը. մեկ բուռ ալյուրից մինչև մի քանի օսմանյան ոսկի։ Որբախույզ Հայկ Թորանյանը, անդրադառնալով այս ցավալի իրողությանը, գրում է. «Ուրֆայի ամենօրեայ շուկան դարձած էր մանուկներու պազար. ամենէն գեղեցիկ տղան կը ծախուեր 10 դրուշի»^{4,5}։

1915-16թթ. մեծ թվով հայ երեխաներ, երիտասարդ կանայք հայտնվեցին մահմեդական ընտանիքներում։ Նոր միջավայրում նրանք ապրում էին իրավագույրկ վիճակում, հաճախ ազգային պատկանելության համար ենթարկվում նվաստացումների և ֆիզիկական բռնության։ Մահմեդական ընտանիքներ, հարեմներ վաճառված հայ երեխաները, կանայք բռնի իսլամացվում էին՝ ստանալով

¹ «Կին» բառի փոխարեն Թաներ Աքչամն օգտագործում է «հասուն աղջիկներ» բառակապակցությունը՝ այդ կերպ ցանկանալով շեշտը դնել նրանց տարիքային շեմի վրա։ Տե՛ս Աքչամ Թ., *Երիտթուրքների գործած ոճի՝ մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զրկումները Օսմանյան կայսրությունում*, Թարգմանեց Հասմիկ Հարությունյանը, Երևան, 2015, էջ 384։

² Որոշ ուսումնասիրողների կարծիքով հայ երեխաները և հատկապես կանայք Հայոց ցեղասպանության տարիներին տղամարդկանց հետ համեմատած ենթարկվեցին ավելի բազմաթիվ փորձությունների։ Տե՛ս Miller D. E., Miller Touryan L., *Survivors, an Oral History*. University of California Press, 1999, էջ 94։

³ Մեքերեքված է Աքչամ Թ., *նշվ. աշխ.*, էջ 388։

⁴ **Ղրուշ** կամ **դուրուշ**՝ թուրքական դրամական միավոր, մանրադրամ։

⁵ 1915. *աղետը եւ վերածնունդ*, հեղինակ՝ աղէտէն վերապրողներ, կազմ. Լևոն Մեսրոպ, Փարիզ, 1952, էջ 73։

մահմեդական անուններ: Այսինքն՝ նոր միջավայրում նրանք հարկադրաբար կորցնում էին հայկական ինքնությունը⁶: Ինչպես իրավացիորեն նշում է պատմաբան Թաներ Աքչամը. «... անկախ իրենց ընտրած միջոցներից՝ իթթիհադականները ջանացել են հայերի մնացուկները պահել կառավարելի մակարդակի վրա: Պետք է արգելվեր վերապրածների հավաքական գործունեությունը և ազգության ու մշակույթի պահպանումը»⁷:

1916 թ. Կովկասյան ճակատում ռուսական զորքերն ազատագրեցին Արևմտյան Հայաստանի որոշ բնակավայրեր՝ Էրզրումը, Տրապիզոնը, Բիթլիսը. այս գործում մեծ ներդրում ունեցան հայկական կամավորական ջոկատները: Հայրենիքի մի հատվածի ազատագրումը նոր հույսեր արթնացրեց արևմտահայության շրջանում: Նրանց մի հատված վերադարձավ հայրենի ավերված բնակավայրեր: Այդ օրերին հայապահպանության կարևոր խնդիրներից էր հայության բեկորների մի սովոր հատվածի՝ մահմեդական ընտանիքներում, հարեմներում (հաճախ բռնի) պահվող հայ կանանց և երեխաների՝ հայկական միջավայր վերադարձնելը: Այդ առաքելությունը ստացավ որբահավաք անվանումը:

«Որբահավաք» բառի բացատրությունն առաջին անգամ հանդիպում է Էդ. Աղայանի բացատրական բառարանում⁸: Համանման իմաստ ունեն նաև «հայահավաք» և «ազգահավաք»⁹ բառերը, որոնք քննարկվող ժամանակահատվածում օգտագործվել են որպես հոմանիշներ: Ընդ որում հարկ է նշել, որ «որբահավաք» առաքելությունը տարիքային կամ սեռային որոշակի սահմանափակումներ չի ունեցել: Որբահավաքի շնորհիվ ազատագրվածները ինչպես երեխաներ էին (հաճախ ծնողազուրկ), այնպես էլ չափահաս հայ կանայք և տղամարդիկ: Մահմեդական գերությունից իրենց հայրենակիցներին ազատագրող անհատները կոչվում էին *որբախոյզներ* կամ *որբեր հավաքողներ*:

Որբահավաք առաքելությունը սկսվեց 1916-1917 թվականներին Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի կողմից օկուպացված տարածքներից՝ հետագայում տարածվելով Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հատվածներում: Եթե սկզբնական շրջանում որբահավաք աշխատանքներն իրականացվում էին անհատների կողմից, ապա զինադադարից հետո ավելի կազմակերպված բնույթ կրեցին. դրանք սկսեցին իրականացնել հայկական նպաստամատույց կազմակերպությունները և հայոց եկեղեցին նախ՝ Կ.Պոլսում և նրա հարակից շրջաններում, ապա նաև կայսրության այլ հատվածներում, որտեղ աստիճանաբար սկսում էին վերադառնալ հայության բեկորները, ինչպես նաև Կովկասում՝ Ռուսական

⁶ Մանրամասն տե՛ս Kurt Ü., “Cultural Erasure: The absorption and Forced Conversion of Armenian Women and Children, 1915-1916”, *Etudes Arméniennes Contemporaines*, vol. 7, 2016, էջ 79:

⁷ Աքչամ Թ., *նշվ. աշխ.*, էջ 359:

⁸ Որբահավաք- ած., որբերին հավաքող, ապաստան տվող: Տե՛ս Արդի հայերենի բացատրական բառարան. Էդուարդ Բագրատի Աղայան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, էջ 1147:

⁹ Տե՛ս Սասունի Կ., *Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918). թրքահայոց զաղթաշարժերը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ*, Պեյրուք, 1966, էջ 103:

կայսրության տարածքում: Գերությունից հայրենակիցների ազատագրումն իրականացվում էր փրկագնման կամ փախուստի¹⁰ կազմակերպման եղանակներով:

Հայապահպան այս առաքելության հենց սկզբից պարզ դարձավ, որ փրկության կարիք ունեն ոչ միայն մահմեդական գերության մեջ հայտնված հայերը, այլև անմարդաբնակ, ավերակ վայրերում ապաստանած խնամագուրկ հայ երեխաները, որոնց հայտնաբերման համար ստեղծվում էին հատուկ հետախուզական խմբեր: Այս երեխաների փրկության հարցը դարձավ որբահավաք առաքելության առանձին ուղղություն:

«Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը և փրկության հանգանակության կազմակերպումը

Որբահավաք առաքելության հենց սկզբում ձևավորվեց «մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը, որը կարճ ժամանակահատվածում վերաճեց համահայկական փրկության ծրագրի: Այն նպատակ ուներ փրկելու ֆիզիկական ոչնչացման և ուժացման եզրին կանգնած հայության բեկորներին: Կարգախոսն առաջին անգամ շրջանառության մեջ դրեց հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հայդուկապետ Սեբաստացի Մուրադը¹¹ Երզնկայում՝ 1916 թ. ամռանը¹²: Կարճ ժամանակ անց նրա հետախուզական խմբերի հաղորդած տեղեկությունների հիման վրա ակնհայտ դարձավ, որ մահմեդական գերության մեջ գտնվող հայերի թիվն անցնում է մի քանի տասնյակ հազարը, ընդ որում այդ թիվը վերաբերում էր միայն ռուսական ռազմական վերահսկողության ենթակա շրջաններին: Մուրադն իր զինակից ընկերների՝ Կայծակ Առաքելի, Մեպուհի հետ առաջին հերթին սկսեց բանակցություններ վարել Դերսիմի, Էրզրումի, Երզնկայի քուրդ աշիրեթապետների հետ և խոստացավ մեկ հայի համար մեկ օսմանյան ոսկի գլխագին: Նրանց փրկագնելու համար անհրաժեշտ էր ստեղծել համահայկական հանգանակության ֆոնդ՝ «մեկ հայ՝ մեկ ոսկի», ինչի վերաբերյալ հայտարարություն տրվեց Թիֆլիսում տպագրվող հայկական թերթերում¹³: «Արմյանսկի վեստնիկ»-ում 1916թ. սեպտեմբերից սկսած՝ պարբերաբար հատուկ պնդակում տպագրվում էին «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդին հանգանակություն կատարած բարերարների անունները¹⁴: Շաբաթաթերթում նշվում էր. «Կովկասի հայկական թերթերի խմբագրություններում բացվել է քրդական գերությունից հայ գաղթականներին ազատագրելու հանգանակության ֆոնդ, որոնց [գաղթականներին-Գ. Խ.] կյանքի գինը քուրդ «բարեգործների» կողմից հայտարարվել է մեկ թուրքական լիրա (18

¹⁰ Փախուստի կազմակերպիչները հիմնականում քրդերն էին, ինչի համար նրանք հայկական կողմից վարձատրվում էին:

¹¹ Սեբաստացի Մուրադ (Մուրադ Խրիմյան)-(1874, Սեբաստիա-1918, Բաքու), հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, հայդուկապետ:

¹² Տե՛ս Միրմենեան Գ., *Երզնկա*, Գահիրե, 1947, էջ 411: Տե՛ս նաև Սասունի Կ., *նշվ. աշխ.*, էջ 112: Տե՛ս նաև *Армянский вестник*, № 30, 1916, էջ 18:

¹³ Մեպուհ, *Էջեր իմ յուշերեն*, Պոսթրն, 1925, էջ 292: Տե՛ս նաև Սասունի Կ., *նշվ. աշխ.*, էջ 112: Տե՛ս նաև Միրմենեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 411:

¹⁴ Տե՛ս *Армянский вестник*, № 33, 1916, էջ 20:

ռուրլի փոխարժեքով՝ մեկ հոգու համար)»¹⁵: Հանգանակությունները կատարվում էին ռուսական ռուրլով: 1916-ին մեկ օսմանյան ոսկին համարժեք էր 18 ռուրլու:

Արդեն 1916 թ. աշնանը Ռուսական կայսրության տարբեր հայաշատ քաղաքներում սկսեցին կազմակերպվել հանգանակություններ մահմեդական գերությունից հայերի փրկագնման օգտին: Կիսլովոդսկում հայազգի հայտնի հասարակական գործիչ Գր. Չալխուշյանը¹⁶ երկու օրվա ընթացքում հավաքեց 45.000 ռուրլի¹⁷: Բաքվում տպագրվող «Արեւ» պարբերականը հաղորդում է, որ օգոստոսի 1-18-ն ընկած ժամանակահատվածում «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդի համար Բաքվի հայ համայնքի կողմից հանգանակվել է մոտ 3500 ռուրլի, որից 2000 ռուրլին փոխանցվել է Մեսրոպ Տեր-Մովսիսյան եպիսկոպոսին¹⁸՝ այն անհապաղ Մեպուհին և Մուրադին հասցնելու համար¹⁹: Հանգանակված գումար ուղարկվում էր Մոսկվայի «Արմյանսկի վեստնիկ», Թիֆլիսի «Հորիզոն» և Բաքվի «Արեւ» թերթերի խմբագրություն: Թիֆլիսում հանգանակության գործն արդյունավետ կազմակերպելու համար միավորվեցին բոլոր հայանպաստ միությունները՝ Մեսրոպ եպիսկոպոսի գլխավորությամբ²⁰:

Ի դեպ, հայերին մահմեդական գերությունից ազատագրելու ֆոնդին հանգանակություն էին կատարում ոչ միայն Կովկասում, Ռուսաստանում ապրող հայերը, այլև օտարազգիները՝ ռուսները, վրացիները և այլն: Ուշագրավ է, որ «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդի համար հանգանակություն է կազմակերպվել անգամ հեռավոր Ճապոնիայում՝ տեղի հայ համայնքի ջանքերով²¹: Երբեմն մարդիկ բերում էին իրենց ոսկյա զարդերը՝ ադամանդյա մատանի, թնոց, ապարանջան²²: Հանգանակությանը մասնակցում էին նաև երեխաները: Շատ հուզիչ է Աստրախանում բնակվող փոքրիկ հայ աղջկա նամակը «Արմյանսկի վեստնիկ»-ի խմբագրությանը. «Հարգելի՛ պարոն Ամիրյան, չուզենալով հետ մնալ եղբայրներիցս, ես էլ եմ ցանկանում ազատել 5 մարդ և ահա ուղարկում եմ 90 ռուրլի: Շատ կցանկանայի իմանալ, եթե հնարավոր է, ազատվածների անունները. 2-րդ դասարանի աշակերտուհի՝ Վարդուհի Մամուսյան»²³:

¹⁵ *Армянский вестник*, № 30, 1916, стр. 18.

¹⁶ Գրիգոր Չալխուշյան (1861, Նոր Նախիջևան-1931, Դոնի Ռոստով)-հասարակական գործիչ, պատմաբան, իրավաբան: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը Դոնում (1919): Հայկական Կարմիր խաչի կենտրոնական վարչության նախագահ (1920):

¹⁷ *Армянский вестник*, № 30, 1916, стр. 18.

¹⁸ Տեր-Մովսիսյան Մեսրոպ (ավագանի անունը՝ Փարսադան), Մեսրոպ Մագիստրոս (1865, գ. Շիկահող, այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզ-1939, Երևան)- արքեպիսկոպոս, հայազետ, հասարակական գործիչ: 1913-ին կարգվել է Վիրահայոց թեմի առաջնորդ, 1914-ին ազգային բյուրոյի պատվավոր նախագահն էր, հայ կամավորական ջոկատների նախաձեռնողը: 1916-ին Աստրախանի թեմի հոգևոր առաջնորդն էր: Մանրամասն տե՛ս «*Քրիստոնյա Հայաստան*» հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Հովհ. Այվազյան, «Հայկական հանրագիտարան» հրատ., Երևան, 2002, էջ 1012:

¹⁹ «*Արեւ*» օրաթերթ, 24 օգոստոսի, № 186, 1916, էջ 4:

²⁰ *Армянский вестник*, № 34, 1916, стр. 24.

²¹ *Армянский вестник*, № 45, 1916, стр. 17.

²² *Армянский вестник*, № 36, 1916, стр. 18.

²³ *Армянский вестник*, № 40, 1916, стр. 15.

Մահմեդական գերությունից իրենց հայրենակիցներին ազատագրելու համար 1916 թ. նոյեմբերի դրությամբ հանգանակվեց շուրջ 200 000 ոռուլի²⁴: «Արմյանսկի վեստնիկ»-ի համարներից մեկում հոդվածագիրը «Մեկ հայ՝ մեկ ոսկի» խորագրով հոդվածում ցավով գրում է. «20-րդ դարի համար անհավատալի իրականություն է. մարդկանց՝ հայերի վաճառքը հայտարարված է, ու մենք՝ նրանց արյունակից և հոգևոր եղբայրները, քաղաքացիական ազատ հայերս, շտապում ենք մաքրել նրանց վրայից ստրուկի խարանը, ինչին նրանք երբևիցե արժանի չեն եղել. ինչ է արված մեր կողմից: «Հորիզոն», «Արեւ» «Արմյանսկի վեստնիկ» թերթերի հաղորդումներով մեր հասարակական կազմակերպությունների միջոցով հնարավոր է եղել հավաքել 200.000 ոռուլի... Ինչքան հայ ենք մենք ազատագրել այդ հավաքված գումարով՝ 11.000, միայն 11.000: Իսկ մնացյալը, չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրը վստահ է, որ 11. 000 թիվը վերջնական չէ, գերության մեջ դեռ կան հազարավոր հայեր, որոնք դատապարտված են մահվան, եթե նրանց չփրկագնենք: Անհրաժեշտ է նրանց բոլորին փրկագնել»²⁵: Սակայն հոդվածագիրը վստահ է, որ միայն հասարակական ուժերով անհնար է իրագործել այս հսկայական խնդիրը, ինչքան էլ որ հարուստ և հայրենասեր լինեն հայերը: Անհրաժեշտ է, որ Աստանտի «փոքր դաշնակից» Հայաստանն այդ երկրների պետական աջակցությունը ստանա²⁶:

Խարբերդ-Դերսիմ-Երզնկա փրկության ճանապարհը

«Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդի միջոցներով առաջին ազատագրվողները եղան Դերսիմում գերության մեջ պահվող հայերը: Դերսիմի քրդերը, որոնք գրեթե միշտ հանդես են եկել իրենց հակաթուրքական և ապակենտրոն դիրքորոշմամբ, զանգվածաբար դասալքելով թուրքական բանակի շարքերը, 1916-ին ամբողջովին վերահսկում էին այս լեռնային շրջանը: Հայոց ցեղասպանությունը վերապրող Վահե Հայկը²⁷, խոսելով «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ծրագրին քրդերի հետ համագործակցության մասին, գրում է. «Ասոնք լավ գիտեին հայերու գլխին եկածը, այս երթեւեկի պատեհությամբ յարաբերությին մշակեցին պահուրդված հայերու հետ և կրցան թե՛ շահու աղբիւր մը բանալ և թէ հայեր առաջնորդել դէպի ապահով կայքեր: Փրօֆ. Լիլեճեանի փրկարար փախուստը բացաւ փրկարար ճանապարհ մը տանջուած հայերու առջև»²⁸:

1916 թ. մի քանի ամիսների ընթացքում «հայերի փրկության ճանապարհ»-ով (այն անցնում էր Խարբերդից Դերսիմի լեռներով դեպի Երզնկա) փրկագնվեց մոտ 10 000 հայ²⁹, իսկ որոշ աղբյուրներում՝ 20.000³⁰: Որոշ աղբյուրներում նշվում

²⁴ Армянский вестник, № 44, 1916, стр. 10.

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Վահե Հայկ (Վահե Մկրտչի Տինճյան)-(1896, Խարբերդ – 1983, Ֆրեզնո)-արևմտահայ գրող, խմբագիր, բանասեր և պատմաբան, Ռամկավար ազատական կուսակցության գործիչ:

²⁸ Վահե Հայկ, *Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը* (Յուշամատենան պատմական, մշակութային և ազգագրական), Նիւ Եորք, 1959 թ., էջ 1447:

²⁹ Նույն տեղում, էջ 1429:

³⁰ Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 112:

է, որ այս ճանապարհով փրկագնված առաջին հայը խարբերոցի հայտնի մտավորական Տոնապետ Լյուլեճյանն էր³¹։ Նա 1915-ին ձերբակալվել էր խարբերոցի հայ երևելիների հետ և Մեզրեի բանտում թուրք ոստիկանների կողմից ենթարկվել խոշտանգումների³²։ Նրա համար հայերը քուրդ Մեհմեդ Ալի աղային վճարեցին 50 օսմանյան ոսկի։

Մեծաթիվ խմբերով ազատագրված հայերին ռուսական բանակի կողմից օկուպացված շրջաններ՝ հատկապես Երզնկա, տեղափոխելու համար ստեղծվեց ազատագրվածների անվտանգ տեղափոխումն ապահովող հատուկ զինված որոնողական խումբ Մոսկվայի հայկական կոմիտեի (ղեկ. բժիշկ՝ Արշակ Պողոսյան) և հայ կամավորականների (ղեկ.՝ Մերաստացի Մուրադ) համատեղ ջանքերով³³։ Խմբի մեջ ընդգրկված երիտասարդները քաջաձանոթ էին տեղանքին, առավել անվտանգ երթուղիներին։ Այս խմբի անդամներից էր հայտնի չմշկածագցի Վահրամ Տեր-Մանվելյանը³⁴։ Նրա մասին հայ վրիժառու, Նեմեսիս օպերացիայի մասնակից Սողոմոն Թեփլիբյանը, ով ևս Մուրադի որոնողական խմբի անդամ էր, գրում է. «Նրա մեկ ոտքը Տերսիմ էր, միւսը՝ Երզնկա. յաջողել էր քիւրտերի հետ կապեր հաստատել, որոնց մէջ Մուրատի «Մէկ հայ մէկ ոսկի» ազդարարութիւնը լայն ժողովրդականութիւն էր ստացել։ Չմշկածագցին ճշգրտորեն կատարում էր այդ հրահանգը՝ վճարելով քիւրտերի կողմից ներկայացուած ամէն հայի համար մէկ օսմանեան ոսկի և այդ միջոցով ամէն օր քաղաքում յայտնում էին նոր ու նոր ազատագրուածներ»³⁵։

Առավել հեշտ էր կազմակերպել Երզնկայի մոտակա քրդաբնակ շրջանների հայերի ազատագրումը։ Հեռավոր լեռնային շրջանների քրդերի հետ բանակցություններ էին վարում Երզնկայի քուրդ բեկերն ու շեյխերը³⁶։ Կախված երթուղու երկարությունից՝ գլխագինն ավելանում էր։ Դա քրդերն անվանում էին «տեղափոխության վճար»³⁷։ Բացի դրանից, գլխագնի գումարի մեջ հաշվարկում էին ուտելիքի և այլ ծախսեր։ Պետք է նշել, որ եթե 1916 թ. ամռանը մեկ հայի համար քրդերը պահանջում էին 20-40 ռուբլու (1-2 օսմանյան լիրա) համարժեք գումար, ապա նույն թվականի վերջին՝ կապված ռուբլու արժեզրկման հետ, միջինը կազմում էր 30-40 ռուբլի³⁸։ Ազատագրված հայերին տեղափոխում էին Երզնկա, որտեղ նրանց խնամքը ստանձնում էին հայկական կազմակերպությունները։

³¹ Տոնապետ Կարապետի Լյուլեճյան(Բագրատ)-(1875, Խարբերդ-1917, Երզնկա), մտավորական, ուսուցիչ։ Եփրատ քղեջի շրջանավարտ(1897)։ 1909-11 թթ. սովորել է Քորնուելի և Եյլի համալսարաններում։ ԱՄՆ-ից վերադառնալով Խարբերդ՝ դասավանդել է Եփրատ քղեջում։ Նրա կյանքի և ստեղծագործական գործունեության մասին մանրամասն տե՛ս *Հասկարադ քրոֆ. Տ. Կ. Լիլե-ճեանի(Բագրատ) գրական վապուսկը և 1915-ի բանտի յուշերը*, Ֆրեզնո, 1955։

³² Վահե Հայկ, *նշվ. աշխ.*, էջ 1446։

³³ Սիրմէնեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 411։ Տե՛ս նաև *Армянский вестник*, №48, 1916, էջ 15։

³⁴ Անդրէասեան Վ., *Հազարապարուն*, հատոր Բ, Պէյրութ, 1984, էջ 69։

³⁵ Թեփլիբեան Ս., *Վերլիշումներ (Թալեաթի տհաքեկումը)*, գրի առաւ Վահան Մինախորեան, Գահիրէ, 1953, էջ 100։

³⁶ Մանրամասն տե՛ս *Армянский вестник*, № 48, 1916, էջ 15։

³⁷ *Նույն տեղում*, էջ 15։

³⁸ *Նույն տեղում*, էջ 15, 16։

Որբահավաք աշխատանքների կազմակերպումը

Գերության մեջ գտնվող հայերի թվաքանակի և նրանց գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ էին տալիս նաև Երզնկա և Էրզրում վերադարձած հայերը: Ի դեպ, կարևոր և դժվարին գործ էր հայ կանանց և երեխաների հայտնաբերումը մահմեդական տներում կամ հարեմներում: «Մեկ հայ՝ մեկ ոսկի» հայահավաք առաքելության կազմակերպիչներից մեկը՝ Սեպուհը, իր հուշերում անդրադառնալով այս փաստին, որոնողական գործողություններն անվանում է «հայախույզ»³⁹: Որոնողական խմբերի մեջ ընդգրկվեցին նաև ցեղասպանությունը վերապրած հայ կանայք (բաբերդցիներ տիկին Զարուհին (ազգանունը հայտնի չէ), Սրբուհի Չուգուրյանը և Գեղեցիկ Խանճյանը), որոնք շրջիկ վաճառականների քողի տակ մտնում էին թուրքերի կամ քրդերի տները և երբեմն նաև կաշառքի միջոցով տեղեկություններ հայթայթում գերության մեջ պահվող հայերի վերաբերյալ⁴⁰:

Փրկագնված հայերի անուններն ընդգրկվում էին Մոսկվայի հայկական կոմիտեի հատուկ թոուցիկ խմբերի կազմած ցուցակներում, որտեղ նաև նշվում էին նրա տարիքը, մահմեդական «տիրոջ» անունը, նրա համար վճարված փրկագինը⁴¹: Ազատագրված երեխաներից⁴² շատերը (հիմնականում մինչև 5 տարեկան տարիքային խմբի) չէին հիշում իրենց ազգանունը, իսկ ոմանք՝ նաև անունները: Վերջիններս անվանակոչվում էին իրենց ազատարարների կողմից՝ Ազատուհի, Սիրանուշ, Նոյեմզար և այլն⁴³: Ըստ այս ցուցակների՝ 1916 թ. հունիս ամսվա՝ Մասունի և հարակից շրջանների ազատագրվածների թիվը շուրջ 13.500 էր, իսկ Մուշի և Տիգրանակերտի շրջաններում՝ 4-5000⁴⁴: 1916 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Երզնկայում և նրա շրջակա բնակավայրերում ազատագրվեց 4671 մարդ, որից 450-ը 4-12 տարեկան որբեր էին⁴⁵:

Պետք է նշել, որ առավել դժվար էր հայտնաբերել թուրքերի մոտ գերության մեջ պահվող հայերի թիվը, քանի որ, ինչպես նշում է Գ. Սուրմենյանը. «... թուրքերը իրենց մօտ գտնուած հայերը կը թաքցնէին խիստ զգուշությամբ»⁴⁶: Ի տարբերություն քրդերի, թուրքերի մոտ պահվում էին բացառապես երեխաներ և երիտասարդ աղջիկներ. վերջիններս գտնվում էին հիմնականում հարեմներում: Թուրք տներն իրենց գերիներին հայկական կողմին վերադարձնել չէին ցանկանում: Մահմեդականները և հատկապես թուրքերը, հայ երեխաներին որդեգրելիս առաջնորդվում էին շարիաթի այն հայտնի դրույթով, որ մահմեդականացնելով այլակրոն երեխաներին՝ նրանք կարժանանան Ալլահի ողորմածությանը⁴⁷:

³⁹ Տե՛ս Սեպուհ, *նշվ. աշխ.*, էջ 296:

⁴⁰ Նույն տեղում: Տե՛ս նաև Սիւրմենեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 409:

⁴¹ Տե՛ս *Армянский вестник*, № 12, 1917, էջ 15:

⁴² Ազատագրված երեխաները 3-13 տարեկան էին, տե՛ս *նույն տեղում*:

⁴³ Տե՛ս *նույն տեղում*:

⁴⁴ Մասունի Կ., *նշվ. աշխ.*, էջ 112:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Սիւրմենեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 409: Տե՛ս նաև *Армянский вестник*, № 12, 1917, էջ 9:

⁴⁷ Մելքոնյան Է., *Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն*, Երևան, 2005 թ., էջ 98:

Թուրքական գերությունից Երզնկայում հայերին ազատագրելու դժվարին առաքելությունն իր վրա վերցրեց վերը հիշատակված Տոնապետ Լյովենյանը 1917-1918 թթ.: Ջորավար Անդրանիկը, ով անձամբ ճանաչում էր Տ. Լյովենյանին, նրան համարում է **հայ առաջին որբահավաքը**՝ այդ մասին գրելով իր օրագրության մեջ. «Տեղյակ էինք թե ինչպես խումբ մը հայ քաջերու հետ միասին թուրք տուններէն դուրս բերած էր հայ որբերը և իբր հարճ ու սպասուհի ծառայեցուած հայ աղջիկներն ու կիները: 400-500 երախաներու և աղջիկներու ազատագրումը անոր կը պարտինք: Ան մեր եղեռնի պատմութեան մէջ *առաջին որբահավաքը* եղած էր, որուն ոչ պետութիւն մը եւ ոչ ալ կուսակցութիւն մը չէր օգներ»⁴⁸:

Անապաստան, խնամագուրկ, վայրենացած կամ «մաուզլի» որբերի հավաքագրումը

Երբ գործի դրվեց «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ծրագիրը, որը 1916-ին ազդարարեց Ցեղասպանությունից մազապուրծ հայության բեկորների ազատագրումը և սկիզբ դրեց որբահավաք գործընթացին, ակնհայտ դարձավ, որ անհրաժեշտ է ոչ միայն ազատագրել մահմեդական գերության մեջ հայտնված հայ երեխաներին և կանանց, այլև հավաքագրել կոտորածներից և տեղահանության սարսափներից մազապուրծ այն երեխաներին, ովքեր ապաստան էին գտել լքված, անմարդաբնակ բնակավայրերում, ավերված տներում, անտառներում, քարայրներում՝ հեռու մարդկությունից և քաղաքակրթությունից: Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներում հաճախ կարելի էր ականատես լինել այսպիսի ցավալի դրվագների: Հայկական կոտորածների իրագործումից անցել էր շուրջ մեկ տարի, և որոշ հայ երեխաներ, ցեղասպանության արդյունքում դառնալով ծնողագուրկ և անօթևան, վայրենացել էին: Անպաշտպան ու խնամագուրկ երեխաները, ովքեր ականատես էին եղել իրենց հարազատների, ծնողների սպանությանը, խուսափում էին մարդկանց հետ շփումներից՝ այլևս չվստահելով նրանց: 1915-18 թթ. ընթացքում այդ երեխաներից ոմանք կորցրել էին խոսելու, մարդկային կեցվածքով քայլելու ընդունակությունը՝ ձեռք բերելով վայրենի կենդանիներին բնորոշ հատկանիշներ, օրինակ՝ կծել, կենդանու լեշը հոշոտել և այլն: Որոնողական այն խմբերը, որոնք իրականացնում էին հայերի ազատագրումը մահմեդական գերությունից, սկսեցին անմարդաբնակ վայրերից հավաքագրել նաև այսպիսի երեխաների:

Կովկասյան ճակատում ռուսական բանակի գթության քույր Խրիստինա Սեմինան 1915 թ. ամռանը, երբ ռուսական զորքերը մտան ավերված Վան, պատմում է հետևյալ դրվագը. «Երբ եկա այստեղ [Վան- Գ. Խ.], բոլոր տներում հայերի դիակներ էին: Թուրքերը դաժան հաշվեհարդար էին տեսել նրանց հետ... Նույնիսկ քաղաքից փախչողների մեծ մասը ևս սպանվել էր: Որոշ մասն այժմ թաքնվում է անտառներում և քարանձավներում: Նրանց մեջ շատ են վայրենացած երեխաները, որոնց ծնողներին սպանել են: Օրերս իմ սանիտարները տեսել են մի այսպիսի

⁴⁸ Հասկաքաղ բրոֆ. Տ. Կ. Լիլենճեանի ..., էջ 688:

երեխայի: Նրանք փորձել էին բռնել նրան, բայց ապարդյուն: Նա ամբողջովին մերկ էր և հենց նկատեց մարդկանց, ինչպես գազանը, թաքնվեց այնպես, որ նրան այդպես էլ չգտան: Տեղի պարետը հայ զինվորներից մի ջոկատ է հավաքել, որոնք մագլցում են լեռները և ամենուր փնտրում են վայրենացած երեխաներին: Ոմանց արդեն գտել են և հանձնել պարետին: Ես տեսել եմ նրանց... սարսափելի է. ուռած փորերով՝ լոկ կաշի ու ոսկոր... ու այն աստիճանի վայրենացած, որ եթե ձեռքդ մեկնես՝ գազանի պես կծում են»⁴⁹:

Պահպանվել են նաև այդպիսի երեխաների լուսանկարներ, որոնք վկայում են ցեղասպանության տարիներին գիտական գրականության մեջ դեռևս ինչպես հարկն է չուսումնասիրված այս փաստի մասին: Հայոց ցեղասպանության ակա-նատես ֆրանսիացի ռազմական լրագրող Անրի Բարբին, ով 1916 թ. ռուսական զորքերի հետ մտել էր Արևմտյան Հայաստան, իր գրքում տպագրված լուսանկարի բացատրագրում գրում է. «Հայկական ավերված գյուղերում գտնված ահաբեկված, հյուծված, վայրենի որոշ հայ երեխաներ» (նկ. 1)⁵⁰: Լուսանկարում⁵¹ պատկերված են մի խումբ երեխաներ, որոնք կորցրել են մարդկային կերպարանքը: Սովահարությունից նրանց դիմագծերն ու մարմինները տձևացել են: Նրանք ցնցոտիներով են, ճաղատ և բոկոտն: Առաջին պլանում պատկերված երեխայի դեմքին արտացոլված են ցավն ու տառապանքը, վախն ու անհանգստությունը, սովն ու հուսահատությունը: Նրա կողքին անշնչացած ընկած է մի աղջնակ: Լուսանկարը տպագրվել է նաև ամերիկյան Կարմիր խաչի տեղեկագիր-ամսագրում⁵²: Գրեթե նույն ժամանակահատվածում լուսանկարը տպագրվել է Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի կողմից թողարկված հայ որբերի օգտին կատարվող հանգանակության տուփի վրա⁵³:

Քննարկվող մյուս լուսանկարի (նկ. 2) երեխան հայտնաբերվել է անապատից, որտեղ նա միայնակ գոյատևել է մոտ երկու տարի՝ սնվելով միայն խոտերով: Հայտնաբերման պահին նա լիովին վայրենացել էր: Հաջորդ լուսանկարում (նկ. 3) երեխան արդեն հոգատար ձեռքերում է. նրա մասին հոգ է տանում Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի աշխատակցուհին՝ Հելեն Մարի Ժերարը⁵⁴:

1916 թ. հայ վրիժառու Ս. Թեփիրյանը, ով Երզնկայում հայ կամավորականներից ստեղծված որոնողական խմբի անդամ էր և ստացել էր «որբեր հավաքողի պաշտոն»⁵⁵, իր հուշերում անդրադառնում է նաև մարդկային կերպարանքը կորցրած հայ որբուկներին. «Էրզրումի դաշտում ամեն տեղ յայտնում էին ոսկրացած, վայրենական վիճակի մատնուած մանուկներ, որոնց մեծ մասը իր գոյութիւնն էր

⁴⁹ Семина Х. Д., *Трагедия русской армии Первой Великой войны 1914-1918гг. Записки сестры милосердия Кавказского фронта*, книга вторая, Нью-Мексико, 1964, стр. 31-32.

⁵⁰ St'au Barby H., *Au pays de l'épouvante, l'Arménie martyre*, Paris, 1917, 160-161 էջերի միջև՝ ներդիր:

⁵¹ Լուսանկարի հեղինակը, վայրը և ստեղծման ժամանակն անհայտ են:

⁵² *The Red Cross Magazine*, March, 1918, p. 8.

⁵³ ՀՅԹԻ-ի *Ֆոնդեր*, ք-13, ֆի 784:

⁵⁴ St'au <https://www.flickr.com/photos/agbu/albums/72157604597404003/with/2605401782/> (դիտվել է 14.12.2017 թ.):

⁵⁵ Տե՛ս Թեփիրեան Ս., *նշվ. աշխ.*, էջ 75:

պահպանել աւերուած հայ գիւղերի փլատակներում: Ձեռք ընկնողները դողում էին աշնան տերեւի պէս. մեծ ջանք էր պէտք հասկացնելու, որ իրենց այլեւս վտանգ չի սպառնում: Մոռացել էին լեզու, հայութիւն, մարդկութիւն: Խնուսում դրանցից խմբուած էին շուրջ երկու հարիւր հոգի: Ամէն տեղ առաջնակարգ արժէք էր ստացել որբերի գործը. ամէն որբուկ մի նոր աղիւս էր ազգը վերակառուցելու համար»⁵⁶:

Ուշագրավ տեղեկություն է հաղորդում «Առաւօտ» թերթը իր «Լեռը գտնուած եօթը որբեր» խորագրով հոդվածում, որտեղ մասնավորապէս ասված է. «Հացի տեղ խոտը համով-Ատանայէն եկող գաղթականներու կը յանձնուին Անգլիացի զինուորներու կողմէ Պոլիս բերելու համար փսիաթով մերկութիւննին ծածկած եօթը որբեր, որոնք գտնուած էին լեռներու վրայ: Երբ ուրիշ կայան մը կը հանդիպին, իրենց հաց կը տրուի. հացը խստիւ կը մերժեն, վար կը ցատկեն, խոտեր կը ժողունն ու վակոնին մէջ կը սկսին ուտել: Տարիներով խոտաճարակութեան վարժութիւնը հացը մոռցնել տուած է: Լեզու չգինալնուն համար կարելի չէ եղած հասկընալ որ տեղացի ըլլալին, միայն թէ հայ ըլլալին կըրցած են արտայայտել խաչ հանելով. անոնցմէ մին հազիւ հազ կըրցած է ցոյց տալ այն լեռը, ուր սպաննած էին իր մայրը: Որբերը կը յանձնուին Հայտար բաշայի որբանոցին»⁵⁷:

Ակնհայտ է, որ այդ երեխաներին հայտնաբերելուց հետո կարևոր խնդիր էր նաև նրանց համար համապատասխան խնամքի կազմակերպումը: Այս խնդրին հանգամանակից կանդրադառնանք մեր հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

«Մեկ հայ-մեկ ոսկի» հայահավաք առաքելության արդյունքները

Հայոց ցեղասպանության տարիներին սկիզբ առած որբահավաք առաքելությունը՝ «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսով, արդեն 1916 թվականի մի քանի ամիսների ընթացքում տվեց զգալի արդյունք. մահմեդական գերությունից ռուսական զորքերի վերահսկողության տակ գտնվող շրջաններից՝ Էրզրում, Բիթլիս, Տրապիզոն, Վան, ազատագրվեցին տասնյակ հազարավոր հայեր, որոնց մեջ գերակշիռ թիվ էին կազմում հայ երեխաները և հարեմներ վաճառված երիտասարդ կանայք: Այդ առաքելությունն իրականացնող հայերը որբախույզներն էին: Նրանք սովորաբար հայ կամավորականներ կամ հայկական լեզեռնի զինվորներ էին: Կարճ ժամանակահատվածում «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը, որը դարձավ որբահավաքի ամենաարդյունավետ բանաձևը, իրագործվեց նաև Օսմանյան կայսրության այլ բնակավայրերում, մասնավորապէս Սիրիայում և Միջագետքում, որտեղ հազարավոր հայ կանայք և երեխաներ գտնվում էին արաբական տարբեր ցեղախմբերի մոտ: Նրանց ազատագրմամբ սկսեցին զբաղվել հայկական լեզեռնի կամավորները, նաև անհատներ, որոնք միսիոներների, բեդվինների դիմակի տակ շրջում էին արաբական հեռավոր բնակավայրերով, հայտնաբերում իրենց ազգակիցներին, ազատագրում և փոխադրում նրանց հայաշատ կենտրոններ:

⁵⁶ Նույն տեղում, էջ 88:

⁵⁷ «Առաւօտ» լրագիր ազգային եւ քաղաքական, 12 մայիսի, 1919, էջ 2:

Նրանցից հատկապես արժանի է հիշատակման Ռուբեն Հերյանը. նա, հայ լեզեոնականի զինվորական համազգեստը փոխարինելով բեդվինի զգեստով, շրջում է Դեր-Ջորի արաբների վրաններով, հայտնաբերում և ազատագրում է շուրջ 800 հայ երեխաների և հարեմներում պահվող կանանց⁵⁸:

Մուղղոսի զինադադարից հետո որբահավաք աշխատանքների կազմակերպումը դառնում է ոչ միայն առանձին անհատների կողմից իրականացվող հայապահպան գործը, այլև հայկական միությունների գործունեության հիմնական առանցքը: Ազատագրման հիմնական միջոցներն էին թուրք, քուրդ կամ արաբ տերերի դրամական վարձատրությունն ու կաշառքը: Այդ նպատակով 1919թ. Հայ բարեգործական ընդհանուր միությունը ստեղծում է «Ազատագրումի հիմնադրամը», որը կազմակերպում է Ազապա-Քերեքի, Հորանի և Դեր-Ջորի շրջաններում հայերի ազատագրումը մահմեդական գերությունից⁵⁹: Միության նախագահ Պողոս Նուբարը, այս հարցում մեծապես օգտագործեց նաև իր հեղինակությունն ու միջազգային կապերը: 1919 թ. հունվարին Փարիզում Պողոս Նուբարի հետ հանդիպումից հետո Հիջազի գահակալ Հուսեյին իբն Ալին կարգադրեց արաբներին վերադարձնել իրենց մոտ պահվող հայ կանանց և երեխաներին⁶⁰:

Կ. Պոլսում, նրա հարակից շրջաններում, ինչպես նաև Թուրքիայի ներքին գավառներում՝ Անգորա, Յոզղատ, Մալաթիա, Մարդին, Տիգրանակերտ, որբահավաք ակտիվ գործունեություն էր իրականացնում նաև հայկական խոշորագույն նպաստամատույց կազմակերպություններից մեկը՝ Ազգային խնամատարությունը, որը սերտորեն համագործակցում էր հայոց եկեղեցու, մասնավորապես Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն Եղիայանի հետ⁶¹:

«Մեկ հայ՝ մեկ ոսկին» վերածվեց հայահավաք մի շղթայի, որը տարածվեց Օսմանյան կայսրության ողջ տարածքում ու նաև Կովկասի որոշ հատվածներում և առավել կազմակերպված դարձավ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Եթե սկզբնական շրջանում՝ 1916-1917 թթ., որբահավաք գործունեությունը

⁵⁸ Ռուբեն Հերյան (1868/1869-Հրո գյուղ (Կովկաս)-1921, Կահիրե) - հայ որբախույզ: 1880-ական թթ. Հերյան ընտանիքը Թիֆլիսից տեղափոխվում է Թոքատ քաղաք (Սեբաստիայի նահանգ): 1883թ. Ռուբեն Հերյանը ավարտում է Թոքատի Ազգային վարժարանը, ապա մեկնում Նյու Յորք և զբաղվում ծխախոտի առևտրով: 1916թ. աշնանը նա անդամագրվում է Հայկական լեզեոնին և մեկնում Կիպրոս: Հայկական լեզեոնի տասնապետ (գաբոռալ) Ռ. Հերյանը, որը Պաղեստինյան ռազմաճակատում ակտիվորեն մասնակցում էր մարտական գործողություններին, ականատես է լինում սիրիական անապատներում ապաստանած հայ տարագիրների ողբալի վիճակին: Մանրամասն տե՛ս Պալմուրիս Եղոկիոյ Հայոց. Կերեքյան, պարսկական եւ ազգագրական Կերեքյանիներով, համադրում՝ Արշակ Ալաթյան, Կահիրե, 1952, էջ 1732: Ռ. Հերյանի որբահավաք գործունեության մասին մանրամասն տե՛ս Aleksanyan A., “Rescuing Armenian Women and Children after the Genocide: The Story of Ruben Heryan,” *The Armenian Weekly* <https://armenianweekly.com/2016/05/31/ruben-heryan/> (դիտվել է 10.01.2018 թ.):

⁵⁹ Մանրամասն տե՛ս Մելքոնյան Է., *նշվ. աշխ.*, էջ 99, 100:

⁶⁰ Նույն Կերեքյան:

⁶¹ Մանրամասն տե՛ս Խանումյան Գ., «Կ. Պոլսի «Ազգային խնամատարություն» կազմակերպության որբահավաք գործունեությունը 1919-1920 թվականներին», *Ցեղասպանագիտական հանդես 4(1)*, Երևան 2016, էջ 83-96:

ծավալում էր գլխավորապես Օսմանյան կայսրության ռուսական զորքերի կողմից օկուպացված տարածքներում, ապա զինադադարից հետո՝ 1918 թ., այն լայն թափով ծավալվեց նաև կայսրության հարավային և կենտրոնական հատվածներում: Սկսվեց նաև հայ կանանց և երեխաների ազատագրումն արաբական հարեմներից: Այս գործում մեծ ներդրում ունեցավ դանիացի միսիոներուհի Քարեն Եփփեն, ով 1921 թ. որպես Ազգերի լիգայի Առևանգված կանանց և երեխաների հանձնախմբի կոմիսար, իր որդեգիր զավակի՝ Միսակ Մելքոնյանի հետ ազատագրեց մոտ 2000 հայ՝ օգտագործելով «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը: Եփփեի հայահավաք գործունեությունը կոչվում էր «Փրկության Միսիոն» կամ «Ազատարար Միսիոն», իսկ պաշտոնապես՝ Մերձավոր Արևելքի մեջ Ազգերի դաշնակցության կանանց և մանուկների պաշտպանության գործ⁶²:

1926 թ. «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը որդեգրեց Հայկական կարմիր խաչը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության տարիներին ստեղծված և ծավալված որբահավաք աշխատանքների նպատակն էր մահմեդական գերությունից ազատագրել կոտորածներից մազապուրծ հազարավոր հայերի և փրկել անմարդաբնակ վայրերում ապաստանած խնամագուրկ որբերին վերահաս մահից: Որբահավաք աշխատանքների համար նյութական միջոցներն ապահովող կարգախոսի իրագործման հենց սկզբի ամիսներին՝ 1916 թ. օգոստոս-նոյեմբերին, «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդին հանգանակվեց շուրջ 200.000 ռուբլի, որով փրկագնվեց 11.000 մարդ: Չնայած հայ հասարակարգում մարդկանց առքովաճառքը երբևէ չի խրախուսվել, դեռ ավելին, մեր հասարակության համար խորթ են ստրկատիրական հասարակարգին բնորոշ դրսևորումները, այնուամենայնիվ ցեղասպանության տարիներին հայ հասարակության մեջ քաջալերվում էր մահմեդական ստրկությունից իրենց հայրենակցին փրկագնով ազատագրելը:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ «ՄԵԿ ՀԱՅ՝ ՄԵԿ ՈՍԿԻ»
ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Գոհար Խանումյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են հայոց պատմագրության մեջ ոչ խորքային ուսումնասիրված երևույթի՝ Հայոց ցեղասպանության տարիներին ձևավորված որբահավաք առաքելության առաջացման պատճառները, տարածքային և ժամանակագրական հարցերը, կազմակերպչական աշխատանքները: Որբահավաք աշխատանքների նպատակներն էին ազատագրել մահմեդական գերության մեջ պահվող բազմաթիվ հայ երեխաների, փրկել վերահաս մահից անմարդաբնակ վայրերում ապաստանած, ծնողազուրկ, խնամագուրկ երեխաներին:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, որբահավաք աշխատանքներ,

⁶² Քարեն Եփփեի հայանպաստ գործունեության մասին մանրամասն տե՛ս Չոլաքյան Հ., Քարեն Եփփե հայ գողգոթային և վերածնունդին հետ, «Արևելք» տպարան, Հալեպ, 2001: Տե՛ս նաև Macartney C. A., *Refugees, the Work of the League*. League of Nations Union, London, 1931.

որբախույզ, Սեբաստացի Մուրադ, Տոնապետ Լյուլեճյան, «Մեկ հայ՝ մեկ ոսկի», «մաուզլի» երեխաներ:

ON THE ISSUE OF FORMATION OF “ONE GOLD COIN FOR ONE ARMENIAN” MISSION DURING THE ARMENIAN GENOCIDE

Gohar Khanumyan

SUMMARY

The article presents the formation of an orphan rescue mission during the years of the Armenian Genocide, which is almost uninvestigated phenomenon in the Armenian historiography. The article discusses the reasons of emergence of the rescue mission, territorial and chronological issues, as well as organizational activities of the Mission. The goal of the orphan rescue work was to liberate the Armenian children held in the Muslim captivity, as well as to rescue from death the parentless, orphaned, children living in the uninhabited places.

Keywords: Armenian Genocide, rescuing orphans, orphan gatherer, Sebastatsi Mourad, Tonapet Lulejian, “One Gold Coin for One Armenian”, “Mowgli children”.

К ВОПРОСУ О ФОРМИРОВАНИИ МИССИИ «ОДИН АРМЯНИН-ОДИН ЗОЛОТОЙ» В ГОДЫ ГЕНОЦИДА АРМЯН

Гоар Ханумян

РЕЗЮМЕ

В статье обсуждается малоизученный в армянской историографии вопрос о формировании миссии спасения детей-сирот в годы Геноцида армян. Представлены хронологические аспекты, распространенность и организационная деятельность миссии. Целью спасательной операции для сирот было освобождение армянских детей, содержащихся в мусульманском плену, а также спасение от смерти осиротевших детей, проживающих в необитаемых местах.

Ключевые слова: Геноцид армян, спасение сирот, собиратель сирот, Себастаци Мурад, Тонапет Люледжян, «Один армянин-один золотой», дети-Маугли.

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ 1909Ի ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՄԱՍԻՆ Բ.*Միհրան Մինասեան***3**

Սահակ Քինյ. Մոմճեանի նամակը Անտիոքի որբերու եւ այրիներու անմխիթար վիճակին, անոնց բաժնուող նպաստներու եւ տիրող համընդհանուր թշուառութեան մասին

*Թիւ 2Ե**Անդիոք 17 Յուլիս 1909*

Գերապատիւ

Տէր Շահէ Վարդապետ Գասպարեան

Առաջ. տեղապահ հայոց Հալէպու եւ վիճակաց

Հալէպ

Գեր. հայր սուրբ

Յուլիս 11 թուակիրս կը հաստատեն: Ստացայ Ձեր 11 թուակիրն ալ որուն կը պատասխանեմ ստորեւ:

Ճիշդ է որ հոս մի քանի ստորին երիկներ եւ մի քանի խեղճ կիներ իրենց վախում եւ անօթութեան պատճառաւ մի քանի դէպքին սկզբնապատճառ թուրքերուն ի նպաստ վկայութիւն տուած են, սակայն բան մը որ մեծ կարեւորութիւն չունի, քանի որ իտարէի Էօրֆիէն¹ եւ կառավարութիւնը ու հիյլէթի թահգիզիյէն² իրենց ակնոցով կը դիտեն բոլոր գործերը, քանի չունենան հակակշիռ հոսանք մը իրենց առաջ: Ատանայի այդքան որոշ ճշմարտութիւնք ինչպէ՞ս խեղաթիւրուեցան թիւրք քննիչ մարմիններուն կողմանէ: Անդու թղթակցութիւններէն, անհամար քննութիւններէն վերջը հազիւ նոր կը յաջողի Յակոբ էֆ. Պապիկեան³ մը իրականութիւնը երեւան հանել:

¹ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ պատերազմական ատեան:

² Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ հարցաքննիչ ատեան, մարմին:

³ Ծնած է Էտիրնէ, 1856-ին: Աւարտած է տեղւոյն ազգային եւ ֆրանսական վարժարանները: Հետեւած է իրաւաբանական համալսարանի դասընթացներուն: Վարած է պետական բազմաթիւ պաշտօններ՝ Էտիրնէի եւ Պոսնիայի մէջ: 1891-ին հաստատուած է Կ. Պոլիս եւ գործած որպէս իրաւաբան: 1902-ին վերադարձած է ծննդավայր եւ 1908-ին ընտրուած է անդամ Օսմանեան Երեսփոխանական ժողովի: Անդամ էր «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» («Իթթիհատ վէ թէ-րազզը») թուրք ազգայնական կուսակցութեան:

Պապիկեան 19 Մայիս 1909-ին Օսմանեան խորհրդարանին կողմէ Եուսուֆ Քէմալ անուն երեսփոխանին հետ կոտորածներու մանրամասնութիւնները քննելու համար ղրկուած է Կիլիկիա: Կ. Պոլիս վերադարձին, Խորհրդարանին մէջ իր պատրաստած տեղեկագիրի ընթերցումի նախօրեակին, իթթիհատականներու կողմէ թունաւորուելով՝ մահացած է և տեղեկագրի ընթերցումը յետաձգուած, ապա նաև խափանուելով՝ յղուած է նախաքննիչ յանձնախումբին:

Կողմերուս գործերուն համար ալ հայ քննիչ Պապիկեան մը պէտք է, եկողը ձմեռ է, անթիւ գործեր, արագ գործել պէտք ունինք:

Որբանոցին գործը ձեռքերնիս է ու շարունակելի:

Յարդ Պէյրութ դրկուած է 37 որբուհի: 7 Հալէպ, Այնթապ 35 որբ 8ը որբուհի: Հոս մնացող որբուհիները ինչ պիտի ըլլան, որոնց համար եւ ատլի խորհիլ պէտք է որքան որբերուն մասին:

Վեհափառը որբախնամ մասնախումբ մը կազմեց որոնց մէջ կը գտնուին նպաստաբաշխ յանձնաժողովին կարեւորները, հետեւաբար վերջին յանձնաժողովը լուծուած կը համարուի:

Ֆրանսական հիւպատոսը⁴ տեսայ ու հարկ եղածը հաղորդեցի: Եկեղեցի-վարժատուն տունը վարձեցինք, տեղակալը վարձքին համար պիտի դիմէր կուսակալութեան, այսօր թագրիր մը պիտի տամ որուն վրայ պիտի ըլլայ դիմումը առ կուսակալութիւն, հաճեցէք դուք ալ դիմել: Վարձագին 11 ֆրանսական, մի քանի ոսկի ալ կարպետ եւայն ծախսոց համար պիտի պահանջենք եթէ ձեռքերնիս անցնի: Տեղակալին խօսքին համեմատ հոս իր քովը 8000 դահեկան պատրաստ կայ հայ տոներուն նորոգմանց համար, որ առ այժմ անկարելի կը թուի. հայեր իսպառ կը մերժեն իրենց արինւոյ տոները զետեղուի:

Եթէ կառավարութեան նպաստէն յուսահատինք, հոս Խոսրով աղայի⁵ քովը ի պահ դրուած 20 ոսկիէն պիտի վճարենք վարձուած տան վարձքը, յետ այնու մեր տրամադրութեան ներքեւ դրամի պէտք ունինք, անակնկալ ծախսոց համար, հեռագիր, գնուելիք անհրաժեշտ առարկաներ, գաղթող աղքատներուն ճամբու ծախք, իմ գիտեր երթելկութեան ծախք եւ այլն: Վեհափառը ինձ յանձնեց 5 ոսկի իմ անձնական ծախսոց համար, ասդին անդին կը վատնուի:

Քանի քանի [անձերու] հարցնելէ վերջ հազիւ հիմա ձեռքս անցաւ Յունիս 15 թուակիր մի նամակ Տ. Ներսէս հօր ուղղեալ Պատրիարքարանէն, որով կը յայտնէ թէ 100 լիւրա եկած է Տր. Մարթինին⁶, ի նպաստ կարօտելոց եւ պէտք է բաշխուի մասնախմբին գիտակցութեամբը ու միջոցաւ:

ու մնացած է հոն, առանց Խորհրդարանին մէջ կարդացուելու (Յակոբ Պապիկեան, *Արանայի Եղեռնը*, Կ. Պոլիս, 1919, թարգմանիչ Յակոբ Սարգիսեանի ծանօթութիւններէն, էջ 6-7, Վ. Գ. Զարդարեան, *Յիշատակարան*, Ա. հատոր, Կ. Պոլիս, տպագրութիւն Նշան-Պապիկեան, 1910, էջ 63-64):

Աւելի ետք 1913-ին, տպուած է տեղեկագրին ֆրանսերէն թարգմանութիւնը, իսկ 1919-ին՝ հայերէն թարգմանութիւնը *Արանայի Եղեռնը*. *Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի* խորագրով, (թարգմանիչ՝ Յակոբ Սարգիսեան, Կ. Պոլիս, 48 էջ):

Արժէ նշել, որ հոս հրատարակուող նամակին մէջ ակնարկութիւն կայ Պապիկեանի անձին և իր կատարած աշխատանքին մասին իր մահէն ընդամենը երեք օր առաջ:

⁴ Նկատի ունի Անտիոքի ֆրանսական հիւպատոս Միսիօ Ալպէր Բուդոնը (Բօդօն), որ միաժամանակ նախագահն էր կոտորածներէն ետք ստեղծուած տեղւոյն Նպաստից Յանձնաժողովին: Կոտորածներէն ետք, ան մօտ 75 վերապրողներ, երկու ամիսի չափ պահած է իր տան մէջ, կերակրած ու հոգացած է անոնց պէտքերը:

⁵ Նկատի ունի Անտիոքի ծանօթ ազգայիններէն Խոսրով աղա Միսաքեանը, որ 1909-ի կոտորածներէն ետք ստեղծուած տեղւոյն Նպաստից Յանձնաժողովին գանձապահն էր:

⁶ Նկատի ունի միսիոնար Տր. Ճան Ս. Մարթինը (Քանաւայի Փրինս Էտուարտ կղզի 1860-Գալիֆօրնիա 1939). անգլիախաչատալ: Բարձրագոյն ուսումը ստացած է Մոնթրէալի Մէլլի

Մինչդեռ երկու օր առաջ Ս. Մարթինին քովն էի, թայինաթին՝ մասին խօսակցեցայ, 100 լիրային խօսքն անգամ չըրաւ, այսօր նորէն կը տեսնուիմ: Կարծեմ ձմրան նեղ օրերուն կը պահէ եղեր:

Ժողովուրդէն մի քանի ընտանիք հագիւ տուն վարձելով տեղաւորուեցան, մնացեալք բոլորովին կարօտներ, երկու ընդարձակ բակերու մէջ եւ Մ. Մարթինին քովը թխմուած են⁸: Կառավարութեան նպաստը անձ գլուխ փոքրիկներուն 4 մեծերուն 6 մէթալիք 10 օրէ դադրած [է], խեղճերը փսիաթներ կը կրծեն: Մերկ ու առանց անկողնի եւ այլնի, ո՛ր պիտի յանգի այս խեղճութիւնը:

Տեղոյս «հիյլէթի թահգըգիլէն» կը փափաքի որ աշխատինք ու ցրուած հայերը իրենց տունները գետեղենք, թէեւ անօգուտ ու անկարելի սակայն քաղաքավարական փորձ մը պիտի ընեն իրենց հետը:

Ըստ իս եթէ յաջողցնենք, հայոց տունները ծախել կառավարութեան կամ տեղացիներուն, շատ մը վերքեր կը բուժէ: Այրիներ եւ որբեր իրենց ձեռքերը 50-100-150 ոսկիներ կ'ունենան, մեծաւ մասամբ գիւղացիներ են, կ'երթան գիւղերը իրենց ազգականներուն հովանաւորութեան ներքեւ, կալուած կը գնեն, եկամուտովը կ'ապրին եւ այս միջոցաւ իրենք զիրենք ալ յարմար ու գրաւիչ կերպով ամուսնութեան յարմար վիճակի մը դրած կ'ըլլան, դիւրաւ ամուսիններ կը գտնուի:

համայնարանէն, ապա վեց տարի պարապած է ուսուցչութեամբ: Աստուածաբանութիւն ուսանած է Նիւ Եորքի Աստուածաբանական Ճեմարանին եւ Մոնրէալի Բրէսպիթերիոն Գոլէճին մէջ: 1890-ին հրաւիրուած է Տարսոնի Սէյնթ Փոլ Գոլէճը որպէս ուսուցիչ: Երկու տարի վերջ, որպէս միսիոնար անցած է Հաճըն, ուր ունեցած է գնահատելի ծառայութիւն: Հիմնած է Մանչերու Բարձրագոյն Վարժարանը՝ Ակադեմիան, որբանոց եւ արհեստանոցներ: Առողջական պատճառներով կարճ ժամանակի համար վերադարձած է Ամերիկա, ապա՝ կրկին Արեւելք դառնալով՝ ծառայած է Այնթապի, Ուրֆայի, Ադէքսանդրիոյ եւ Հալէպի մէջ: Աւելի ուշ, նշանակուած է Հալէպ Նահանգի Մերձատր Արեւելքի Նպաստամատոյց հաստատութեան ընդհանուր վարիչ:

Պատուակալ անդամ ընտրուած է կիլիկեան կոտորածներէն ետք ստեղծուած Նպաստից Յանձնաժողովին: 1909-ի կիլիկեան կոտորածներէն ետք, 220 վերապրողներ մօտ երկու ամիս պահած է իր տան մէջ և կերակրած ու հոգացած է անոնց պէտքերը (Յակոբ Պ. Պօղոսեան, *Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը Եւ Շրջակայ Գօգան-Տաղի Հայ Գիւղերը*, Լոս Անճելըս, տպագրութիւն Պօզաճեան, 1942, էջ 389-390):

⁷ 1927-ին հանգստեան կոչուելով՝ վերադարձած է Միացեալ Նահանգներ:

Եզակին՝ թային: Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ ռոճիկ: Հոս գործածուած է պետական նպաստի իմաստով:

⁸ Թաւուզճեան քահանայ 19 Մայիս 1909 թուականի իր օրագրութեան մէջ Մադր Մարթինի տունը ապաստանածներուն մասին պատմած է հետեւեալ դէպքը. «Այսօր միայն ամէնէն ատելի ցաւ ազդող մէկ խնդիրը սա եղաւ: Մենք երկու քահանաներս [նկատի ունի իրեն ընկերակից Վահան Քինյ. Կիլիսլեանը] փիլոն եւ ժամագիրք առնելով Մըսթըր Մարթինի տունը գացինք, որպէսզի հոն ապաւինեալներուն երեկոյեան ժամերգութիւն մը ընենք եւ միսիթարական մը խօսինք: Մըսթըր Մարթին չարտօնեց զայն եւ արտասուելով վերադարձանք» (Թաւուզճեան, նշ. աշխ., էջ 19-20):

Այժմէն պատրաստել Հրանդ⁹ կամ Փառէն¹⁰ վարդապետը որ Օգոստոսի վերջերը հոս ներկայ գտնուի:

Հիմա Վեհափառէն որքանոցին մասին հեռագիր ստացայ Լազգըլէյէն պատասխանեցի թէ Հալէպ կամ Այնթապ բանալ որոշուեցաւ, ու Ձեզ (վարդապետիդ) մանրամասն գրած եմ:

Տեղակալը վերջապէս ստացաւ թայինի համար հեռագիր թէ ըստ առաջնոյն պիտի շարունակուի:

Իտարէի էօրֆիին երկու անդամ ալ եկաւ: Ոճրագործներուն անունները Պօլիս դրկուեցան: Նորեկներէն հայուն հետը տեսնուելու համար մարդ դրկեցի, ինք ըսած է ես քահանան կը գտնեմ ու պիտի տեսնուիմ ըսած է, տեղակալը տան վարձին համար կուսակալին¹¹ գրած է, հետապնդեցէք:

Այս վերջին տողերը նամակատունը գրեցի:

Ս. Քինյ. Մոմճեան

⁹ Նկատի ունի Հրանդ Վրդ. Կարոյեանը (ապա՝ Եղիշէ Արք. Կարոյեան): Ծնած է Խարբերդի Բարջանճ գիւղը 1873-ին: Աշխարհական անունով՝ Կարապետ: 1881-ին ընտանեօք տեղափոխուած է Ատանա, ուր ստացած է նախակրթութիւնը: 1884-1891 աշակերտած է Սոյո ժառանգաւորաց Վարժարանին: 1893-ին հեռացած է վանքէն եւ քանի մը տարի ուսուցչական պաշտօններ վարած է Ալեքսանտրէթի, Սիսի եւ Մերսինի վարժարաններուն մէջ: 1896-ին, որպէս յեղափոխական աքսորուած է Էտիրնէ: Ազատ արձակուելէ կարճ ժամանակ անց, կրկին ձերբակալուելով, դրկուած է Սոյո մայրավանք, արգելափակուած վիճակով: 1899-ին Սոյո մայրավանքին մէջ ձեռնադրուած է կուսակրօն քահանայ եւ նշանակուած Հալէպի առաջնորդական փոխանորդ: 1909-ին նշանակուած է կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ, իսկ տարի մը ետք, Սահակ Բ. Կաթողիկոսէն եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալով՝ վերանուանուած է Եղիշէ: Եղած է առաջնորդ Ատանայի (1920-1921), Կիպրոսի (1921-1928) եւ Կաթողիկոսական Փոխանորդ՝ Լիբանանի (1929-1940): 1940-ին, Կիլիկիոյ Պետրոս Սարաճեան Կաթողիկոսի վախճանումէն ետք, ընտրուած է Կաթողիկոսական տեղապահ:

Վախճանած է Պէյրութ, 6 Մարտ 1943-ին (Վահէ Հայկ, *Խարբերդ և Անտր Ոսկեղէն Դաշուր*, Նիւ-Եորք, 1957 (կազմին վրայ՝ 1959), էջ 1166, Սիսակ Յակոբ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ*, Ե. հատոր, Բ. տիպ, Պէյրութ, տպարան Համազգային, 1983, էջ 185-187):

¹⁰ Նկատի ունի Փառէն Եպսկ. Մեղքոնեանը: Ծնած է Այնթապի մօտակայ Էհնէշ գիւղը, 1873-ին: Նախակրթութիւնը ստացած է Այնթապի մէջ, ապա 1890-ին մեկնած է Արմաշի Վանք, ուր 1896-ին ձեռնադրուած է արեղայ, ապա դասաւանդած է նոյն վանքին մէջ մինչեւ 1898: 1902-էն սկսեալ, որպէս առաջնորդ, հոգեւոր հովիւ եւ կրթական մշակ, ծառայած է բազմաթիւ քաղաքներու մէջ՝ Սղերդ, Մարաշ, Պաղտատ, Կ. Պոլիս, Չորք Մարգպան, Ալեքսանտրէթ, Պէյրութ եւ այլն: Պարբերաբար աշխատակցած է հայ մամուլին: 1947-ին Կիլիկիոյ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանէն ստացած է եպիսկոպոսական գաւազան: Վախճանած է Երուսաղէմ, 21 Հոկտեմբեր 1957-ին (Պողարեան, նշ. աշխ., էջ 723-727, «Սուրիահայ Տարեցոյց», Ա. հատոր, Հալէպ, 1924, էջ 193):

¹¹ Նոյն թուականին, Հալէպի նահանգապետն էր Ռաշիտ Պէյ, որ պաշտօնը ստանձնած է 5 Հոկտեմբեր 1908-ին ու շարունակած է զայն մինչեւ 1909-ի Սեպտեմբերի վերջերը, երբ հալէպցիներու բողոքներուն վրայ պաշտօնանկ եղած է (محمد فواد عنتابي ونجوى عثمان, *حلب في مئة عام 1950-1850*, Բ. հատոր, Հալէպ, 1993, էջ 71, 79):

4

Սահակ Քինյ. Մոմճեանի նամակը Կ. Պոլսոյ Պատրիարքարանի
պատուիրականներուն Անտիոք ժամանելու նախապատրաստութիւններուն եւ
յարակից այլ հարցերու մասին

Ասորիոք 1909 Օգոստոս 10/23

Գերապատիւ

Տէր Շահէ Ծ. Վարդապետ Գասպարեան

Բարեջան առաջ. տեղապահ հայոց Հալէպու եւ վիճակաց

Հալէպ

Գերապատիւ Տէր

Ստացայ Ձեր Օգոստոս 8 թուակիրը: Սոյն թուականաւ իմ դրկածս ալ կը հաստա-
տեմ: Ամէնքս ալ ուրախ ենք պատրիարքական պատուիրակութեան գալստեան հա-
մար: Որոշեցինք զիրենք հիւրընկալել մեր սենեակը որպէսզի տեսնուելու, խօսելու
մօտէն առիթ ունենանք: Ձեր գերապատուութեան կողմանէ հարկ եղածները կը
խօսիմ երբ գան: Ցարդ չեկան: Գնել Ծ. վարդապետին¹² եւ ընկերոջը հոս գտնուե-
լովը շատ մը բարդ գործերուն լուծման առիթներ կ'ունենանք:

Ժառանգական եւ կալուածական խնդրոց կարգադրութեանց համար ժողովուրդը
մասնախմբիս դիմել կ'սկսէր, որոշած էինք գրել տեղակալութեան որ այս խնդիրները
Պատեւագական Ատեանին վերջանալէն վերջը մնան, ա'լ գրել հարկ չը մնաց
Ձեր սրբութեան նամակին վրայ որովհետեւ մեր փափաքած խորհրդատուները
կու գան արդէն: Մտադիր էի Ձեզ հրաիրել մի քանի շաբթուան համար, սակայն
առարկութիւննիդ կը գրէք արդէն: Իմ Ձեզի դրկած «Իֆատէներուն»¹³ Բ. մասն ալ
ստացած կ'ըլլաք, եթէ հոս անոնց պէտք պիտի ունենան երանի թէ առժամաբար
վերադարձնէիք անմիջապէս, որպէսզի քիչ ժամանակի մէջ ամփոփ ու անհրաժեշտ
գաղափարը առած ըլլային դիւրաւ:

Վեհափառին հայրական Ս. Աջերը կը համբուրեմ:

Յարգանք աղօթակից

Ս. քինյ. Մոմճեան

¹² Նկատի ունի Գնէլ Եպսկ. Գալէմբեարեանը (Կ. Պոլիս 1871-Կ. Պոլիս 1931): Նախակրթութիւնը
ստացած է Պալաթի Ազգ. Վարժարանէն: 1890-ին մտած է Արմաշի Դպրեվանք, ուր 1896-ին
Օրմանեան Պատրիարքէն արեղայ ձեռնադրուած է: Եղած է պատրիարքական փոխանորդ
Մուշի, ապա առաջնորդ՝ Սամսոնի եւ Սեբաստիոյ: Կեանքի վերջին տարիներուն դարձած է Գա-
տըզիդի (Կ. Պոլիս) քարոզիչ: Աշխատակցած է հայ մամուլին (Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեան, *Հայ
Հանրագիտակ*, Գ., Պուքրէշ, 1938, էջ 437):

¹³ Արաբական ծագումով թրքերէն՝ հարցաքննութեան ժամանակ տրուած յայտարարութիւն:

5

Սահակ Քհնյ. Մոմճեանի նամակը՝ Պատրիարքարանի պատուիրակներուն,
Անտիոքի կոտորածներու ընդարձակ տեղեկագրին եւ Պատերազմական
Ատեանին յղած ջարդարարներու ընդհանուր ցուցակին մասին

Անդիոք 1909 Օգոստոս 12/25

Գերապատիւ

Տէր Շահէ Ծ. Վարդապետ Գասպարեան

Առաջ. տեղապահ հայոց Հալէպու եւ վիճակաց

Հալէպ

Գերապատիւ Տէր,

Կը հաստատեմ Օգոստ. 10/23 թուակիրս, զոր աճապարանօք գրած էի որպէս պատասխան Ձեր 8/21 թուակրին, որով կ'աւետէիք թէ պատուական հիւրեր պիտի ունենանք, յանձին Գեր. Տէր Գնէլ Ծ. Վարդապետին եւ Խնդիր Սիմոն Էֆ.ին¹⁴ որոնց գալստեան կ'սպասենք ակնկառոյց: Այժմ հաճեցէք դուք հաղորդել իրենց, արկածեալ, ջարդ ու փշուր եղած անտիոքցի ազգայնոց յարգանքները ու սէրը եւ յոյսը:

Ուրախ ենք որ մեզմէ առաջ Ձեզի եկան Հալէպ այցելեցին: Կը փութամ ըսել որ տեղւոյս բոլոր դէպքերուն մանրամասն տեղեկագիրը Ձեզ դրկուած երկու տետրակներն են, ամէն ինչ, դէպքին նախապատրաստութիւնները, նախապատրաստողները, վարողները որո՞նք եղած են, կառավարութեան պաշտօնեայք, տեղացի ազդեցիկ անձնաւորութիւնք ո՞ր աստիճան մասնակցութիւն ունեցած են որոշ կերպով կը հասկցուին հոն: Մի խօսքով հոս գալէն վերջ դէպքին բոլոր պարագաները որոշ եւ մեկին կերպով ուսումնասիրելու համար այդ տեղեկագրութիւններէն յարմար ու դիւրին աղբիւր չկայ: Ուստի եթէ ժամանակ չունին հոն քննելու, թող հաճին քովերնին առնուլ այդ տեղեկագրութիւնները ու միասին բերել: Իսկ եթէ հոն թղթատեն մասնախումբով մը այդ ալ դուք եւ իրենք գիտեն:

Պատրիարքարանի հրահանգն ալ պատրաստ է:

¹⁴ Նկատի ունի իրաւաբան Սիմոն Խնդիրեանը: Ծնած է Կ. Պոլիս: Աշակերտած է Օրթոգիտի Սբ. Թարգմանչաց եւ Լուսաւորչեան վարժարաններուն, ապա աւարտած է տեղւոյն Իրաւաբանական վարժարանը: Երկար տարիներ եղած է Բերայի թաղական խորհուրդի անդամ, ազգային երեսփոխան, Ազգային Ժողովի վճռաբեկ ատեանի դատաւոր, Ուսումնական Խորհուրդի ատենապետ եւ այլն: Պոլսոյ Ազգային Պատրիարքարանին կողմէ Գնէլ Եպսկ. Գալէմքեաբեանի եւ իրաւաբան Կարապետ Այըճեանի հետ, կիլիկեան կոտորածներէն ետք գործուողուած է Կիլիկիա եւ Հալէպ, որպէս «Փաստաբանական Յանձնախումբ»ի անդամ: Մահացած է ծննդնավայրին մէջ, 24 Հոկտեմբեր 1922-ին (Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, ԺԹ. տարի, Վիեննա, տպագրութիւն Միսիթաբեան հարց, 1925, էջ 370):

Հոս ոճրագործներէն ոմանք ազատ կ'արձակուին, Պէլլանու¹⁵ միւֆթին¹⁶ բանտէն հանուեցաւ, ռեւէ մեկնութիւն մը չենք կրնար տալ ու չենք կրնար այժմէն քննադատել քննիչ մասնախումբը եւ Պատերազմական Ատեանը:

Սոյն անուանց ցանկը միասին բերած ու Պատերազմական Ատեանին յանձնած են:

Բէշ աղագատէ Օսման աղա¹⁷ որ Ֆուսըլլըյին¹⁸ մէջ խոճա Մընլա Մուսթաֆային տունը գտնուած 31 հայուն 27 սպաննած է իր հետեւեալ ընկերներով:

Մամուր Ուշաղը գարիյէլի Պաթթալ Աղագատէ Խալիլ աղա [Մամուր Ուշաղը գիւղացի Պաթթալ Աղագատէ Խալիլ աղա]:

Մամուր Ուշաղը գարիյէլի Իպիշ աղա գատէ Հասան աղա վէ օդուլարը [Մամուր Ուշաղը գիւղացի Իպիշ աղայի որդի՝ Հասան աղա եւ որդիները]:

¹⁵ Պէլլան՝ գիւղաքաղաք Կիլիկիոյ մէջ, Հալէպ նահանգի Հալէպ գաւառի Պէլլան գաւառակի կեդրոնը, Ալեքսանտրէթ քաղաքէն հարաւ-արեւելք, 13 քլմ. հեռաւորութեան վրայ: Կառուցուած է Ամանոսեան Լեռներու Պէլլանի կիրճին վրայ, որ շրջանի միակ լեռնանցքն է, ուրկէ պատմութեան ընթացքին անցած են բազմաթիւ աշխարհակալներու բանակներ: Պէլլանը որպէս տարանցիկ կեդրոն, իր կարեւորութիւնը մասամբ կորսնցուցած է 19-րդ դարուն, երբ մերձակայ Ալեքսանտրէթ քաղաքը դարձած է Հալէպի գլխաւոր նաւահանգիստը ու վերածուած՝ կեդրոնական քաղաքի:

Քաղաքը ունեցած է Սր. Սագիս եւ Սր. Աստուածածին անունով հայ առաքելական զոյգ եկեղեցիներ:

Յեղասպանութեան նախօրեակին ունեցած է 1791 հայ բնակիչ, մինչ ազգային վարժարանը 180 աշակերտ (Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'empire Ottoman a la veille du génocide*, Փարիզ, հրատարակիչ՝ ARHIS, 1992, էջ 350):

1909-ի կիլիկեան կոտորածներու ժամանակ, Պէլլանի շրջակայ հայաբնակ գիւղերու բնակիչները կրցած են փախուստ տալ ու ապաստանիլ Պէլլան, մինչ ամբոյսը մտնելով այդ գիւղերը այրած է գանդը: Պէլլանի շրջականները, Աթըզի մէջ, սպաննուած են չորս քրիստոնեաներ իսկ ճանաչարհներուն՝ երեք (Թէրզեան, նշ. աշխ., էջ 260-261):

1918-ի զինադադարին, հայրենի աւան վերադարձած են մօտ 600 վերապրողներ ու վերաբացած են դպրոց ու եկեղեցի: Աւանը 1939-ին, ֆրանսերօրք համաձայնագրով, Ալեքսանտրէթի ամբողջ գաւառին հետ Սուրիայէն խլուելով՝ բռնակցուած է Թուրքիոյ, որուն հետեանքով տեղւոյն հայերն ալ հեռացած են քաղաքէն:

¹⁶ Իսլամ կրօնապետ, որ իրաւասու է իսլամական օրէնքներու հիմամբ «Ֆէթվա» (վճիռ) արձակելու, մանաւանդ այնպիսի հարցերու շուրջ, որոնց մասին Քուրանը չէ անդրադարձած:

¹⁷ Քիլիսի առաջնորդական փոխանորդ Վահան Քինյ. Թովմասեանէն յղուած 11/24 Յուլիս 1909 թուակիր նամակի մը մէջ իր մասին ըստած է հետեւեալը. «Ֆասըլլըն այրեացաւ երեսը Բէշ աղա Զատէ Օսման աղան, Էրզինէն թէւ արձակուել էր իբր անպարտ, սակայն Հալէպէն քաջուած մի հեռագրի վրայ կրկին բանտարկուած է, չենք գիտեր, կրկին արձակուելու պայմանաւ թէ ոչ, իսկ տրա համախոհները այսինքն գՖասըլլըն կործանելու միջոցին միասին գործող եւ խեղճ հայ ժողովուրդը ջարդող ... [կու տայ ութը չարագործներու անուններ] արձակ համարձակ՝ հոս կը պտըտին աշար [տասանորդի տուրք] առնելու պատրուակաւ...» (Միհրան Մինասեան, *Ասրիպ Փասարաթոյթեր Կիլիկեան Կոյորածներու Օրերուն Քիլիսի Հայութեան Բրաւիճակին Մասին*, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր 37, Պէյրութ, 2017, էջ 520):

¹⁸ Ֆուսըլլը կամ Ֆասըլլը կամ Էյրի Պուճափ՝ հայաբնակ գիւղ Ատանա նահանգի Եարփուզ գաւառի Էրզին գաւառակին մէջ, Չորք Մարգպանէն 10 ժամ արեւելք: 1909-ին ունեցած է 20 տուն հայ, որոնցմէ 1909-ի կոտորածներէն ետք մնացած է 10 տուն միայն, իսկ միւսները գաղթած են Չորք Մարգպան: Դէպքին հետեւանքով գիւղը ունեցած է 9 այրի (Մայապալեան, նշ. աշխ., էջ 75):

Ըստ այլ աղբիւրի, 1909-ին ան ունեցած է 15 հայ ընտանիք՝ մօտ 100 անձ: Թուրք խուժանը գիւղ մտնելով այրած է հայերու բոլոր տունները, սպաննած է 60 և կրօնափոխ ըրած է 15 ուրիշներ (Միմոնեան, նշ. աշխ., էջ 125):

Մամուր Ուշադը գարիյէլի Իպիշ աղա գատէ Պէքիր աղա, կողոպտուն ալ Հալէպ ծախած է:

Մամուր Ուշադը գարիյէլի Ճավհա աղա գատէ Օսման աղա:

Մամուր Ուշադը գարիյէլի Խէճտէնինն օղլու Իպրահիմ Գըրըզ Խան Մարտիկին տղան սպաննած է¹⁹:

Օմար Ուշադը գարիյէլի Մըթաֆա Պիլէլ օղլու Ապտո [Օմար Ուշադը գիւղացի Մըթաֆա Պիլէլի որդի Ապտո]:

Քուրրէ գարիյէլի [Քուրրէ գիւղացի] Զէյն Քէլինին օղլու Հայտար:

Պէօկիթ գարիյէլի Զէյն Ալինին օղլու Շըխօ²⁰ [Պէօկիթ գիւղացի Զէյն Ալիի որդին Շըխօ]:

Քուրրէ գարիյէլի Պելիրէշ գատէ Ահմէտ աղա վէ օղլու Օսման աղա [Քուրրէ գիւղացի Պելիրէշի որդի՝ Ահմէտ աղա եւ որդին՝ Օսման աղա]:

Ղարըխանը գարիյէլի [Ղարըխան գիւղացի] Հասան աղա գատէ Խէլիլ աղա Ֆասըլլը [ի] առաջին մարդասպանը:

Ղարըխանը գարիյէլի Մահմուտ աղա գատէ Հասան աղա:

Ղարըխանը մըխթարը [Ղարըխանցի գիւղապետ] Պելօ Էսմէ Նանօ:

Շէյխ Օմար աղա, պիրատերի [եղբայրը] Հասան աղա:

Զէքի Օպասը գարիյէլի շէյխ Իսմաիլ գատէ Օսման աղանըն մախտումու Խէլիլ աղա [Զէքի Օպասը գիւղացի շէյխ Իսմայիլի որդի՝ Օսման աղայի որդի՝ Խէլիլ աղա]:

Զէքի Օպասը գարիյէլի հաճի Ահմէտ աղանըն մախտումլարը Րէշիտ վէ Հաննան աղալար [Զէքի Օպասը գիւղացի հաճի Ահմէտ աղայի որդիները՝ Րէշիտ եւ Հաննան աղաներ]:

Չագալլը²¹ գարիյէլի Ազիզիյէ նահիյէսինտէ Պէքիր աղագատէ Մամատ աղա-

¹⁹ Քիլիսի առաջնորդական փոխստորդ Վահան Քինյ. Թովմասեան 11/24 Յուլիս 1909 թուակիր նամակի մը մէջ ըսած է, թէ «Գըրըզ Խանը մոխիր դարձնողներէն» Իպրահիմ Խէժտիին, ուրիշ քանի մը ոճրագործներու հետ «ի Քիլիս կը շրջագային, ո՛չ հարցնող կայ եւ ո՛չ փնտռող». ապա աւելցուցած է, թէ յիշեալ Իպրահիմը Գըրըզ, Խանի մէջ, Մարտիկ Խանճեանի տղան սպաննելէ ետք՝ գողցած է անոր մօտ գտնուած դրամը եւ կարի մեքենայ մը «որ տակաւին իր տունը կը մնայ եղեր» (Մինասեան, *Ասորիկ Փաստաթուղթեր...*, էջ 521):

²⁰ Քիլիսէն, Վահան Քինյ. Թովմասեանէն՝ Հալէպի առաջնորդական տեղապահ Շահէ Վրդ. Գասպարեանին յղուած 30 Յունիս/12 Յուլիս 1909 թուակիր նամակի մը մէջ ըսուած է թէ՝ «Պօկաթ գիւղացի Քէլ Ալիի որդի Շըխօ եւ Գուրէ գիւղացի Հայտէր պինի Միւլէյման անուն երկու մահմետականներ» Ալի անունով թուրքի մը յայտնած են, թէ «Ֆասըլլըն այրեցինք, մարդիկը սպաննեցինք եւ գտնուած գոյքերն ու անասունները յափշտակեցինք»: Նոյն Ալին, աւելի ետք, գացած է յիշեալներուն գիւղը եւ տեսած 60-70 ի չափ յափշտակուած անասուններ: Այս մանրամասնութիւններուն հետ, տեղւոյն կառավարիչին տուած է յիշեալ դէպքերուն ծանօթ քանի մը վկաներու անուններ, եւ հակառակ այս բոլորին, կառավարութիւնը զանոնք ձերբակալելու ուղղութեամբ որեւէ գործնական քայլի չէ դիմած (Մինասեան, *Ասորիկ Փաստաթուղթեր...*, էջ 523):

²¹ Կամ՝ Չագալլու: Գիւղ Մարաշէն հիւսիս-արեւմուտք, անկէ ոչ շատ հեռաւորութեան վրայ: Տեղի թուրքերը 1909-ին նախ սպաննած են Ատանա մեկնող եւ իրենց գիւղը իջեւանած 34 յարբերդցի հայ վաճառականներ, ապա՝ զանազան շրջաններէ հոն եկած եւ օրապահիկով աշխատող աւելի քան 200 հայ բանուորներ: Նոյն գիւղի խումբանը յարձակած եւ բազմաթիւ հայեր կոտորած է նաեւ մօտակայ Քիշիֆիլի, Չագըր Օղլու, Ֆընտըճագ եւ Տէրէ Գէօյ հայաբնակ գիւղերուն մէջ (Միմնեան, էջ 156-157):

նրն օղլու սէօյիտ օպալը Ալի պէյ Ֆասըլը վէ էյրիպուճագ²² գաթիլլէրի [Չագալլը գիւղացի Ազիզիէի գաւառակէն Պէքիր աղագատէ Մամատ աղայի որդի՝ Սէօյիտ Օպալը գիւղացի Ալի պէյ, Ֆասըլլըի եւ էյրիպուճագի ոճրագործները]:

Յիշեալ անունները Արժ. Տ. Վ. քինյ. Թովմասեանն ալ գրած ըլլալու է Ձեր [Ձեզ] եւ Աւետիս էֆ. Սիւլահեանը²³ լաւ կը ճանչնայ թէ անձինքը եւ թէ արարքը:

Որքանոցին ալ կարգադրութիւնները հոն կ'ընէք ալ:

Աղօթակից
Ս. քինյ. Մոմճեան

6

Սահակ Քինյ. Մոմճեանի նամակը Պատրիարքարանի պատուիրակներու

Անտիոք ժամանումի ծրագրին եւ հոն հիմնուելիք որքանոցին մասին

1909 Օգոստոս 14/27 Ասպիոք

Համար 29

Գերապատիւ

Տէր Շահէ Ծ. Վարդապետ Գասպարեան

Բարեջան Առաջ. տեղապահ հայոց Հալէպու եւ վիճակաց

Հալէպ

Գերապատիւ Տէր

Կարծեմ զոջացաք ինձ գրելով թէ ընդարձակ եւ միշտ գրեմ Ձեզ: Այնքան կը գործադրեմ Ձեր հրամանը որ թերեւս ժամանակ չէք ունենար կարդալ գրածներս ու ձանձրոյթ կ'ըզգաք, հոգ չէ ինձ համար, կը ջանամ պակաս չը թողոյ տեղեկութիւններս, եթէ աւելորդ կէտեր ալ գրած ըլլամ վնասակար չեմ տեսնար, միայն կը ջանամ լիովին տեղեկացնել Ձեր սրբութիւնը եւ խորհրդակիցներդ, որպէսզի ըստ այնմ հրահանգէք զիս այժմ ինձ յանձնուած պարտականութիւնս կատարելու:

Պատրիարքական պատուիրակութեան կողմէդ մեկնիլը կը հաճի՞ք հեռագրաւ հաղորդել մեզ, որ ըստ այնմ մեր սենեակները իրենց վայել ձեւի մը կարենանք

²² էյրիպուճագ՝ հայաբնակ գիւղ Ատանա նահանգին մէջ, որուն բնակիչները հայեր էին մինչեւ 1920: Անոնք 1909-ին ենթարկուած են ահաւոր կոտորածի (*Հայաստանի եւ Յարակից...*, Բ., էջ 342):

²³ Բնիկ քիլիսցի: Ծնած է 1860-ական թուականներուն: Շրջան մը ապրած է Հալէպ: 1909-1913 որպէս փորձառական փաստաբան, գործած է ծննդավայրին մէջ (Համբարձում Պէրպէրեան եւ Խորէն Աւագ Քինյ. Ներսէսեան, *Յուշամնարեան Քիլիսի Հայոց*, հրատարակութիւն Հալէպի եւ Պէյրութի Քիլիսի հայրենակցական միութիւններու, Պէյրութ, տպարան Սեւան, 1969, էջ 249 եւ 476):

վերածել: Իսկէնտերուն²⁴ Արժ. Տ. Գրիգոր²⁵ հօր հեռագրած էի որ մեզ հեռագրաւ իմացնէին պատուիրակութեան մեկնիլը, մէյ մ'ալ Ձեր գերապատուութենէն լսեցինք թէ Հալէպ մեկնած են: Պէյլանէն ալ կը գրէին:

Երբ հոս հասնին անմիջապէս կ'սկսինք որբանոցին հիմնարկութեան եւ որբերը ժողովել կը մեկնիմ շրջականները: Մասնախումբն ալ կը հսկէ գործերուն: Մենք ալ որբ գլուխ գրեթէ 5 ոսկի հաշուած էինք: Անշուշտ տեսուչն եւ հարկ եղած կրթական պաշտօնեաները միասին կը դրկէք, քանի որ հոս երբեք չը կայ: Պ. Աւետիս Ապագանը կայ տեղոյս նախկին դասատուն (խոստովանանք) երբեք յարմար չէ եւ չը կրնար օգտակար ըլլալ: Միմիայն եկեղեցական երգեցողութեան կրնայ ծառայել:

Աղօթակից
Ս. քինյ. Մոմճեան

²⁴ Իսկէնտերուն, հայկական անուանումով՝ Ալեքսանտրէթ: Պատմական քաղաք Միջերկրական ծովու հիւսիս-արեւելեան ափին, Հայոց ծոցի վրայ: Կիլիկեան հայոց թագաւորութեան ժամանակ շրջան մը մաս կազմած է հայկական պետութեան, իսկ ուշ միջնադարուն՝ եղած է Հալէպի գլխաւոր նաւահանգիստը:

1902-ին ունեցած է 125 տուն հայ եւ 100-150 պանդուխտ քեսապցի բնակիչներ: Տեղոյն հայերը ունեցած են եկեղեցի մը եւ 60 մանչ եւ 45 աղջիկ աշակերտներով զոյգ վարժարաններ (Մինասեան, *Պարմական Անդիպ...*, էջ 23): 1913-ին քաղաքը ունեցած է 4500 հայ բնակիչ, Սր. Քառասուն Մանկունք եւ Սր. Խաչ հայկական եկեղեցիները եւ 4 վարժարան (*Հայաստանի եւ Յարակից...*, Ա., 1986, էջ 75), մինչ այլ աղբիւր մը՝ 1914-ին տեղոյն հայերու թիւը ցոյց տուած է որպէս 1950 անձ, որոնք ունեցած են Սր. Աստուածածին եկեղեցի եւ 150 աշակերտ ունեցող ազգային վարժարան (Kévorkian-Paboudjian, նշ. աշխ., էջ 350):

Համաշխարհային Առաջին պատերազմի զինադադարէն ետք, կարճ ժամանակով, շրջանը գրաւած են անգլիացիք, ապա՝ ֆրանսացիք, իսկ 1920-ին ան մտած է Սուրիոյ կազմին մէջ մինչև 1939, երբ ֆրանսերթքական համաձայնագրով, ամբողջ գաւառակին հետ, Սուրիայէն խլուելով՝ բռնակցուած է Թուրքիոյ:

²⁵ Նկատի ունի Ալեքսանտրէթի առաջնորդական փոխանորդ Տէր Գրիգոր Քինյ. Մինասեան-Պօղոսեանը: Ծնած է Չմշկածագ 1860-ին: 1871-ին գաղթելով Հալէպ, յաճախած է տեղոյն Ազգային վարժարանը, զոր ասարտած է 1874-ին, ապա մեկնած է Երուսաղէմ ու հետեւած Ժառանգաւորաց վարժարանի դասընթացներուն: 1880-ին ասարտել է ետք զայն՝ անցած է Ալեքսանտրէթ, ուր շրջան մը աշխատած է որպէս քարտուղար, ապա 1889-ին մտած է ուսուցչական ասպարէզ:

1903-ին Սոյո մայրավանքին մէջ ձեռնադրուած է քահանայ: 1915-ին աքսորուած է Հալէպ, ուր շրջան մը ծառայած է տեղոյն աքսորականներուն, ապա՝ ինք ևս ճամբուած է սուրիական անապատ: Զինադադարէն ետք, վերադարձած է Ալեքսանտրէթ և շարունակած է վարել տեղոյն առաջնորդական փոխանորդի պաշտօնը, մինչև իր վախճանումը՝ 1938 (Հայկազն Գ. Ղազարեան, *Պարմագիրք Չմշկածագի, Պէյրութ, տպարան Համազգային, հրատարակութիւն Չմշկածագի Հայրենակցական Միութեան, 1971, էջ 523-524, Սեդրակեան, նշ. աշխ., էջ 64-69):*

7

Մեսրոպ Քհնյ. Աֆարեանի նամակը Անտիոքի որբերուն, այրիներուն եւ տիրող
համատարած թշուառութեան մասին

Աւարիոք 9 Յունուար 1910

Գերաշնորհ

Տ. Շահէ Ծ. Վարդապետ՝ արժանընտիր առաջնորդ²⁶ հայոց
Հալէպի եւ վիճակաց

Ի Հալէպ

Ա. ծնունդը շնորհաւորելով՝ կար ու կարողութիւն կ'մաղթեմ Ձեր սրբութեան:
Կիլիկիոյ Ա. Կաթողիկոսին բարձր հրամանաւ Կիւրինէն²⁷ Անտիոք եկած եմ տեղւոյս
դժբաղդ հայութիւնը մխիթարելու համար: Ինչ որ տեսայ չեմ կրնար գրչով պատմել:
Վայրենամիտ եւ անուպայ անգթութիւնը աներեր, կոտորեր եւ ոչնչացուցեր է ամեն
բան, ու հիմա հանգիստ նստած է: Սիրտս չ'դիմանար, երբ կ'տեսնեմ որբուկներ որք
կու լան աղեգալար իրենց հայրիկը, մանկամարդ քօղածածուկ հարսներ որք հազիւ
նոր ելած կուսական ամբիժ որսկապանէն, կու լան իրենց փեսայն սիրելի, մայրեր
որք կ'կանչեն իրենց սրտահատոր զաւակները, վերջապէս ո'ր մէկը պատմեմ,
արդէն ականատես եղած էք սրտաճմլիկ տռամին: Մխիթարեցի, յուսադրեցի
խեղճերը: Ա. Ծ'նունդի առթիւ այցելեցի ամենուն ալ որք ցրուած են այլեւայլ տե-
ղեր, բայց ո՛վ կրնայ չոր ու ցամաք բառերով մխիթարել ասոնք, մարել այրած
սիրտերու անհուն բոցը, որովհետեւ այս անգամ ալ անօթութիւնը կ'սպառնայ այս
հոգեվարներուն: Քաղցի սոսկալի ուրուականը մոռցնել կու տայ սիրելիներու կո-
րուստը: Կառավարութիւնը ժամանակ մը օրական հացագին տուեր է, բայց հիմա
դադրեցուցեր է: Գայմագամ վէքիլին²⁸ Հալէպի կուսակալին հեռագրեր է, չենք գի-

²⁶ Շահէ Վրդ. Բերիոյ Թեմի առաջնորդը չէր, այլ՝ առաջնորդական տեղապահը:

²⁷ Կիւրին՝ հայաբնակ քաղաք Պատմական Փոքր Հայքի մէջ, Սեբաստիա նահանգի Սեբաստիա գաւառի Կիւրին գաւառակի կեդրոնը, Սեբաստիա քաղաքէն հարաւ-արեւելք, անկէ մօտ 55 քմ. հեռաւորութեան վրայ: Քաղաքը ծանօթ էր իր արտադրած գորգերով եւ իր անունը կրող գեղեցիկ շաւերով: Տեղւոյն հայութիւնը մարդկային եւ նիւթական մեծ կորուստներ ունեցած է համիտեան կոտորածներու ժամանակ:

Կիւրինի առաքելական հայերը ունեցած են 4, անետարանականները՝ 3 եւ կաթողիկոսները՝ 2 եկեղեցի, իսկ քաղաքին մօտերը գտնուած են պատմական երկու վանքեր՝ Սբ. Թորոս եւ Սբ. Յակոբ: Անոնք միասնաբար ունեցած են 8 դպրոց, բարեսիրական եւ մշակութային քանի մը միութիւն, որբանոց եւ այլն:

Տեղւոյն հայերը կազմած են քաղաքի բնակչութեան ջախջախիչ մեծամասնութիւնը: Ըստ Գաբրիէլեանի, ցեղասպանութեան նախօրեակին, Կիւրինը ունեցած է 2000 հայ տուն՝ 14000 բնակիչ (Գոմիկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբրիէլեան), *Եղեռնապապարում*, Պոսթըն, տպարան «Հայրենիք»-ի, հրատարակութիւն Ամերիկայի «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան», 1924, էջ 601), ըստ Թէոդիկի, ան ունեցած է 1712 հայ տուն՝ 6920՝ առաքելական, 380՝ կաթողիկ, 600՝ անետարանական և 2500 պանդուխտ, ընդամենը՝ 10400 հայ (Թէոդիկ, *Գողգոթա Հայ Հոգևորականութեան Եւ Իր Հօտին Աղէտալի 1915 Տարին*, խմբագրեց՝ Արայ Գալայճեան, Նիւ Եորք, 1985, էջ 127):

²⁸ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ գայմագամի, գաւառակի կառավարիչի, գաւառակապետի փոխանորդ:

տեր թէ ի՛նչ պատասխան առաւ: Հա՛յր սուրբ, որո՞ւ պիտի դիմենք, ո՛ր դուռ պիտի զարնենք ասոնց հաց գտնելու համար: Պատրիարքարան հեռագրելով՝ անմիջական դարմանի պէտքը շեշտեցի: Անտիոքի հայութիւնը, ինչպէս գիտէք, բոլորովին փճացած է: Մնացորդ սոյն անբաղդ բեկորները ապրեցնել պէտք է, ձուլումէ եւ օտարացումէ փրկել հարկ է: Խօսեցէք, աղաչեցէ՛ք Վսեմ. Վալիին, որպէսզի գէթ ժամանակ մ'եւս շարունակուի կառավարական նպաստը:

Հայերը տակաւին հոս հոն ցանուցիր կ'ընակին: Իրենց տուները երթալ անտանելի կու գայ: Եկեղեցին գոց է, ամեն ինչ թալանուած է, գոնէ ձեռք մը պատարագի զգեստ եւ սկիւի մը հայթայթուէր ասոնց համար, որպէսզի Ս. Պատարագի հոգեւոր մխիթարութիւնը վայելէին:

Ողջ մնացողներ շատ քիչ են, կիներ միայն կան որք լալէն զատ ուրիշ բան չեն կրնար խորհիլ, ի՛նչ պիտի ըլլան ասոնք: Ամեն կողմէ վտանգը կ'սպառնայ ասոնց. պատուոյ վտանգ, կրօնափոխութեան վտանգ եւ մայրենի եկեղեցւոյ ծոցէն հեռանալու վտանգ: Պահել, պահպանել պէտք է ասոնք, ի՛նչ միջոցներով սակայն, շուրաւ մնացեր են, շուրջս ծովածաւալ թշուառութիւն, անհուն ցաւ, քովս եկողներ ընդհանրապէս կիներ են որք աչքերնուն մէջ վիշտի արցունքը ունին տխուր ու յուսաբեկ, այրեր անցելոյն տխուր փորձառութենէ զարհուրած՝ չե՛ն ուզեր քաջալերուիլ: Այս վիճակի մէջ յայտնի է թէ պէտք ունիմ Ձեր իմաստուն խորհուրդներուն եւ աջակցութեան: Աներկբայ եմ թէ Ձեր Գեր. Սրբութեան դիմումներս անարդին չ'պիտի մնան, այլ կարելին ՚ի գործ պիտի դնէք ՚ի մխիթարութիւն Անտիոքի տաւաբաղդ հայութեան:

Ընդունիլ հաճեցէք եղբայրական սիրալիր յարգանքս

Ամենախորին մեծարանքներով

Մեսրոպ քինյ. Աֆարեան²⁹

²⁹ Ծանօթ է նաեւ Խոցեան կամ Խոյեան մականունով: Կիւրինի Գարա-Տեփէ թաղէն: Ուսանած է ծննդավայրի Չատրճեան վարժարանին մէջ: Քահանայ ձեռնադրուած է 1895-ի համիտեան կոտորածներու նախօրեակին, Կիւրինի Չախճոր թաղի Սր. Փրկիչ եկեղեցւոյ վրայ ու վարած է տեղւոյն առաջնորդական փոխանորդի պաշտօնը: 1909-ին, իր շնորհիւ, Կիւրինի մէջ կարելի եղած է առաջքը առնել կոտորածի կրկնութեան:

1910-ի Յունուարէն-Մարտ, քահանայագործած է Անտիոք ու մեծապէս օգտակար եղած է տեղւոյն աղէտեալ որբերուն եւ այրիներուն: Շրջան մը քահանայագործած է Ագսարայ, իսկ 1915-ի գարնան տեղափոխուած է Տէնէք Մատէն (Կեսարիոյ շրջան): Կարճ պաշտօնավարութենէ մը ետք նահատակուած է իր 18-ամեայ զաւակին՝ Գեղամին հետ: Եղած է խիստ աշխատասէր և գործունեայ եկեղեցական մը: Կը պատմուի, որ ան այնքան հմուտ գրաբարագէտ ու այդ լեզուին սիրահար անձ մը եղած է, որ յաճախ իր շուրջիններուն հետ խօսած է գրաբարով և իր գրութիւններն ու նամակները անգգալաբար շարադրած է անով (Թէոդիկ, *Գողգոթա...*, էջ 336, Պետրոս Մինասեան, *Պարմագիրք Կիւրինի*, Պէյրութ, տպարան Սևան, հրատարակութիւն Կիւրինի հայրենակցական միութեան, 1974, էջ 258, 265, 393, 398, Արշակ Ալպոյաճեան, *Պարմութիւն Հայ Կեսարիոյ*, Գահիրէ, հրատարակութիւն Կեսարիոյ և Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութեան, տպարան Յակոբ Փափագեան, Բ. հատոր, 1937, էջ 2271, 2274):

8

Մեսրոպ Քինյ. Աֆարեանի նամակը Անտիոքի վերապրողներու թշուառ
վիճակին եւ հոն հիմնուելիք գորգի գործարանին մասին

Անտիոք 11 Փետրուար 1910

Գերաշնորհ

Տ. Շահէ Ծ. Վարդապետ՝ բարեջան առաջնորդ Հալէպի եւ վիճակաց

Ի Բերիա

Կ'հաստատենք անցեալ ամսոյ 30 թուականաւ մեր նամակը:

Ներսիակ կ'ըրկենք կանխաւ Ձեր գերապատուութեան ղրկած (10) տասը լիրային
բաշխեցոյցը՝ վաւերացուած մեր եւ տեղոյս Թաղական Խորհրդոյ կողմանէ:

Մեր կարօտելոց վիճակը անտանելի է: Նպաստները բոլորովին դադրած են:
Վերջերս Մր. Բիթի³⁰ կողմէ Իսքէնտէրուն, Մր. Քէնէտի³¹ ղրկուած (100) հարիւր
լիրան արհեստաւորաց համար է եղեր՝ ինչպէս հեռագրած էր մեզի Ս. Պատրիարք
հայրը:

Այրի կիներու վիճակը արդէն ծանօթ է Ձեր սրբութեան, ուրախ եւ շնորհակալ
ենք որ այս առթիւ հիմնական կարգադրութիւն մ'ընել կ'խորհիք՝ գորգագործութիւնը
հոս մտցունելով: Յաջողութիւն եւ կարողութիւն կ'մաղթենք:

Ս. Պատրիարք հայրը 25 Յունուար թուական նամակով մը՝ կարծելով թէ այդ
արհեստը հաստատուած է տեղս, տեղեկութիւն ուզած էր մեզմէ: Պատասխանեցինք
թէ դեռ չ'հաստատուեցաւ: Նորին բարձր Սրբազնութիւնը մեզի եկեղեցական սպաս

³⁰ Նկատի ունի Վեր. Դոկտ. Ուիլիամ Բիթը՝ Ամերիկեան Պորտ ընկերութեան Կ. Պոլսոյ
մասնաճիւղի գանձապահն ու կիլիկեան կոտորածներու արկածեալներու նպաստող
Միջազգային յանձնաժողովի նախագահը (Ֆոր Բիվըր-Միացեալ Նահանգներ, 1851-Էլմըս-
Միացեալ Նահանգներ, 1942): Հետեւած է աստուածաբանութեան: Աշխատած է հարկային եւ
տնտեսագիտական կալուածներէն ներս: 1881-ին ստանձնած է Օսմանեան Կայսրութեան մօտ
Ամերիկեան Պորտի միսիոնարական կայաններու տնտեսական գործերու տնօրինութիւնը
ու մեծապէս օգտակար եղած է աղէտեալ հայութեան: Պաշտօնի վրայ մնացած է մինչեւ 1925,
երբ հանգստեան կոչուելով անցած է Միացեալ Նահանգներ: Կիլիկեան կոտորածներէն ետք,
Վեր. Հըրպըրթ Ալէնի հետ յոյս ընծայած է անգլերէն պրակ մը, ուր նկարագրած է պատահած
կոտորածը (Երուսաղէմ Հ. Քասունի, *Քննական Ակնարկ «Միշընների Հերլըր»-ի 1915-1918 թթ. Հայ
Ժողովուրդի Ցեղասպանութեան եւ Վերածնունդի Մասին Արձանագրած Վկայագրութիւններուն*,
Պէյրութ, 2012, էջ 251-255):

³¹ Մր. Քէնէտի՝ Սաղմոսական եկեղեցոյ ամերիկացի երէց: Կիլիկեան Կոտորածներու
ընթացքին իր տան մէջ ապաստան տուած է աւելի քան 200 հայերու եւ փրկած անոնց կեանքը,
իսկ Չորք Մարգարանի հայերու ինքնապաշտպանական մարտերու միջոցին, երբ քաղաքը
պաշարուած է թուրք մարդիկէն, Քենէտի՝ 500 օսմանցի զինուորներու ընկերակցութեամբ, եւ
որպէս ներկայացուցիչ Ալեքսանտրէթի 4 հիւպատոսներուն, մտած է քաղաք եւ գերմարդկային
ճիգերով կրցած է միջնորդել, քակել տալ պաշարումը եւ ցրուել հազարներու հասնող խուժանը՝
առանց հայերը զինաթափ ընելու նախապայմանին: Քենէտի Չորք Մարգարան մնացած է մինչեւ
քաղաքին մէջ վերջնական անդորրի հաստատումը (Արշակունի Թէոդիկ, *Ամիս Մը 'Ի Կիլիկիա*,
Կ. Պոլիս, տպագրութիւն Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան, 1910, էջ 188, Թէրզեան, նշ. աշխ., էջ 332):

և գիրք ղրկել խոստացած էր: Անշուշտ եմք որ չէ՞ք մոռնար Անտիոքի տարաբաղդ ժողովուրդը: Համբուրի Ս. Աջոյդ

Ամենախորին յարգանքներով
Մեսրոպ քինյ. Աֆարեան

9

Ներսէս Քինյ. Թաուզճեանի նամակը Անտիոքի վերապրողներուն
բաժնուելիք նիւթական նպաստին մասին

1910 Յուլիս 14 Անտիոք

Գերապատիւ

Տէր Շահէ Ծ. Վ. Գասպարեան

Առաջն. տեղ. Հալէպի հայոց եւ վիճակաց

Հալէպ

Գեր. Ս. հայր,

Նամակիս մէջ յիշելու մոռցած եմ սա կէտը թէ, հեռագրին մէջ ութ հարիւր լիրայի խօսք մը կայ որով այրիները եւ որբերը ապրեցնելու միջոցի մը վրայ կ'հարցուի: Այս դրամը լոկ անօգնական մնացած այրիներու համա՛ր է, թէ բոլոր արկածեալներու հաւասարապէս պիտի բաշխուի: Ուրիշ բան մը: Այս ութը հարիւր լիրան Անտիոքի համա՛ր է, թէ Սուէյտիոյ գիւղերէն հոս Անտիոքի պարտէզներու մէջ ջարդուող ու թալանուող մարդիկ եւ անոնց այրիները ու որբերն ալ բաժին պիտի առնեն: Դարձեալ, որբանոցներու մէջ կամ այլուր խնամուողներ ալ հաշուի պիտի առնե՛ն թէ ոչ, այս բոլորի մասին տեղեկութիւն եւ կատարեալ հրահանգ մը ղրկեցէք:

Մնամ յարգանօք

Ներսէս քինյ. Թաւուզճեան

10

Վաղարշակ Քինյ. Ճէրրահեանի նամակը դատապարտուած ջարդարարներու
բանտէն արձակման եւ այրիներու թշուառ վիճակին մասին

Անտիոք, 25 Դեկտեմբեր 1910

Գերաշնորհ

Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեան

բարեխնամ առաջնորդ Անտիոքի վիճակին

Հալէպ

Մաքրակրօն Ս. հայր,

Գերապատուութեանդ Դեկտեմբեր 18 ամսաթիւ պատուականն ստացայ գո-
հութեամբ եւ տխրութեամբ:

Ն. Ս. Օծութեան կեանքն ու արեւշատութիւնը կը մաղթեմ մեր Վեհ. Ս. Կաթո-
ղիկոսին եւ Ձեզ³²:

³² Ակնարկութիւնը կ'երթայ Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Մատթէոս Բ. Իզմիրլեանի վախճա-
նումին, որ պատահած էր ընդամենը քանի մը օր առաջ, 11/24 Դեկտեմբեր 1910-ին:

Տերը ձեզի երկար օրեր պարգևեւ, ամէն:

Ներփակ նամակները եւ պաշտօնագիրները ապահովապէս իրենց տեղերը դրկեցի:

Սահակ էֆէնտին³³ հոս է, իրեն հետ խորհրդակցեցայ եւ Հաճի-Հապիալի³⁴ գրեցի, ստանալու պէս Ձեզի կը դրկեմ:

Բանտարկելոց նկատմամբ խոստացած էի տեղեկութիւններ մը տալ:

1 - Շէյխ գիւղացի Գոլճը օղլու Ապտիւսսէմաթ, 18-20 տարեկան, միւլայպէտ³⁵ եղած ատեն 14-15 տարեկան է ըսելով հանրագրութիւն պատրաստել եւ արձակել տուեր է:

2 - Հիւանդանոցէն փախչող անտիրքի եօրդանճի օղլու Հավրան, ոչ փնտռող կայ ոչ խնդրող:

3 - 3 հատ նախկին դատապարտեալներ էօրֆիլէէն, որոնք ալ ձերբակալելու ոչ մէկ փորձ եղած է, իսկ հիմա Անտիրքի բանտէն 13 անձինք արձակուեցան, որոնցմէ 3ը 101 տարուան դատապարտուած էին:

1 - Տէօրթ Աեագ մահալլէսինտէն ֆէլլահ քինէֆէճի տէլի Սաիտ [[Անտիրքի] Տէօրթ Այագ թաղէն քինէֆէ [անուշեղէնի տեսակ մը] պատրաստող գիւղացի խենթ Սայիտ]:

2 - Տէօրթ Աեագ մահալլէսինտէն նաճար Կէնճօնըն օղլու նաճար Իզզէթ [[Անտիրքի] Տէօրթ Այագ թաղէն աստղճագործ Կէնճոյի որդի աստղճագործ Իզզէթ]:

3 - Սաչլը գարիլէսինտէն թիւրքմէն աղալարընտան Մուհամմէտ [Սաչլը գիւղէն թուրքմէն աղաներէն՝ Մուհամմէտ]:

Տեղոյս մէջ պատրաստուած հանրագրութիւնները, կը լսենք թէ կ'ստորագրէ եղեր յունաց մըլսթարը:

Վերջին անգամ երբ 13 անձինք արձակուեցան, Տէօրթ Աեագէն Գասսապ Իսկէնտէր եւ Հէօսիյն նոյն իրիկունը մեր ժողովուրդէն Պօղոս Գազանճեանի տունը

³³ Հաւանաբար նկատի ունի Անտիրքի ազգայիններէն՝ քնիկ քեսապցի Սահակ Արամեանը, որ եղած է Անտիրքի հեռագրատան ցրուիչ, ապա պարապած է վաճառականութեամբ: 1915-ին աքսորուած է Սուրիոյ Համա քաղաքը, ուր եղած է գիտութեան մթերանոցի պետ: Այդ միջոցին, մէկէ աւելի ատիթներով նիթապէս օգնած է թշուառութեան մէջ գտնուող Ներսէս Քինյ. Թաուոզճեանին եւ բազմաթիւ այլ կարօտեալներու (Թաուոզճեան, նշ. աշխ., էջ 141 (ուր սխալմամբ յիշուած է Սահակեան մականունով), 147):

Ջինադադարին վերադարձած է Ալեքսանտրէթ, իսկ 1923-ին ընտանեօք անցած է Գահիրէ, ուր եւ մահացած է 1936-ին:

³⁴ Մուսա Լեբան հայաքնակ գիւղերէն, որ ըստ Մովսէս Վրդ. Ոսկերիչեանի 1911-ի մարդահամարին, ունեցած է 293 հայ տուն՝ 1366 բնակիչ (Գուշագճեան-Մատոտեան, նշ. աշխ., էջ 850):

Ըստ այլ աղբիւրի, 1912-ին ունեցած է 300 հայ տուն, որուն 6-ը՝ աւետարանականներ, իսկ մնացեալները՝ առաքելականներ (Սայապալեան, նշ. աշխ., էջ 9):

Մեծ Եղեռնի օրերուն, գիւղի բնակիչները մեծամասնութեամբ բարձրացած են Մուսա Լեռ եւ յաղթական հերոսամարտէն ետք՝ փրկուելով ապաստանած են Փոր Սայիտ (Եզիպտոս):

Գիւղը ունեցած է Սր. Աստուածածին եւ Սր. Տալիլա անունով զոյգ եկեղեցիներ եւ երկու վարժարան: Հաճի Հապիալին եւս, 1939ին, Ալեքսանտրէթի շրջանի Թուրքիոյ բռնակցումով, Սուրիայէն իլուելով՝ կցուած է Թուրքիոյ:

³⁵ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ ցկեանս:

քարկոծած էին, այրիները ահ ու սարսափի մատնուած ինծի դիմեցին, զիրենք ապահովցուցի թէւ, սակայն գայմագամ պէյը 1 ամսուան մեզունիյէթով³⁶ Պոլիս գնաց, զօրք ալ չկայ, որով իսլամ ժողովուրդը քիչ մը համարձակութիւն կ'առնէ, չըլլայ որ պէլայի³⁷ մը հանդիպինք:

Ահա այժմէն սոյն կէտը Գերապատուութեանդ բարձր նկատառման կը յանձնեմ:

Գանք այրիներու խնդրոյն, արդեօք ի՞նչ պիտի ըլլայ ասոնց վախճանը, վերջապէս հոս ալ ռեւէ աշխատանոց մը հիմնուելու է եւ ասոնց գործ հայթայթելու է: Առած նպաստին ալ հատցնել սկսան, կամաց կամաց նօթութեան տրտունջներ կը բարձրանան, ես ասոնք ինչպէ՞ս մխիթարելու եմ, չոր խօսքով միթէ մարդ կը մխիթարուի՞, դուք ըսէք:

Յառաջիկայ նոր տարւոյ առթիւ նախապէս շնորհաւորութիւններս եւ բարեմաղթութիւններս մատուցանելով Գերապատուութեանդ

Խորին յարգանօք

Առաջնորդական փոխանորդ Անտիոքի հայոց
Վաղարշակ քահանայ Ա. Ճէրրահեան³⁸

3. Գ. Տէրը Ձեզի երկար կեանք պարգեւէ, մեծ. Մարտիրոս աղա Միսաքեան³⁹ Դեկտ. 18 Ուրբաթ գիշեր իր մահկանացուն կնքեց, թաղումը կատարեցինք Շաբաթ օր, երկսեռ խումն բազմութեան մը ներկայութեան:

Նոյն

11

Յարութիւն Քինյ. Թումայեանի նամակը Անտիոքի մէջ տիրող հակա-քրիստոնէայ տրամադրութեան ու քաղաքի վտանգաւոր կացութեան մասին

Անտիոք, 14/27 Ապրիլ 1913

Գերաշնորհ

Տ. Ներսէս սրբազան Եպսկ. Դանիէլեան⁴⁰

հայրախնամ առաջնորդ Հալէպի եւ վիճակացն

Հալէպ

³⁶ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ արտօնագրով:

³⁷ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ փորձանք:

³⁸ Զէյթունի քահանայ հայրերէն: Կիլիկեան կոտորածներէն ետք, Սահակ Բ. Կաթողիկոսի կարգադրութեամբ մեկնած է Անտիոք ու շրջան մը վարած է տեղւոյն առաջնորդական փոխանորդի պաշտօնը: Նահատակուած է Տէր Զօր, 1915-ին (Միսաք Միսեռեան (Մ. Ուլնեցի), *Պատմութիւն Զէյթունի (1409-1921)*, Լիբանան, 1996, էջ 57):

³⁹ Անտիոքի ծանօթ ազգայիններէն: Շրջան մը եղած է Անտիոքի Գերմանիոյ հիւպատոս: Ստացած է Մեծիտիէի 5-րդ կարգի պետական շքանշան (Գուշագճեան-Մատուռեան, նշ. աշխ., էջ 300):

⁴⁰ Ծնած է Զէյթունի մօտակայ Եարփուզ գիւղը 1868-ին: Գրական ծածկանունով՝ Սասկան Վարդապետ: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ: 1883-ին մտած է Սոյ մայրավանքի ժառանգաւորաց վարժարան, իսկ 1886-ին մեկնած է Կ. Պոլիս ու հետեւած Սահակեան վարժարանի դասընթացքներուն: 1890-ին ձեռնադրուած է կուսակոյն քահանայ: Անդամակցած է հնչակեան

Ս. հայր,

Այսօր վեհափառ կայսեր գահակալության օրը հրաափրուած էինք կառավարութիւն, ուր աղօթքի ժամանակ անուանի ոճրագործ եւ խոռվարար Հաճի Նիհատ աղային տղան ճառեց բազմութեան մէջ: Այնպիսի ճառ մըն էր խօսածը, որ հասնրութիւնը, եւ աւելի լաւ է ըսել խոժանը քիչ մնաց որ պիտի խոժէր քրիստոնէից վրայ: Սոյն խոռվայոյց ճառը շատ ազդեց թուրք տարրին վրայ եւ ոչ նուագ գէշ տպաւորութիւն ըրաւ քրիստոնէից: Կառավարութիւնը գրեթէ ուշադրութեան չառաւ իրողութիւնը, որուն արդիւնքը աննպաստ էր շատ: Այդ ճառախօսը որ բոլոր խաչակիրները պախարակեց, պատուաբեկեց եւ անուանարկ ըրաւ հիմա ազատ է: Իր բերնէն թռչող խօսքերը աւելի կը հարուածէր յոյները, որոնք մինչեւ Ռուսիա գրեցին իրենց պատրիարքին⁴¹, միւս ազգերն ալ չի գրկեց իր յոռագոյն ժահրէն, իւրաքանչիւր ազգի հոգեւորները գրեցին իրենց տեղերուն⁴² Հալէպ, որ հարկ եղածը տնօրինեն, մենք եւս մեր մասին կը տեղեկացնենք Ձեզ խնդրին ծանրակշռութիւնն եւ անոր ծնելիքը: Ա՛լ Ձեզի կը մնայ էականն ու կենսականը:

Մատչելով համրոյր Ձեր հայրական Ս. աջին, մնամ

ամենախոնարհ որդեակդ

Անտիոքի հայոց առաջնորդական փոխանորդ

Յարութիւն Քինյ. Թումայեան⁴³

Յ.Գ. Բաշխման ցուցակը կ'առնէք Հաճի-Հապիպլի Մարտիր աղայի⁴⁴

կուսակցութեան: Քաղաքական ամբաստանութեամբ քանի մը անգամ բանտարկուած է: Շրջան մը եղած է Օրմանեան Պատրիարքի անձնական քարտուղարը: Առաջնորդի ու առաջնորդական փոխանորդի պաշտօններ վարած է Հաճընի (1908-1910), Ատանայի (1910-1911), Հալէպի (1911-1914) եւ Եոզկատի (1914-1915) մէջ, ուր եւ նահատակուած է 1915-ին:

Պարբերական մամուլի էջերուն հրատարակած է բազմաթիւ բանաստեղծութիւններ, կրօնական յօդուածներ, ուսումնասիրութիւններ եւ այլն: Առանձին հատորով լոյս ընծայած է երկու գիրք՝ Կենսքը Առանց Հաւատքի, Ա. հատոր, (Վիեննա, 1903) եւ Կաթիլ մը Ջուր Այրած Սրտերու (Կ. Պոլիս, 1912): Վերջինը նուիրուած է Հաճընի 1909-ի ինքնապաշտպանութեան (Գր. Հ. Գալուստեան [Կիլիկեցի], Մարաշ Կամ Գերմանիկ եւ Հերոս Ջէթուն, Նիւ Եորք, տպարան Կոչնակ, 1934, էջ 68: ⁴¹ Նկատի ունի յոյն ուղղափառ համայնքը, որ մեծ թիւով հետեւորդներ ունեցած է Անտիոքի շրջանին մէջ: 1913-ին, յիշեալ համայնքի Անտիոքի Աթոռի գահակալն էր Գրիգորիոս Դ. Հատուատ Պատրիարքը (1859-1928), որուն նստավայրն էր Դամասկոսը: Գահակալած է 1906-1928 թուականներուն: 1913-ին Նիքոլայ Բ. ցարի հրաւերով մեկնած էր Ռուսաստան՝ Սան Բեթերսպուրկ, Ռոմանովներու գահակալութեան 300 ամեակի հանդիսութիւններուն մասնակցելու:

⁴² Գրչի սայթաքում: Հաւանաբար պէտք է ըլլայ «պետերուն»:

⁴³ Ծնած է Ջէթունի մօտակայ Եարփուզ գիւղը, 1884-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Ջէթունի Կեղրոնական Վարժարանէն: Ուսուցչական պաշտօն վարած է Կիլիկիոյ զանազան շրջաններուն մէջ, ապա 1912-ին, Անտիոքի մէջ քահանայ ձեռնադրուելով, ծառայած է այնտեղ մինչեւ Մեծ Եղեռն: 1915-ին աքսորուած է Երուսաղէմ, 1918-ին անցած է Փոք Սայիտ եւ անկէ Մերսին: Քահանայագործած է նաեւ Պէյրութ եւ Նիկոսիա: Պատահական աշխատակցութիւն ունեցած է հայ մամուլին («Սուրիահայ Տարեցոյց», Ա., Հալէպ, 1924, էջ 201, Եղիշէ Եպիսկ. Չիլինկիրեան, Նկարագրութիւնք Երուսաղէմի-Հալէպի-Դամասկոսի Գաղթականական եւ Վանական Զանազան Դիպաց եւ Անցքերու 1914-1918, Բ. տիպ, Երուսաղէմ, 1927, էջ 62):

⁴⁴ Նկատի ունի Մարտիր Աղա Մարտիրեանը, որ աւելի ետք ստացած է Իսկէնտէրեան մականունը: Ծնած է Մուսա Լերան Հաճի Հապիպլի գիւղը 1855-ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրի ազգային վարժարանէն: Պարապած է մետաքսագործութեամբ եւ եղած է

տղան Իսկէնտէր Էֆ. Իսկէնտէրեան⁴⁵, որը վաղը պիտի մեկնի այդ կողմ ջորեպաններու հետ:

Նոյն

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ 1909Ի ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՄԱՍԻՆ Բ.

Միհրան Մինասեան

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս յօդուածով հրատարակութեան տրուած են 11 անտիպ փաստաթուղթեր որոնք կ'առնչուին 1909-ի Անտիոքի հայութեան կոտորածին: Անոնք մեծ մասամբ գրուած են աղէտէն ետք քաղաք դրկուած քահանայ հայրերու կողմէ եւ կը նկարագրեն հոն տեղի ունեցած սպանդն ու ասարառութիւնները, կը շօշափեն կոտորածներէն ետք քաղաքին մէջ ստեղծուած իրավիճակը, կը խօսին տիրող ծայրայեղ թշուառութեան, որբերու եւ այրիներու ճակատագրի, որբանոցներու, օտար հաստատութիւններու կողմէ որբեր որդեգրելու, նպաստներու բաշխումի, պետական նպաստի դադրեցման, պատերազմական ատեաններու կողմնակալ ու անվճռական ընթացքի, ոճրագործներու ազատ արձակման եւ յարակից այլ հարցերու մասին: Առանձին ցուցակով տրուած է նաեւ Անտիոքի նահատակներու ընդհանուր ցուցակը՝ սպաննութեան վայրի եւ սպաննողի անուններու յիշատակութեամբ:

Առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուող այս փաստաթուղթերը նոր յոյս կը սփռեն դէպքերուն վրայ եւ կը հարստացնեն ոչ միայն Անտիոքի հայութեան պատմութիւնը, այլ կ'ամբողջացնեն Կիլիկեան կոտորածներու մասին մեր պատկերացումները:

Յօդուածի սկիզբի բաժինով փաստաթուղթերու հրատարակիչին կողմէ տրուած է ընդհանուր ակնարկ Անտիոքի հայութեան եւ 1909-ի քաղաքի կոտորածին ու անոր հետեւանքներուն մասին:

ամերիկեան մատուտակի Լօրպէս ընկերութեան մէջ բարձրաստիճան գործակատար: Որպէս յեղափոխական գործիչ, 1885-ին ձերբակալուած է եւ երկու տարի բանտարկուած է Հալէպի մէջ: 1892-ին ծանօթացած է հնչակեան գործիչ Աղասիին ու զայն առաջնորդած է Մուսա Լերան հայկական գիւղերը: Եղած է անդամ Անտիոքի վարչական ժողովին, դատական խորհուրդին եւ հուսկ՝ հարցաքննիչ դատաւոր:

Որպէս յեղափոխական գործիչ, 1904-ին կրկին ձերբակալուած ու բանտարկուած է: 1910-ին, ձեռնարկած է ծննդավայրին մէջ գիշերօթիկ բարձրագոյն վարժարանի մը հիմնարկութեան, բայց 1912-ին, կանխահաա մահով, կիսաաւրտ ձգած է սկստած գործը (Գուշագճեան-Մատուտեան, նշ. աշխ., էջ 263-264, 560-561):

⁴⁵ Ծնած է Մուսա Լերան Հաճի Հապիպլի գիւղը: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրի ազգային վարժարանէն, ապա յաճախած է Պուրսայի Շերամաբոճական Վարժարանը եւ 1909-ին աւարտելով զայն՝ վերադարձած է գիւղ, ուր վարած է զանազան պաշտօններ՝ գիւղապետ, թաղական խորհուրդի անդամ եւ Հ. Բ. Ը. Միութեան վարչական: Մասնակցած է Մուսա Լերան հերոսամարտին, որմէ ետք անցած է Փոր Սայիտ եւ հուսկ՝ վերադարձած ծննդավայր:

Մահացած է Իրաք 1954-ին, արկածի հետեւանքով (Գուշագճեան-Մատուտեան, նշ. աշխ., էջ 595):

Հրատարակուող փաստաթուղթերուն կցուած են նաեւ բազմաթիւ ծանօթագրութիւններ:

UNPUBLISHED DOCUMENTS ABOUT THE MASSACRE OF ANTIOCH (ANTAKYA) ARMENIANS IN 1909

B.

Mihran Minassian

SUMMARY

Eleven previously unpublished documents concerning the massacre of Armenians of Antioch district in 1909 are presented in this article. They are written mostly by the priests sent to the city after the disaster and describe the slaughter and destruction that took place there, address the situation in the city after the massacres, speak of the extreme misery, condition of orphans and widows, orphanages, collection of orphans by foreign institutions, allocation of aid, ceasing of state assistance for survivors, the biased and uncertain processes by the military courts, the release of the criminals and other related issues. A separate list of the massacred Armenians of Antioch, with the names of the crime places and of the murderers is also given.

These documents put into scientific circulation for the first time cast a new light on the events and not only enrich our knowledge of the history of the Armenians of Antioch, but also contribute to the obtaining of more complete picture of the Cilician massacres.

The documents are accompanied with general introduction and notes.

Keywords: Cilicia Armenians, Antioch (Antakya), massacre, 1909, survivors, orphans, relief activity.

НЕОПУБЛИКОВАННЫЕ ДОКУМЕНТЫ О РЕЗНЕ АРМЯН АНТИОХА (АНТАКИЯ) В 1909 ГОДУ

Мигран Минасян

РЕЗЮМЕ

В статье представлены одиннадцать ранее неопубликованных документов, касающихся резни антиохийских армян в 1909 году. Авторами документов являются в основном представители армянского духовенства, отправленные в город после погромов, и содержат описания имевших место убийств и разрушений, представляют ситуацию в городе после резни, говорят о чрезвычайных страданиях, положении сирот и вдов, состоянии детских домов, приеме сирот иностранными учреждениями, распределении помощи, прекращению государственной поддержки для пострадавших армян, предвзятости и неопределенности в судопроизводстве военных трибуналов, освобождению преступников и так далее. Также приводится отдельный список убитых армян Антиохии с названиями мест преступлений и именами убийц.

Данные документы, впервые введенные в научный оборот, проливают новый

свет на события и не только обогащают наши знания об истории армян Антиохии, но и способствуют получению более полной картины киликийской резни. Документы снабжены общим введением и примечаниями.

Ключевые слова: армяне Киликии, Антиохия (Антакья), резня, 1909 год, пострадавшие, сироты, гуманитарная помощь.

**ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԽՏՈՂԱԿԱՆՆԵՐԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ**

Նաբեկ Պողոսյան

Ռաֆայել Լեմկինն իր գործունեության ընթացքում ուսումնասիրել է զանգվածային սպանությունների, կոտորածների և ցեղասպանությունների բազմաթիվ օրինակներ՝ հին ժամանակներից սկսած մինչև իր գործունեության շրջանը: Սակայն ցեղասպանագետների գերակշռող մասն այն եզրակացության է հանգում, որ նրա կյանքում ճակատագրական նշանակություն են ունեցել XX դարում տեղի ունեցած երկու խոշոր ցեղասպանությունները՝ Հայոց ցեղասպանությունը և հրեաների Հոլոքոստը:

Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանությունը ժխտող հեղինակները չեն շրջանցել նաև Ռաֆայել Լեմկինին և նրա գիտական ժառանգությունը: Ավելին, փորձ է արվել ամեն կերպ նենգափոխելու և ծուռ հայելու միջոցով ներկայացնելու Հայոց ցեղասպանության թեմայի բացառիկ նշանակությունը Ռ. Լեմկինի համար: Այս կերպ ժխտողականները նպատակադրվել են «հիմնավորել» պաշտոնական Թուրքիայի և Ադրբեջանի՝ Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը: Ժխտողականների հիմնական փաստարկը մնում է նույնը. Հայոց ցեղասպանություն տեղի չի ունեցել, Թուրքիան մեղավոր չէ, «ցեղասպանություն» եզրույթը կիրառելի չէ Հայոց ցեղասպանության դեպքում: Թուրքիան փորձում է հերքել Հայոց ցեղասպանությունը՝ ճանաչելով Հոլոքոստը: Մասամբ սա վերաբերում է այն պնդմանը, թե Թուրքիան բազմաթիվ հրեաների փրկել է նացիստներից, իսկ պատշաճ նախադրյալն այն էր, որ այն մարդիկ, ովքեր դա կատարեցին, չէին կարող սպանել մեկ միլիոն մարդու²:

Այսպես, ժխտողականների կողմից առաջ քաշվող փաստարկներից մեկը վերաբերում է Լեմկինի կողմից «ցեղասպանություն» եզրույթի ստեղծման խնդրին: Նրանք նշում են, որ ցեղասպանություն եզրույթի ստեղծմամբ Լեմկինը Հայոց ցեղասպանությունը նկատի չի ունեցել, այլ հաշվի է առել միայն հրեաների Հոլոքոստը: Որպես այս տեսակետը հաստատող փաստարկ՝ ներկայացվում է, թե Լեմկինի Մադրիդյան զեկույցում, ինչպես նաև 1944 թ. լույս տեսած «Առանցքի տերությունների կառավարումը բռնագավառված Եվրոպայում» աշխատության մեջ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության մասին որևէ հիշատակություն չկա: Իր այս աշխատության մեջ նա խոսում է միայն Հոլոքոստի մասին³:

¹ Smith R.W., Markusen E. and Lifton R. J., “Professional Ethics and the Denial of the Armenian Genocide”, *Holocaust and Genocide Studies*, 1995, vol. 9, no 1, p. 3.

² Charny I., *Encyclopedia of Genocide*, Santa Barbara, California: ABC-CLIO, vol. 1, 1999, p. 162.

³ Aktan G., A Turkish view on the applicability of the Genocide Convention to the Armenian incidents and the ICTJ's report, 2/19/003, (<http://web.hurriyetdailynews.com/a-turkish-view-on-the-applicability-of-the-genocide-convention-to-the-armenian-incidents-and-the-ictjs-report.aspx?pageID=>

2001 թ. հայ-թուրքական հաշտեցման համատեղ հանձնաժողովը⁴ դիմել էր «Անցումային շրջանի արդարադատության հարցերով միջազգային կենտրոն»-ին⁵ (ԱՇԱՀՄԿ)՝ խնդրելով տրամադրել անկախ և օբյեկտիվ իրավական վերլուծություն Ցեղասպանության կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ այն իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել Օսմանյան կայսրությունում XX դարի սկզբին: 2003 թ. սկզբին ԱՇԱՀՄԿ-ը ներկայացրեց իր եզրակացությունը⁶, որ 1915 թ. իրադարձությունները համապատասխանում են ցեղասպանություն եզրույթի բոլոր սահմանումներին, և այս եզրույթի կիրառումն ամբողջովին արդարացի է:

Եզրակացության մեջ մասնավորապես նշվում էր. ««Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի տեքստը մշակողներն օգտագործել են ցեղասպանություն բառը՝ վկայակոչելու համար այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նախքան կոնվենցիայի ընդունումը: Չնայած նրան, որ Լեմկինը մինչև 1943 թ. չէր ստեղծել ցեղասպանություն բառը, կոնվենցիայի տեքստում և մյուս գրություններում վերջնականապես հաստատվում է, որ Լեմկինը և կոնվենցիան մշակող մյուս անձինք դա (ցեղասպանություն բառը – Ն.Պ.) կիրառում են՝ նկարագրելու այն գործողությունները, որոնք տեղի են ունեցել նախքան կոնվենցիայի ընդունումը: Կոնվենցիայի մաս կազմող պետությունները ընդունում են (կոնվենցիայի – Ն.Պ.) նախաբանը, որ «պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը»»⁷:

Կոնվենցիայի նախաբանի նշված ձևակերպումն ունայն է դարձնում նաև ժխտողական հետազոտողների այն փորձերը, ովքեր, օգտագործելով կոնվենցիայի՝ 1951

[=438&n=a-turkish-view-on-the-applicability-of-the-genocide-convention-to-the-armenian-incidents-and-the-ictj-report-2003-02-19](#), դիտվել է՝ 01.05.2015):

⁴ Հայ-թուրքական հաշտեցման համատեղ հանձնաժողովը, որը ստեղծվել է ԱՄՆ Պետության արտամիտի աջակցությամբ 2001թ. հուլիսին և իր գործունեությունը դադարեցրել է 2004 թ. ապրիլին, կազմված էր նախկին բարձրաստիճան դիվանագետներից, պաշտոնյաներից: Հանձնաժողովի խնդիրն էր խթանել հայ-թուրքական երկխոսությունը:

⁵ Նյու Յորքում գտնվող Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (The International Center for Transitional Justice) շահույթ չհետապնդող կազմակերպություն է և աշխատում է այն երկրների հետ, որտեղ դիտվում են կամ դիտվել են մարդու իրավունքների խախտումներ, զինված հակամարտություններ և պատմական անարդարության դեպքեր: Կենտրոնն անցկացնում է պետությունների, կառավարական և հասարակական կազմակերպությունների քաղաքականության, ռազմավարությունների, փաստաթղթերի համեմատական իրավաբանական և տեղեկատվական վերլուծություն:

⁶ ԱՇԱՀՄԿ-ի եզրակացության մասին ավելի մանրամասն տե՛ս **Մարգարյան Վ.**, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարված իրավաբանական վերլուծության մասին, *Հայոց ցեղասպանության պարմության և պարմագրության հարցեր*, 2003թ., Երևան, № 8, էջ 47-65:

⁷ Տե՛ս The Applicability of The United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events which occurred during the early Twentieth Century: Legal Analysis Prepared for the International Center For Transitional Justice, ICTJ, 6/2/2011, p. 10. (<https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf>, դիտվել է՝ 20.03.2015):

թ. ուժի մեջ մտնելու հանգամանքը⁸, հրաժարվում են 1915 թ. իրադարձությունները որպես ցեղասպանություն որակելուց⁹ և այս հանգամանքն օգտագործում են՝ ցույց տալու համար, թե Լեմկինը նույնպես չի անդրադարձել Հայոց ցեղասպանության խնդրին: Այսպես, ԱՇԱՀՄԿ-ի ներկայացրած իրավական վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ Լեմկինի Մադրիդյան զեկույցում և «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության մեջ Հայոց ցեղասպանության մասին չհիշատակելը դեռևս չի նշանակում, որ նա ցեղասպանություն եզրույթը ստեղծելիս հաշվի չի առել Հայոց ցեղասպանության իրողությունը: Ավելին, պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ Լեմկինի Մադրիդյան զեկույցում ընդամենը իրավական ձևակերպումներ էին տրվում «բարբարոսություն» և «վանդալիզմ» հանցագործություններին, իսկ «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատությունն առաջին հերթին նվիրված էր Եվրոպայում նացիստական օկուպացիային:

Ուշագրավ է, որ Հայոց ցեղասպանության՝ իր վրա ունեցած մեծ ազդեցության մասին Լեմկինը փաստում է իր անտիպ ինքնակենսագրականում, ինչպես նաև 1949թ. «CBS» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, որի ընթացքում նա նշում է. «Ես հետաքրքրվեցի ցեղասպանությամբ, որովհետև այն շատ անգամ տեղի ունեցավ, այն տեղի ունեցավ հայերի հետ, և դրանից հետո հայերը շատ կոշտ վերաբերմունքի արժանացան Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ցեղասպանության իրագործման մեջ մեղավոր հանցագործները չպատմվեցին»¹⁰: Հայոց

⁸ Նշենք, որ 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում նկարագրված հանցագործությունը և դրա պատժելիությունը կիրառելի են 1915 թ. Հայոց ցեղասպանության նկատմամբ, քանի որ 1948 թ. ընդունված կոնվենցիան արդեն գոյություն ունեցող միջազգային իրավական նորմերի հաստատումն է: 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության առնչությամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիությունը հիմնավորվում է նաև այդ գործողության և դրա հետևանքների շարունակական բնույթով: Իսկ «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիայում նշվում է, որ վաղեմության ժամկետը չի կարող կիրառվել Նյուրնբերգյան դատավարության կանոնադրության և Ցեղասպանության մասին կոնվենցիայում նշված հանցագործությունների, ինչպես նաև զինված հարձակման պատճառով բռնազավթի ենթարկելու կապակցությամբ՝ անկախ դրանց կատարման ժամանակից: Ցեղասպանության կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո (1951 թ. հունվարի 12-ին) հետադարձ ուժով տարածվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունների պատժելիության վրա, և սա նշանակում է, որ 1948 թ. կոնվենցիան նույնպես կարող է կիրառվել նաև Հայոց ցեղասպանության նկատմամբ: «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիան տե՛ս հետևյալ հղումով՝ http://old.un-am/res/UN%20Treaties/III_6.pdf: Հայոց ցեղասպանության նկատմամբ 1948 թ. կոնվենցիայի կիրառելիության մասին ավելի մանրամասն տե՛ս **Թորիկեան Շ.**, Հայկական հարցը և միջազգային օրենքը, Պեյրոթ, Հրատարակություն Հայ Դատի Յանձնախումբի, 1976, էջ 66-69:

⁹ **Gasparyan S., Paronyan Sh., Chubaryan A., Muradyan G.**, Raphael Lemkin's Draft Convention on Genocide and the 1948 UN Convention: a Comparative Discourse Study, Yerevan, Yerevan State University press, 2016, p. 80.

¹⁰ Ռ. Լեմկինի հարցազրույցը տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=WuF5OVgaNk>.

ցեղասպանության իրողությունը և այն իրագործող երիտթուրք ոճրագործների անպատիժ մնալու հանգամանքները դրդեցին Լեմկինին կազմելու իր Մադրիդյան զեկույցը¹¹ և ըստ այդմ՝ կարևորելու «քարքարոսություն» և «վայրագություն» հանցագործությունների կողիֆիկացման անհրաժեշտությունը: Մադրիդյան զեկույցում հեղինակը նպատակ ուներ ներկայացնելու, որ աշխարհը կարիք ունի նոր օրենքի, որը կարգելի կրոնական և ազգային խմբերի սպանությունները՝ նախազգուշացնելով, որ դա անհրաժեշտ է կանխելու այլ երկրներում այնպիսի գործողությունների կրկնությունը, ինչպիսին Օսմանյան կայսրությունում հայերի սպանոն էր¹²: Ինչ վերաբերում է «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատությանը, որում Լեմկինն արդեն գործածում է ցեղասպանություն եզրույթը, ապա այս նոր եզրույթի գործածումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ նրա Մադրիդյան զեկույցում ներկայացված հայեցակարգի զարգացում:

Բացի դրանից, ուշադրության արժանի է, որ Լեմկինը հայերի տեղահանությունները և զանգվածային սպանություններն իր փաստաթղթերում ներկայացնում է որպես ցեղասպանության դասական օրինակ, նա միևնույն հանցագործության շարքում է դասում Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոստը: Ժամանակակից պատմության պրոֆեսոր Դոնալդ Բլոքսհեմը, ով մասնագիտացված է ցեղասպանությունների, պատերազմական հանցագործությունների և զանգվածային սպանությունների ուսումնասիրության հարցում, նշում է, թե Լեմկինը որոշեց, որ Հոլոքոստը պատմության ընթացքում տեղի ունեցած ցեղասպանության ընդամենը մի օրինակ է, այլ ոչ թե պարադիգմային: Հանցագործությունը կողիֆիկացնելու հարցում նրա հաստատականությունը պայմանավորված էր ոչ թե նացիստական Գերմանիայի կողմից իր ընտանիքի անդամների մեծ մասի սպանությամբ, այլ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած Հայոց ցեղասպանությամբ, XX դարի սկզբին Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում աճող ազդեցիկ և անհանդուրժողականությամբ լեցուն ազգայնականությամբ և, վերջապես, խմբերի ոչնչացման նկատմամբ պատմական հետաքրքրությամբ¹³:

Ավելին, ժխտողականները խեղաթյուրում են Լեմկինի՝ «CBS» հեռուստաընկերությանը տված հարցազրույցը¹⁴, այնինչ նա հստակ արտահայտվում է, որ սկսել է ցեղասպանությամբ հետաքրքրվել Հայոց ցեղասպանության իրագործման արդյունքում:

¹¹ St'u Special report at the 5th Conference for the Unification of Criminal Law in Madrid presented by M. Raphael Lemkin, 1933 October, Madrid, (<http://watchersofthesky.com/wp-content/uploads/2014/10/lemkins-madrid-report-in-1933.pdf>, դիտվել է՝ 01.03.2015):

¹² Robertson G., An Inconvenient Genocide: Who Now Remembers the Armenians?, London, Biteback Publishing, 2014, p.17.

¹³ Bloxham D., "Comparative Genocide", in *Writing the Holocaust* ed. Dreyfuss J., Daniel L., London and New York, A&C Black, 2011, p. 136.

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս Tall Armenian Tale PBS: The Armenian Genocide (Part II), the other site of the falsified genocide, (<http://www.tallarmeniantale.com/PBS-Armenian-genocide2.htm>): Նշենք, որ «Tall Armenia Tale» անունը կրող կայքում, որում տեղ են գտել բազմաթիվ ժխտողական և կեղծ փաստարկներ, նշվում է, որ իրենց առաքելությունը «Հայոց ցեղասպանության միջը բացահայտելն է»:

* * *

Ժխտողական տեսակետները հիմնավորելու համար թուրքական քարոզչական մեքենան օգտագործում է Յուտայի համալսարանի դոկտորանտ, ժխտողական հայացքներով հայտնի Թալ Բուենոսի դիտարկումները, ով շատ ակտիվ է թուրքական մամուլում և հանդես է գալիս դասախոսություններով¹⁵։ Հատուկ ընդգծվում է, որ նա ուսումնասիրել է Լեմկինի արխիվային նյութերը։ Վերջինս ժխտողականության թմբիրի ազդեցության ներքո նույնիսկ կասկածի տակ է առնում, որ «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատությունը գրել է Լեմկինը՝ որպես փաստարկ ներկայացնելով, թե իբր Լեմկինն այդ ժամանակ բավարար անգլերեն չգիտեր, որպեսզի գրեր այդ աշխատությունը, քանի որ նա վերջերս էր տեղափոխվել ԱՄՆ և չուներ համապատասխան փորձ՝ այդ աստիճանի գրավոր անգլերեն իմանալու համար։ Լեմկինն ընդամենը ծառայել է ԱՄՆ-ի կառավարության շահերին¹⁶։ Բուենոսը փորձում է խեղաթյուրել Լեմկինի կենսագրությունը։ Այնինչ Լեմկինը բարձր մակարդակի լեզվական ունակություններ ուներ, նա գրքեր և հոդվածներ է գրել լեհերեն, ֆրանսերեն, անգլերեն, իդիշ, գերմաներեն, իտալերեն և շվեդերեն լեզուներով։ Եվ նախքան «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում»¹⁷ աշխատությունը գրելը՝ 1938 թ. Լեմկինը Դյուկի համալսարանում հանդիպել էր իրավունքի պրոֆեսոր Մալքոլմ Մքդերմոթի հետ, և նրանք համագործակցեցին 1932թ. Լեհաստանի քրեական օրենսգիրքը և փոքր հանցագործությունների մասին օրենքը¹⁸ անգլերեն թարգմանելու գործում¹⁹։ Ավելին, 1942 թ. նա գերմաներենից անգլերեն էր թարգմանել «Առանցքի կողմից

¹⁵ Թալ Բուենոսի քարոզչական գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս **Hovannisian R.**, “Denial of the Armenian Genocide 100 Years Later: The New Practitioners and Their Trade”, *Genocide Studies International*, 2015, vol. 9, no 2, pp. 234,235.

¹⁶ Տե՛ս **Buenos T.**, “Genocide-labeling has always been political,” International Affairs Forum, (<http://www.ia-forum.org/Content/ViewInternalDocument.cfm?ContentID=8330>, դիտվել է՝ 02.05.2015): Տե՛ս նաև ժխտողական հայացքներով հայտնի Թալ Բուենոսի՝ 2014թ. նոյեմբերի 24-ի ելույթի տեքստը՝ ուղղված Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի Թուրքիայի բարեկամ պատգամավորներին՝ “The Address Delivered by Mr Tal Buenos at NSW Parliament,” Australian Turkish Advocacy Alliance, (https://www.ata-a.org.au/pdf/Tal_Buenos_NSW-Parliamentary-Address_20141124_Transcript.pdf, դիտվել է՝ 05.03.2015):

¹⁷ **Lemkin R.**, Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress, Washington, D.C., Carnegie Endowment for International Peace, 1944.

¹⁸ Տե՛ս The Polish Penal Code of 1932 and The Law of Minor Offenses, Translated with Malcolm McDermott. Durham, North Carolina: Duke University Press, 1939, 95pp. Լեմկինի գրած գրքերի և հոդվածների ցանկը ներկայացրել է պատմաբան Ջ. Ֆազելը, տե՛ս Comprehensive Bibliography: Writings of Raphael Lemkin, (<http://www.preventgenocide.org/lemkin/bibliography.htm>, դիտվել է՝ 02.05.2015):

¹⁹ **Elder T.**, “What You See Before Your Eyes: Documenting Raphael Lemkin’s Life by Exploring His Archival Papers, 1900–1959”, in *The Origins of Genocide: Raphael Lemkin as a Historian of Mass Violence*, ed. **Schaller J.D., Zimmerer J.**, Routledge, 2013, p. 32.

բռնազավթված Եվրոպայում թողարկված հիմնական օրենքները, հրամանագրերը և կանոնակարգերը»²⁰:

Բունոսի կարծիքով Լեմկինը Հայոց ցեղասպանության վերաբերյալ արտահայտել է իր անձնական կարծիքը, որը չի համընկնում «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի բովանդակության հետ²¹: Թերևս այս հարցում նա «մոռանում» է, որ Լեմկինը կոնվենցիայի կազմման «հայրերից» է, ում անձնական տեսակետներն արտացոլվել են կոնվենցիայում:

Թեմեսիի տեխնիկական և Վիեննայի միջազգային համալսարանների քաղաքական գիտությունների պրոֆեսոր Մայքլ Գյունտերն իր ժխտողական տեսակետը հիմնավորում է նրանով, թե ցեղասպանություն հասկացությունը գոյություն չի ունեցել նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ որ այն հայտնաբերվել է Լեմկինի կողմից, իսկ «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան ուժի մեջ է մտել 1951 թ.²²: Այս մոտեցմամբ փորձ է կատարվում խեղաթյուրելու ցեղասպանություն հասկացության բովանդակությունը: Իրականում ցեղասպանություն հասկացության բացակայությունը չի ենթադրում, որ նախքան այդ հասկացության ստեղծումը ցեղասպանության դեպքեր չեն եղել: Հետաքրքրական է այս առիթով Նյու Յորքի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Փոլ Բոգոսյանի մեկնաբանությունը. «Ոչ ոք ընդհանրապես չի կարող ենթադրել, թե որոշակի երևույթի (կամ օբյեկտի) նկատմամբ կարելի է կիրառել հասկացությունը միայն այն դեպքում, երբ այդ երևույթը տեղի ունեցավ (կամ այդ օբյեկտը գոյություն ունեցավ), և կային մարդիկ, ովքեր կիրառեցին դրա հասկացությունը: Ես իսկապես կարող եմ ասել, որ Երկրի վրա 65 միլիոն տարի առաջ դիտվածներն են եղել, թեև 65 մլն տարի առաջ ոչ ոք չկար, ով կունենար դիտվածը հասկացությունը»²³:

Խոսքն այն մասին է, որ ցեղասպանության հանցագործության բաղադրիչները առկա էին 1915 թ.՝ նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը և 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի ընդունումը: Դրա մասին է փաստում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը²⁴, որով պատժելի էին համարում այդ հանցագործությունը: Անտանտի երկրները հռչա-

²⁰ Key laws, decrees and regulations issued by the Axis in occupied Europe. Washington: Board of Economic Warfare, Blockade and Supply Branch, Reoccupation Division, December 1942, 170 pp.

²¹ **Buenos T.**, “Many Genocides of Raphael Lemkin,” Daily Sabah, 11.09.2014, (<http://www.dailysabah.com/opinion/2014/09/11/many-genocides-of-raphael-lemkin>, դիտվել է՝ 06.03.2015):

²² **Gunter M.**, *Armenian History and the Question of Genocide*, New York, Palgrave Macmillan, 2011, p. 38.

²³ **Boghossian P.**, “The Concept of Genocide”, *Journal of Genocide Research*, 2010, vol 12, no 1-2, p. 71.

²⁴ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում Անտանտի երկրները նշում էին հայերի զանգվածային կոտորածների մասին, ապա ընդգծում. «Հաշվի առնելով մարդկայնության և քաղաքակրթության դեմ ուղղված թուրքիայի այդ նոր հանցագործությունները՝ Դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարում են Բարձր դռանը, որ իրենք պատասխանատվության են ենթարկելու օսմանյան կառավարության բոլոր անդամներին և այդ ջարդերում ներգրավված նրանց գործակալներին»: Տե՛ս **Քոչարյան**

կազմում նշված պատասխանատվության վերաբերյալ դրույթները փորձեցին իրագործել 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրում²⁵։ Թեև 1948 թ. կոնվենցիան ուժի մեջ մտավ Հայոց ցեղասպանության իրագործումից տասնամյակներ անց, սակայն այն արտացոլում էր ցեղասպանության կանխման միջազգային սովորության իրավունքը²⁶։ Այլ կերպ ասած՝ 1948 թ. կոնվենցիայի բաղադրիչները միջազգային սովորության իրավունքի մակարդակում գոյություն են ունեցել շատ ավելի վաղ շրջանում։ Կոնվենցիայի ընդունմամբ կոդիֆիկացվում էր արդեն իսկ գոյություն ունեցող հանցագործությունը։

Հայտնի թուրք պատմաբան, ԱՄՆ-ի Քլարկ համալսարանի Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ամբիոնի վարիչ Թաներ Աքչամը t24.com.tr կայքին տված հարցազրույցում անհեթեթություն է որակել ժխտողականների նշված դիրքորոշումը. «Ռաֆայել Լեմկինը, որը գործածության մեջ է դրել «ցեղասպանություն» եզրը, այն կիրառել է հայերի հանդեպ կատարվածի համար։ Հիմա պենիցիլին հայտնագործած մարդը, երբ ասում է, թե այս հիվանդության համար դեղ է հայտնագործել ու անունն էլ պենիցիլին է դրել, իմաստ ունի՞ ասել, թե, այ՛ մարդ, այս դեղի անունը պենիցիլին չէ։ Դա լրիվ հիմարություն կլինի... Առաջին անգամ (Ռաֆայել Լեմկինը – Ն.Պ.) «ցեղասպանություն» բառն օգտագործում է իր գրքում 1944 թ.։ Երկար պայքարից հետո՝ 1948 թ., ՄԱԿ-ն ընդունում է Ցեղասպանության մասին կոնվենցիան։ Այդ թվականից առաջ և հետո տված բոլոր հարցազրույցներում, բոլոր հոդվածներում անընդհատ գրում է. «Ես այս եզրը հայերի նկատմամբ կատարվածի համար եմ կիրառում»։ Պարզ ասեմ՝ հիմա մեր ծավալած քննարկումը, թե «այս եզրը ճիշտ չէ», անտեղի է։ Թուրքիան այլևս պետք է ազատվի այս պարզունակությունից»²⁷, - հայտարարել է Աքչամը։

Բավարար չհամարելով բերված փաստարկները՝ ժխտողականները փորձում են կասկածի տակ դնել Լեմկինի աշխատությունների արժանահավատությունը՝ առաջ քաշելով այն թեզը, թե Լեմկինի օգտագործած սկզբնաղբյուրները քարոզչական բնույթ են կրել, քանի որ նա օգտվել է Անտանտի տերությունների ներկայացուցիչների աշխատություններից, ովքեր պաշտպանում էին իրենց երկրների շահերը։ Այսպես, Թալ Բուենոսը գրում է. «Լեմկինի թղթերը ցույց են տալիս, որ նա, անդրադառնալով ցեղասպանության շատ դեպքերի, չի կենտրոնանում որոշակի դեպքի վրա, հայերի տառապանքների մասին նրա ուսումնասիրությունը հիմնված է սկզբնաղբյուրների ուսումնասիրության վրա։ Նրա եզրակացությունները մեծապես հիմնված են Առնոլդ Թոյնքիի գրվածքների վրա, ով երիտասարդ պատմաբան

Վ. (կազմ.), Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, Երևան, հեղ. հրատ., 2014, էջ 8։

²⁵ Տե՛ս Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, էջ 45։

²⁶ Karamanian S., The International Court of Justice and Armenian Genocide, in *The Armenian Genocide Legacy*, ed. Demirdjian A., New York, Palgrave Macmillan, p. 86.

²⁷ T24.com.tr կայքին տված Թաներ Աքչամի հարցազրույցը տե՛ս Akcam T., 1915'te Ermeni ayaklanmalari olduğu iddiası yalan, 26.04.2015, (<http://m.t24.com.tr/haber/prof-taner-akcam-1915te-ermeni-ayaklanmalari-oldugu-iddiasi-yalan,294643>, դիտվել է՝ 08.03.2016)։

էր և ծառայում էր բրիտանական կառավարությանը քարոզչություն իրականացնելու հարցում այն ժամանակ, երբ Բրիտանիան պատերազմի մեջ էր Օսմանյան կայսրության հետ, և Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի գրվածքների, ով պատերազմի սկզբին գործում էր որպես Անտանտի շահերը ներկայացնող անձ, ում աջակցում էին հայ իրավախորհրդատու Արշակ Շմավոնյանը և հայ քարտուղար Հակոբ Անտոնյանը: Աշխարհի ո՞ր ինստիտուտը դոկտորի աստիճան կշնորհեր նրան, ում տեղեկատվությունը հիմնվում է նման կողմնակալ աղբյուրների և փաստերի վրա»²⁸:

Այս հիմնավորումը չի կարող դիմանալ քննադատության, քանի որ անհնար է հարցականի տակ դնել բազմաթիվ փաստաթղթեր և վկայություններ, որոնք բերվում են Հենրի Մորգենթաուի և Առնոլդ Թոյնքիի աշխատություններում, քանի որ որևէ լուրջ փաստարկ չկա ժխտողականների կողմից Թոյնքիի և Մորգենթաուի աշխատություններում տեղ գտած տեղեկությունները հերքելու համար: Ավելին, Լեմկինն օգտվել է բազմաթիվ հեղինակների աշխատություններից և պարբերականների հրապարակումներից, որոնց մասին ժխտողական հեղինակը չի խոսում, իսկ նրա փաստարկը լիովին ի չիք է դառնում, քանի որ Լեմկինն օգտվել է նաև գերմանական և այլ աղբյուրներից: Ինչպես տեսնում ենք, ժխտողական հեղինակներն իրենց տեսակետերը ներկայացնում են ոչ թե ամբողջապես տրամաբանված և փաստարկված, այլ մասնակի և ճշմարտանման փաստարկը մատուցում են որպես ճշմարտություն:

* * *

Թուրքիան Հայոց ցեղասպանության իրողության արծարծման և ճանաչման գործընթացը կանխելու համար կիրառում է նաև այն ճանաչող երկրների նկատմամբ պատմության որոշ ժամանակահատվածում ցեղասպանություն իրագործելու վերաբերյալ մեղադրանքներ հնչեցնելու տակտիկան: Այսպես, 2011թ. դեկտեմբերին Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման մասին օրենքի հաստատման հաջորդ օրը Էրդոդանը, հանդես գալով պատասխան քննադատությամբ, հայտարարեց, որ Ալժիրում անկախության համար մղվող պատերազմի ժամանակ Ֆրանսիան ցեղասպանություն է իրագործել, և, ըստ նրա, 1945թ. սկսած՝ ֆրանսիացիները սպանել են բնակչության 15 տոկոսին²⁹: Ռադգերսի համալսարանի դոկտոր Դուգլաս Իվրին-Էրիկսոնն այս առիթով հավասար հարթության վրա համեմատականներ է տանում Հայոց ցեղասպանության և Ալժիրի բնակչության հանդեպ իրականացրած ցեղասպանության միջև՝ ներկայացնելով Լեմկինի անդրադարձը Ալժիրի ցեղասպանության թեմային: Իվրին-Էրիկսոնը նշում է. «Ալժիրի ցեղասպանության մասին Լեմկինը գրել է, որ Ալժիրի ժողովրդի ազգային գիտակցության

²⁸ Նույն տեղում:

²⁹ Chrisafis A., Turkey accuses France of genocide in Algeria, 23.12.2011, (<https://www.theguardian.com/world/2011/dec/23/turkey-accuses-france-genocide-algeria>, դիտվել է՝ 08.08.2015):

դեմ ուղղված բռնության և խոշտանգումների արշավ է: Նա հավատում էր, որ այդ համակարգված քաղաքականությունը ֆրանսիական գաղութարար իշխանությունների կողմից նպատակ ուներ ոչնչացնել Ալժիրի մշակույթը: Լեմկինը կարծում էր, որ դա չի տարբերվում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունից: Եթե վերադառնանք (ցեղասպանության – Ն.Պ.) հայեցակարգի արմատներին և ուշադրություն դարձնենք Լեմկինի գաղափարներին, ապա Թուրքիայում այն մարդիկ, ովքեր մեղադրում են ֆրանսիացիներին կեղծավորության մեջ, ճիշտ հետևություններ են անում»³⁰: Իվրին-Էրիկսոնի այս համեմատությունը ոչ միայն անտեղի է, այլև անհասկանալի, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, Հայոց ցեղասպանության անարգել իրագործումը Լեմկինի համար առանձնահատուկ նշանակություն ուներ, և այն դարձավ այն հիմնական նախադրյալը, որ Լեմկինը որպես իր գործունեության ուղղություն ընտրի ցեղասպանության հայեցակարգի մշակումը: Բացի այդ, եթե Լեմկինը Ալժիրում տեղի ունեցած դեպքերին մեծ ուշադրության արժանացրած լիներ, ապա իր անավարտ մնացած «Ցեղասպանության պատմության»³¹ մեջ առանձին ենթագլուխ կնվիրեր այդ թեմայի ուսումնասիրությանը, ինչը նա չի արել: Էլ չենք խոսում այն մասին, որ ՄԱԿ-ի ներկայիս սահմանման համաձայն՝ Ալժիրում տեղի ունեցած իրադարձությունները չենք կարող որակել որպես ցեղասպանություն: Ավելին, ի պատասխան «Ալժիրի ցեղասպանության» մասին Էրդոգանի հայտարարությունների, Ալժիրի վարչապետ Ահմեդ Օյախյան Թուրքիային կոչ է արել այլևս չշահարկել Ալժիրում Ֆրանսիայի գաղութատիրության ժամանակաշրջանում (1830-1962թթ.) ալժիրցիների սպանության հարցը: Ալժիրի վարչապետը հավելել է, որ յուրաքանչյուր երկիր իրավունք ունի պաշտպանելու իր շահերը, սակայն «որևէ մեկն իրավունք չունի ալժիրցիների թափած արյան հաշվին սեփական գործերն առաջ տանելու»: Վարչապետը նաև ընդգծել է, որ Ալժիրում պատերազմի ժամանակ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է եղել և որպես այդպիսին նյութական աջակցություն է ցուցաբերել Ֆրանսիային: «Մենք մեր թուրք ընկերներին ասում ենք՝ դադարեցրեք քաղաքական նպատակներով շահարկել գաղութատիրության հարցը»³², - մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Օյախյան: Ալժիրի վարչապետը բացահայտել է թուրքական կառավարության կեղծավորությունը, և ելնելով նրա հայտարարությունից՝ կարելի է ընդգծել, որ Թուրքիան, մեղադրելով Ֆրանսիային Ալժիրում ցեղասպանության իրագործման հարցում, անուղղակիորեն հայտնվում է հանցակցի կարգավիճակում: Ֆրանսիայի գաղութատիրության դեմ 1954–1962թթ. ալժիրցիների մղած պայքարում, որի ընթացքում արաբ պատմաբանների տվյալներով մեկ միլիոնից

³⁰ Douglas S. Irvin, Genocide Denial Bans: What Would Raphael Lemkin Do?, (<https://www.turkishnews.com/en/content/2012/02/26/turkey-france-genocide-denial-raphael-lemkin/>, դիտվել է՝ 08.03.2018):

³¹ Լեմկինի «Ցեղասպանության պատմության» ամբողջական ցանկը տե՛ս **Lemkin R.**, Lemkin on Genocide, ed. by Jacobs S. L., Lanham, Lexington Books, 2012, p. 17-19.

³² Algeria to Turkey: Stop making capital out of French colonisation, 01.08.2012, (<http://middle-east-online.com/english/?id=49876>, դիտվել է՝ 09.03.2016):

ավելի մարդ է զոհվել, Թուրքիան օժանդակել է Ֆրանսիային, այսինքն՝ նպաստել է ցեղասպանության իրագործմանը:

Ժխտողական շրջանակների կողմից առաջ տարվող այսպիսի նենգափոխման քաղաքականության համատեքստում է տեղավորվում նաև այն մոտեցումը, որ ոչ թե պետք է կենտրոնանալ անցյալում տեղի ունեցած ցեղասպանությունների վրա, այլ անհրաժեշտ է քրեականացնել ներկայիս ցեղասպանությունների աջակցությունը: Իվրին-Էրիկսոնն այս առիթով նշում է. «Թող մենք արդար լինենք, մենք բոլորս ապրում ենք ոսկորների վրա կառուցված երկրներում: ԱՄՆ-ում մենք թաքցնում ենք մեր ցեղասպանությունը: Ի՞նչ կաներ Լեմկինը, եթե լսեր ցեղասպանության ժխտման քրեականացման այս քննարկման մասին: Նա, ամենայն հավանականությամբ, մատնացույց կաներ այն ցեղասպանությունները, որոնց կառավարությունները լուռ կամ ուղղակի աջակցում են, Լիբիայից, Իրաքից մինչև Կոնգո: Նախկին ցեղասպանությունների ժխտումը քրեականացնելու փոխարեն մեր կառավարությունները պետք է քրեականացնեն ժամանակակից ցեղասպանությունների աջակցությունը»³³:

Այս մոտեցումը վտանգավոր է, քանի որ հենց անցյալի ցեղասպանությունների անարգել և անպատիժ իրագործումը ճանապարհ է բացել հետագա ցեղասպանությունների իրագործման համար: Եվ պատահական չէ, որ Հիտլերը խրախուսում էր իր գեներալներին ներխուժել Լեհաստան՝ հարցնելով. «Ո՞վ է, ի վերջո, այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»³⁴:

Ժամանակակից ցեղասպանությունների իրագործումը կանխելու տեսանկյունից էական նշանակություն ունի պատմական արդարության վերականգնումը, որի դեպքում Թուրքիան կատերեսվի սեփական պատմությանը: Ինչպես նշում է Գրեգորի Սթենթոնը՝ «Genocide Watch» կազմակերպության նախագահը, ժխտումը ցեղասպանության շարունակությունն է, քանի որ այն շարունակական փորձ է հոգեբանական և մշակութային առումով ոչնչացնելու զոհ խմբին³⁵: Լեմկինը ևս բացատրում էր, որ ցեղասպանության ժխտումը նպատակ է հետապնդում սպանել ցեղասպանության զոհերին երկրորդ անգամ՝ ոչնչացնելով նրանց աշխարհի հիշողությունից նրանց հիշատակը աշխարհի հիշողությունից վերացնելու միջոցով³⁶: Նրա այդ գաղափարը զարգացրել է նաև Նոբելյան մրցանակի դափնեկիր պրոֆեսոր Էլի Վիզելը, որի համար ժխտումը կրկնակի հանցագործություն է, որն աշխատում է սպանել տեղի ունեցած իրադարձության հիշողությունը³⁷: Նշանավոր ցեղասպանագետներ Իսրայել Չարնին, Ռոբերտ Ջեյ Լիֆթոնը, Դեբորահ

³³ Douglas S. Irvin, Genocide Denial Bans: What Would Raphael Lemkin Do?, (<https://www.turkishnews.com/en/content/2012/02/26/turkey-france-genocide-denial-raphael-lemkin/>).

³⁴ Rafter N., The Crime of All Crimes: Toward a Criminology of Genocide, New York and London, New York University Press, 2016, p. 136.

³⁵ Stanton G., Cost of Denial, (<http://genocidewatch.net/about-us-2/cost-of-denial/>).

³⁶ Fournet C. and Pégrier C., 'Combating genocide denial via law: État des lieux of anti-denial legislation,' In *Holocaust and Genocide Denial: A Contextual Perspective*, eds. Jensen O., Behrens P. and Terry N., Taylor & Francis, 2017, p. 217.

³⁷ Նույն տեղում:

Լիփսթայդը, Էրիկ Մարկուսենը, Ռոջեր Սմիթը գտնում են, որ ժխտողականությունը ցեղասպանության վերջնական փուլն է, այն ձգտում է անարգել ցեղասպանության գոհերին, իսկ մեղավորներին՝ արդարացնել: Ժխտողականությունը ճանապարհ է բացում ապագա ցեղասպանությունների իրագործման համար³⁸:

* * *

Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտողների կողմից առաջ քաշվող հաջորդ թեզը վերաբերում է ցեղասպանության հանցագործության սահմանման բնույթին, ըստ որի՝ Լեմկինի կողմից առաջ քաշված ցեղասպանության սահմանումը ընդգրկում իմաստ ունի, և այն ներառում է փոքրամասնությունների տնտեսական, սոցիալական, մշակութային, ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացումը: Իսկ օրենքի վերջին զարգացումների արդյունքում ցեղասպանություն է համարվում ոչ թե ցանկացած գործողություն, որն ուղղված է ոչնչացնելու ցանկացած խմբի, այլ միայն որոշակի խմբերի ֆիզիկապես կամ կենսաբանական ոչնչացումը: Այլ խոսքով ասած, ըստ ժխտողականների, նեղացել են Լեմկինի կողմից սկզբնապես սահմանված շրջանակները, որի դեպքում բացառվում է ցեղասպանությունը մեկնաբանել որպես խմբերի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային ոչնչացում: 1946 թ. դեկտեմբերի 11-ի բանաձևում նույնպես նշվում է, որ ցեղասպանությունը տեղի է ունենում կրոնական, ռասայական, քաղաքական և այլ հիմքերի առկայության դեպքերում: Այսինքն՝ բանաձևի նախաբանում նշվում է, որ քաղաքական խմբերի նկատմամբ կարող է տեղի ունենալ ցեղասպանություն, այնինչ 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում խոսքը քաղաքական խմբերի ոչնչացման մասին չէ³⁹: Թուրքական քարոզչամեքենան փորձում է ներկայացնել, թե հայերի ոչնչացումը Օսմանյան կայսրությունում տեղի է ունեցել քաղաքական դրդապատճառներով, հայերը հանդես են եկել որպես քաղաքական խումբ, քանի որ պայքարել են անկախության համար, հայդուկային շարժում են ծավալել, ապստամբությունների են դիմել և այլն:

Ըստ թուրք դիվանագետ, ժխտողական Գյունդուզ Ակթանի՝ քաղաքական խմբերի ոչնչացման դեպքում գոյություն ունի պայքար երկու խմբերի միջև, և այդ պայքարի արդյունքում խմբերից մեկը մյուս խմբի նկատմամբ իրականացնում է զանգվածային սպանություններ, կոտորածներ, հասցնում է վնասներ, տե-

³⁸ Charny I., նշվ. աշխ., էջ 25:

³⁹ Aktan G., "The Armenian Problem and International Law," in Ataöv T. (ed.), *The Armenians in the Late Ottoman Period*, (Turkish Historical Society, 2001), pp. 266, 268-272, (<http://www.mfa.gov.tr/data/dispolitika/ermeniidialari/gunduz-aktan-the-armenian-problem-and-international-law-2001.pdf>, դիտվել է՝ 08.03.2018): Միջազգային իրավունքի մասնագետ Յուրի Բարսեղովը միջազգային իրավունքի տեսանկյունից ցույց է տվել Գյունդուզ Ակթանի կողմից առաջ քաշվող ժխտողական թեզերի սնանկությունը: Տե՛ս Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида. (О концепции члена «Комиссии примирения» Гюндюз Актана), Готика, Москва, 2002. (<http://armenianhouse.org/barsegov/genocide-ru/doctrine/doctrine.html>, դիտվել է՝ 08.03.2015):

դահանության է ենթարկում: Վնասված խումբը կոչվում է քաղաքական խումբ: Քաղաքական պայքարի ընթացքում քաղաքացիների սպանությունը նույնպես հանցագործություն է, սակայն ոչ ցեղասպանություն: Ալյթանի կարծիքով 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայում ընդունվեց ցեղասպանության նեղ սահմանումը, որի արդյունքում հայերը՝ որպես քաղաքական խմբավորում, մնացին կոնվենցիայի շրջանակներից դուրս: Եվ քանի որ Նյուրնբերգյան միջազգային դատարանի սկզբունքների համաձայն՝ քաղաքական, կրոնական, ռասայական, էթնիկական շարժառիթներով հետապնդումները համարվում են մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ, ապա հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունները համարվում են որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ, քանի որ դրանց իրագործման պատճառները եղել են քաղաքական⁴⁰:

Նմանատիպ տեսակետ է առաջ քաշում նաև ժխտողական, ԱՄՆ-ի Լուիսվիլի համալսարանի պատմության պրոֆեսոր Ջապին Մաքարթին. «Ցեղասպանություն եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինը մշակութային, սոցիալական, տնտեսական և քաղաքական խմբերի ոչնչացումը բնութագրել է որպես ցեղասպանություն: Օսմանյան կայսրությունում եղել են այդպիսի բազմաթիվ ցեղասպանություններ: Բազմաթիվ խմբեր այլ խմբերի վրա են հարձակվել: Այնպես որ ցեղասպանություն բառի կիրառումն (նկատի ունի Հայոց ցեղասպանության դեպքում – Ն.Պ.) անիմաստ է»⁴¹:

Հայերի կողմից ապստամբություն բարձրացնելու և փոխադարձ կոտորածների մասին և որպես քաղաքական խումբ հանդես գալու վերաբերյալ ժխտողականների թեզերն ընդամենը պատմական իրողությունները կեղծելու տարբերակներ են:

Թուրքական հրամանատարության զեկույցներում հանդիպում ենք պատերազմի ընթացքում հայերի հավատարմության մասին բազմաթիվ արձանագրությունների, Օսմանյան կայսրության նկատմամբ հայերի հավատարմության մասին տեղեկություններ կան նաև Լեմկինի թղթերում: Դրա հետ մեկտեղ օտարերկրյա արխիվային բազմաթիվ նյութերը և օտարերկրյա պաշտոնյաների, այդ թվում նաև Օսմանյան կայսրության այն ժամանակվա դաշնակիցներ Գերմանիայի⁴²

⁴⁰ Aktan G., “The Armenian Problem and International Law,” էջ 71,72:

⁴¹ Presentation by Prof. Justin McCarthy at the Seminar on Turkish-Armenian Relations organized by the Democratic Principles Association on March 15, 2001, (<http://www.mfa.gov.tr/presentation-made-by-prof-justin-mccarthy-seminar-on-turkish-armenian-relations-organized-by-the-democratic-principles-association-15-march-2001-istanbul.en.mfa>, դիտվել է՝ 07.03.2015):

⁴² Գերմանացի պատմաբան և լրագրող Վոլֆգանգ Գուստը Գերմանիայի արտգործնախարարության փաստաթղթերում արտացոլված փաստերի հիման վրա ի ցույց է դրել Հայոց ցեղասպանության իրագործման իրողությունը: Էրզրումում Գերմանիայի փոխիյուպատոս Լյուդվիգ Մաքսիմիլիան Էրվին ֆոն Շոյբներ-Ռիխթերը Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված գործողությունները որակում էր որպես «բռնի բնաջնջման քաղաքականություն, որը ժողովրդի բռնի ոչնչացում» և «հայերի բացարձակ ոչնչացում»: Ռիխթերի գործընկերը՝ Հայնրիխ Բերգֆելդը, Տրապիզոնից նույնպես հայտնում էր հայերին ամբողջապես ոչնչացնելու թուրքական ծրագրերի մասին, իսկ փոխիյուպատոս Հերման Հոֆման-Ֆյոլկերսամբը Ալեքսանդրեթից գրում էր, որ տարբերություն չկա հայերի տեղահանությունների և նրանց բնաջնջման միջև: Գերմանա-

և Ավստրո-Հունգարիայի զեկույցները փաստում են, որ հայերի համընդհանուր ապստամբություն չի եղել, այլ ընդհակառակը՝ հայերը ինքնապաշտպանության են դիմել՝ այլ ելք չունենալու պատճառով: Իսկ Վանի ինքնապաշտպանությունը, որն ամենահաճախն է նշվում իբրև ապստամբության փորձ, 1915 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում էր, այն դեպքում, երբ նախքան այդ զանգվածային սպանություններն արդեն իսկ սկսվել էին: Նույնիսկ Ավստրիայի փոխամարշալ Յոզեֆ Պոմիանկովսկին Վանի հայերի ինքնապաշտպանությունն անվանում է «հուսահատ քայլ»⁴³: Պատահական չէ, որ ցեղասպանություն (genocide) եզրույթի գերմանական տարբերակը՝ «völkermord» եզրույթը, Գերմանիայի քրիստոնեական ամսագրերում առաջին անգամ հիշատակվում էր 1896 թ.: Գերմանացի բողոքական աստվածաբան, Հալլե Վիտտենբերգի համալսարանի պրոֆեսոր Վիլլիբրալդ Բայշլագը «Deutsch-evangelische blätter» ամսագրում 1896 թ. սկզբին գրում է. «Այլևս հնարավոր չէ ժխտել, որ մի քանի տարիների ընթացքում թուրքական կառավարությունը և բնակչությունը արյունոտ փորձ են կիրառել, որը մոտ է «völkermord»-ի (ցեղասպանության) փորձին»⁴⁴: Այսինքն՝ Լեմկինի կողմից ցեղասպանություն (genocide) միջազգայնորեն ճանաչված եզրույթի ստեղծումից 38 տարի առաջ արդեն գերմանական մամուլում հիշատակվում էր այդպիսի երևույթի մասին: Նման պարագայում փոխադարձ կոտորածների մասին առաջ քաշվող դրույթի փաստական լինելու մասին խոսք լինել չի կարող: Ինչպես նշում է իրավաբան, միջազգային իրավունքի մասնագետ Շավարշ Թորիկյանը, 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի երկրորդ և երրորդ հոդվածներից բխող անհամար ոճիրներ են իրականացվել հայերի նկատմամբ, և այդ իմաստով Հայոց ցեղասպանությունը մարդկության պատմության մեջ երբևիցե իրագործված ցեղասպանություններից ամենաամբողջականն է⁴⁵:

Պատմական իրողությունը ժխտող հեղինակների փաստարկների շինծու լինելը ցույց է տրվում նաև Լեմկինի աշխատություններում և թղթերում: Լեմկինը երբեք Հայոց ցեղասպանությունը չի դիտարկել որպես քաղաքական խմբավորումների պայքար, որի շրջանակներում հայերը կրնակավելին որպես քաղաքական խումբ: Նյու Յորքի Հրեական պատմական ընկերակցության Ռաֆայել Լեմկինի հավաքածուում պահպանված անտիպ թղթերից մեկում, որը թվագրված է 1951 թ. փետրվարի 12-ով և չի հրապարակվել, մասնավորապես նշվում է. «Ինչ վերաբերում է ցե-

ցի դեպքանները ևս նույն կարծիքին էին. 1915թ. հուլիսի 7-ին Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմը կանցլեր Բետման Հոլվեգին գրում էր, որ թուրքական կառավարության նպատակը կայսրության տարածքից հայ ազգին վերացնելն է: Իսկ գերմանացի դիվանագետ Պաուլ Վոլֆ Մատերնիխը հայերի տեղահանությունների հիմնական նպատակը համարում էր հայ ազգի ամբողջական ոչնչացումը: Տե՛ս **Gust W.**, *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, New York and Oxford, Berghahn Books, 2014, p. 79.

⁴³ **Dadrian V.**, *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification*, Cambridge, MA and Toronto, Zoryan Institute, 1999, p.13.

⁴⁴ **Ihrig S.**, *Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler*, Cambridge, Massachusetts, London, Harvard University Press, 2016, p. 55.

⁴⁵ **Թորիկյան Շ.**, նշվ. աշխ., էջ 65, 66:

դասականությանը, «խումբ» բառը չի կարող օգտագործվել առանց ազգային, կրոնական, ռասայական կամ էթնիկական ածականների: Կոնվենցիան նպատակային օգտագործում է ազգային, ռասայական, կրոնական և էթնիկական ածականները՝ փոխանցելու համար, որ պետության բոլոր բնակիչները կապված են միմյանց հետ ռասայական, կրոնական և ազգային ծագմամբ: Անհրաժեշտ է ոչնչացնել որոշակի խմբի պատկանող ամեն մի բնակչի, որպեսզի այդ գործողությունները լինեն ցեղասպանություն: Արդյոք ցեղասպանություն է, որ Թուրքիայում ապրող 3 մլն հայերից ոչնչացվեց 1.2 մլն-ը, ինչպե՞ս դա եղավ: Արդյոք ցեղասպանություն չէ՞ր, որ Հիտլերը սպանեց միայն վեց միլիոն հրեաների այն 7.5 մլն հրեաներից, որոնք բռնազավթված Եվրոպայում գտնվում էին իր հսկողության տակ: Ցեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածը ցույց է տալիս, որ ազգային կամ կրոնական խմբի մի մասի ոչնչացումը համարվելու է ցեղասպանություն: Սակայն այդ (ոչնչացվող խմբի – Ն.Պ.) մասը պետք է լինի էական⁴⁶: Կոնվենցիայի նախաբանում հայտարարվում է, որ ոչնչացումը պետք է լինի այնպիսի բնույթի, որ լուրջ կորուստներ պատճառի մարդկությանը⁴⁷: Կարո՞ղ է խումբը ոչնչացվել ընտանիքները քայքայելու և ծնունդը կանխելու միջոցով: Իհարկե, կարող է: Եփրատ գետի երկայնքով հայերի տեղահանությունների ժամանակ քուրդ հրոսակները սրերով բացեցին հղի կանանց որովայնները և պտուղները նետեցին գետը: Կանայք կրում են այս ոճրագործության ողջ բեռը, քանի որ նրանք համարվում են ազգի ապագա սերունդների կրողը»⁴⁸:

Լեմկինից մեջբերված այս միտքը լիովին հիմնադրված է դարձնում ժխտողականների կողմից առաջ քաշվող այն փաստարկը, թե Լեմկինը Հայոց ցեղասպանությունը դիտարկել է ընդգրկուն սահմանման ներքո՝ քաղաքական խմբավորման ոչնչացման տեսքով, ավելին՝ նշված նյութում Լեմկինը կոնվենցիայի երկրորդ հոդվածի համաձայն՝ դիտարկում է երկու առավել հայտնի ցեղասպանությունների դեպքերը՝ Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոստը:

* * *

Ժխտողականների կողմից առաջ քաշվող մյուս թեզն այն մասին է, թե իբր 1940-ական թթ. վերջին միայն Լեմկինը սկսեց բնութագրել հայերի՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած ողբերգությունը որպես ցեղասպանություն: Երկրորդ համաշխարհային ժամանակ Լեմկինն աշխատում էր ԱՄՆ-ում, և նրա «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» գիրքը հրատարակվեց Քարնեգի միջազգային խաղաղության

⁴⁶ Թիրախային խմբի էական մասը կարող է գնահատվել քանակական (խմբի համեմատությամբ զոհերի թվով) կամ որակական չափանիշներով (խմբի ներսում զոհերի կարգավիճակով) և պետք է գնահատվի խմբի մնացած մասի հետ կատարվածի համատեքստում: Տե՛ս **Դաքեսյան Ռ.**, 1915թ. հայերի դեմ իրագործված կոտորածների իրավաբանական հետևանքները և դրանց լուծման դատական ու արդարադատական հնարավոր եղանակները, Երևան, Փրինթինգտոն, 2015, էջ 94:

⁴⁷ **American Jewish Historical Society**, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 3, Manuscript on Genocide, February 2, 1951, p. 3.

⁴⁸ Նույն տեղում, էջ 7:

հիմնադրամի կողմից: Եվ այդ գրքում նա ցեղասպանություն եզրույթն առաջին անգամ կիրառելու միջոցով բնորոշում է գերմանացիների կողմից իրագործված հանցագործությունը: Իսկ մի քանի տարի հետո, երբ ցեղասպանությունը սկսեց ասոցացվել բազմաթիվ պատմական իրադարձությունների հետ, Լեմկինը վկայակոչեց նաև հայկական դեպքը, նա Ամերիկայի քրիստոնեական կազմակերպությունների ազդեցության տակ էր ընկել: Արդեն XIX դարի վերջին ամերիկյան քրիստոնյաները համախմբվել էին եկեղեցիների շուրջն այնպիսի համոզմունքների ազդեցության տակ, որ օսմանցի մահմեդականները կոտորում են անմեղ քրիստոնյաներին: 1940-ական թթ. վերջին ցեղասպանության հայեցակարգն օգտագործվել է՝ ակտիվացնելու քրիստոնյա բնակչության հետաքրքրությունը տարածաշրջանում⁴⁹:

Նշենք, որ այս թեզը ևս բացարձակ կեղծիք է, որով ժխտողականները փորձում են իրենց հիմնավորումների համար կրոնական ենթատեքստ գտնել: Այնինչ հաստատ է, որ ԱՄՆ-ի քրիստոնեական կազմակերպությունների ազդեցության արդյունքում չէ, որ Լեմկինը շարադրել է Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ իր տեսակետները: Հայոց ցեղասպանության վերաբերյալ Լեմկինն իր մտահոգությունը հայտնել է դեռևս Լվովի համալսարանում սովորելու տարիներին,⁵⁰ երբ նույնիսկ նրա մոտքով անգամ չէր անցնում, որ կարող է մի օր տեղափոխվել ԱՄՆ:

Վստահ չլինելով իրենց առաջ քաշած դիտարկումների ճշմարտացիության հարցում՝ ժխտողական հեղինակները փորձում են ստվերել Լեմկինի՝ Հայոց ցեղասպանության մասին հիշատակությունները՝ նշելով, որ նրա կարծիքն էական նշանակություն չունի: Եվ այս մոտեցումը հիմնավորելու համար նրանք ներկայացնում են միջազգային իրավունքի ճանաչված մասնագետ Վիլյամ Շաբասի՝ «Ցեղասպանության հետազոտության հանդեսում» (*Journal of Genocide Research*) տեղ գտած հետևյալ խոսքերը. «Դատարաններին այլևս չեն հետաքրքրում, թե ինչ էր Լեմկինը մտածում ցեղասպանություն եզրույթի վերաբերյալ, որքան որ Կանտոն կամ Մոնտեսքյոն մտածում էին սպանության կամ բռնաբարության մասին: Դա չի համապատասխանում: Ցեղասպանության կանխարգելումը և հետապնդումը Ռաֆայել Լեմկինի տեսլականի նկատմամբ հավատարմության մեջ չէ: Նրա 1944թ. գիրքը մեր Ավետարանը չէ»⁵¹:

Նշենք, որ Շաբասի այս դիտարկումն էական նշանակություն չունի իր գիտական մոտեցումների հարցում: Շաբասը պնդում է, որ ցեղասպանություն եզրույթը չպետք է կիրառվի ցանկացած ոճրագործություն, ներառյալ զանգվածային սպանությունները, նկարագրելու հարցում: Շաբասը ցեղասպանությունն անվանում է «հանցագործությունների հանցագործություն» և գտնում է, որ անցած

⁴⁹ Buenos T., The Cyclicity Of The Genocide Accusation, Prospects For Turkish-Armenian Relations: Proceedings of the Symposium Organized by AVİM on 30 April 2015, AVİM Conference Book 15, Ankara, 2015, p. 78.

⁵⁰ Տե՛ս Power S., նշվ. աշխ., էջ 17-19:

⁵¹ Տե՛ս Schabas W., "Commentary on Paul Boghossian, "The Concept of Genocide", *Journal of Genocide Research*, 2010, vol 12, no 1-2, p. 96. Տե՛ս նաև Buenos T., "Many Genocides of Raphael Lemkin," *Daily Sabah*, 11.09.2014, (<http://www.dailysabah.com/opinion/2014/09/11/many-genocides-of-raphael-lemkin>, դիտվել է՝ 10.03.2015):

դարի ընթացքում երեք ցեղասպանություն է տեղի ունեցել՝ Հայոց ցեղասպանությունը⁵², հրեաների Հոլոքոստը և Ռուսադայում թուրքիների նկատմամբ իրականացված ցեղասպանությունը: Ավելին, Կանադայի Ջորյան ինստիտուտին տված հարցազրույցում Շաբասը խոսում է ցեղասպանության իրավական հետևանքների մասին, որի ընթացքում նա անդրադառնում է այն հարցին, թե արդյոք հայերը պետք է իրավական գործընթաց սկսեն՝ Թուրքիայից հատուցում ստանալու համար: Շաբասը կարևորում է համապատասխան իրավական աստիճանի գտնելու հարցը՝ Հայոց ցեղասպանության փոխհատուցման խնդիրը քննարկելու համար: Նա նաև ընդգծում է բարոյական սկզբունքների կարևորությունը, որոնք Գերմանիան օգտագործեց՝ Հոլոքոստի իրականացումից հետո կամավոր հատուցում տրամադրելու համար⁵³:

Չգտնելով ակնհայտ փաստերը հերքելու անհրաժեշտ հիմնավորումներ՝ ժխտողական Գյունդուգ Ակթանը փորձում է անգամ կասկածի տակ դնել Լեմկինի մասնագիտական ունակությունները: Նա նշում է, թե Լեմկինը, ի թիվս ցեղասպանության այլ դեպքերի՝ ներառյալ Կարթագենի անկումը, Տիտոսի կողմից Երուսաղեմի ավերումը, Խաչակրաց արշավանքները, ալբիցոյցիների և վալդենսների կոտորածները, հղում է կատարում նաև հայկական կոտորածներին: Ըստ նրա՝ Լեմկինը ոչ այս դեպքերի մասնագետ էր, ոչ էլ պատմաբան, և չի կարելի ենթադրել, որ այս թվարկումները սպառնիչ են ցեղասպանության պնդումների համար, կամ իրավաբանորեն դրանք ցեղասպանություն են⁵⁴: Նշենք, որ Ակթանի այս տեսակետն ընդամենը մոլորեցնելու փորձ է, եթե Լեմկինի աշխատություններն արժեք չունենային, ինչո՞ւ պետք է դրանք դրվեին ցեղասպանագիտության և ցեղասպանագիտության պատմության հիմքում:

Իսկ ժխտողական պատմաբան, Յուտայի համալսարանի պրոֆեսոր Հաքան Յավուզն ավելի հեռուն է գնում: Նրա կարծիքով գոյություն ունի ցեղասպանության երկու սահմանում: Դրանցից առաջինը, որն ընդունված է իրավական փորձագետների կողմից, ցեղասպանություն եզրույթը սահմանում է որպես էթնիկական, կրոնական, ազգային կամ ռասայական խմբերի կանխամտածված ոչնչացումը: Ըստ այդ սահմանման՝ իրավական փորձագետները և միջազգային դատարանները ձգտում են որոշել, թե կա՞ «հատուկ դիտավորություն» նշված խմբերից մեկի սպանության համար: Նրա կարծիքով բռնարարքները կամ էթնիկական

⁵² 1915 թ. դեպքերի մասին Շաբասը հանգամանորեն խոսել է Panorama.am կայքին տված հարցազրույցում: Sté u William Schabas: Term Genocide may be applied to events of 1915, contrary to some governments' claims against using it, 07/05/2015,

(<http://www.panorama.am/en/news/2015/05/07/schabas/57405>, դիտվել է՝ 10.03.2015):

⁵³ Ջորյան ինստիտուտին տված Շաբասի հարցազրույցը տե՛ս հետևյալ հղումով՝

(<https://www.youtube.com/watch?v=E0dEhgvgfMQ>, դիտվել է՝ 12.03.2015):

⁵⁴ Aktan G., A Turkish View on the Applicability of the Genocide Convention to the Armenian Incidents and the ICTJ's report, 2/19/2003, (<http://web.hurriyetdailynews.com/a-turkish-view-on-the-applicability-of-the-genocide-convention-to-the-armenian-incidents-and-the-ictjs-report.aspx?pageID=438&n=a-turkish-view-on-the-applicability-of-the-genocide-convention-to-the-armenian-incidents-and-the-ictjs-report-2003-02-19>).

գտումները միայն իրենցով չեն համարվում որպես ցեղասպանություն: Ցեղասպանության երկրորդ սահմանումը, որն առավել հաճախ օգտագործվում է ցեղասպանագետների աշխատություններում, «դիտավորության» փոխարեն հիմնվում է «հետևանքի» վրա: Եվ ցեղասպանության այս սահմանման կողմնակիցները ցեղասպանություն են անվանում այն դեպքերը, երբ մասնավոր խումբն ապրում էր որոշակի վայրում պատմության ինչ-որ ժամանակահատվածում, բայց էլ չի ապրում այնտեղ տեղափոխման, արտաքսման և կամ սպանության պատճառով: Այս տեսանկյունից կան ցեղասպանության շուրջ 700-800 դեպքեր⁵⁵: Փաստորեն Հ. Յավուզը փորձում է հարցականի տակ դնել Հայոց ցեղասպանության իրագործման հարցում «հատուկ դիտավորության» առկայությունը:

Նախ՝ նշենք, որ ցեղասպանության իրավական սահմանումը տրված է կոնվենցիայում, և հատուկ դիտավորության առկայությունը ցեղասպանության հանցագործության առանցքային բաղադրիչներից մեկն է: Ահա թե Լեմկին ինչ է գրում Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի վերաբերյալ իր անտիպ ուսումնասիրություններից մեկում. «Թուրքերը, ովքեր մասնակցում էին 1.2 մլն հայերի ոչնչացմանը, մեղավոր են ցեղասպանության համար, նրանք գործել են հայ ազգին ոչնչացնելու մտադրությամբ»⁵⁶:

* * *

Թուրքերի կողմից նաև փորձ կատարվեց խեղաթյուրելու Լեմկինի գիտական գործունեության և ցեղասպանության հանցագործության հայեցակարգի ստեղծման հարցում Հայոց ցեղասպանության նշանակությունը «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործի շրջանակներում:

Թուրք ազգայնական գործիչ, Թուրքիայի Աշխատավորական կուսակցության ղեկավար Դոդու Փերինչեքը, ով հայտնի է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ իր գործունեությամբ, Շվեյցարիայում 2005թ. կազմակերպված մի գիտաժողովի ժամանակ Հայոց ցեղասպանությունը որակել էր «միջազգային սուտ»: Շվեյցարական դատարանն այս հայտարարության համար 2008թ. նրան դատապարտել էր 90-օրյա պայմանական ազատազրկման կամ դրան համարժեք տույժի, ինչպես նաև 12 հազ. շվեյցարական ֆրանկ տուգանքի: 2013թ. դեկտեմբերի 17-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավարարել է Փերինչեքի հայցն ընդդեմ Շվեյցարիայի⁵⁷: ՄԻԵԴ-ի վճռում ասված է, որ Շվեյցարիան խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ

⁵⁵ Yavuz H., Past Tragedies And The Present, Prospects For Turkish-Armenian Relations: Proceedings of the Symposium Organized by AVİM on 30 April 2015, AVİM Conference Book 15, Ankara, 2015, pp. 59-60.

⁵⁶ AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 3, The Convention for the Prevention and Punishment of Genocide, undated, p. 2.

⁵⁷ ՄԻԵԴ վճիռը տե՛ս Case of Perinçek v. Switzerland, (Application no. 27510/08), 17/12/ 2013, ([https://hudoc.echr.coe.int/eng?i=001-139276#{"languageisocode":\["ENG"\],"appno":\["27510/08"\],"documentcollectionid2":\["CHAMBER"\],"itemid":\["001-139724"\]}](https://hudoc.echr.coe.int/eng?i=001-139276#{)).

հոդվածը⁵⁸, այն է՝ խոսքի ազատության իրավունքը: Վճռին կից առանձին դատավորներ իրենց հատուկ կարծիքները հիմնավորելու համար վկայակոչել են Լեմկինի գործունեությունը: Դատավորներ Ռայմոնդիի և Սաջոյի համատեղ կարծիքում (Joint Concurring Opinion of Judges Raimondi and Sajó) նշվում էր. «Մենք գիտենք, որ երբ Ռաֆայել Լեմկինը («Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում», 1944 թ.) կազմեց ցեղասպանություն եզրույթը, նա նկատի ուներ 1915 թ. կոտորածները և տեղահանությունները: Այս եզրույթի օգտագործումը տեղին է՝ այդ իրադարձությունները նկարագրելու համար ընդհանուր լեզվում և չի կարող առաջացնել ցանկացած պատիժ»:

Վուքինիքի և Պինտո դե Ալբուքուերքուի մասամբ անհամաձայն կարծիքի (Joint Partly Dissenting Opinion of Judges Vučinić and Pinto De Albuquerque) եզրակացության մեջ նշվում էր. «1949թ. CBS-ին տված հարցազրույցում, որը մատչելի է համացանցում, Ռաֆայել Լեմկինը, ով ստեղծեց ցեղասպանություն եզրույթը և Ցեղասպանության կոնվենցիայի շարժիչ ուժը, ասում էր. «Ես հետաքրքրվեցի ցեղասպանությամբ, որովհետև դա տեղի է ունեցել հայերի հետ, և դրանից հետո հայերը շատ կոշտ վերաբերմունքի արժանացան Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ցեղասպանության իրագործման մեջ մեղավոր հանցագործները չպատժվեցին»: Տասնամյակների ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ ծրագրված զանգվածային սպանությունը, համակարգված խոշտանգումը և կազմակերպված տեղահանումը և քրիստոնեության կանխամտածված ջնջումը քսաներորդ դարի սկզբին դիտվում էր որպես «մոռացված ցեղասպանություն»: Այսպիսով, մենք գտնում ենք, որ ցեղասպանության ժխտման քրեականացումը և հայցվորի պատիժը Հայոց ցեղասպանության ժխտման համար համապատասխանում է պատասխանող պետությունում գործող օրենքին, չի խախտում կոնվենցիայի 10-րդ հոդվածը»:

1914թ. փետրվարին ցեղասպանագիտության ոլորտի ճանաչված մասնագետները բաց նամակ հրապարակեցին՝ նշելով, որ պատմական և հայեցակարգային անճշտություններ կան «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» ՄԻԵԴ վճռում և կոչ արեցին Շվեյցարիայի կառավարությանը՝ վերանայել դատավճիռը: Բաց նամակում մասնավորապես նշվում էր. «XX դարում տեղի ունեցած միայն երեք ցեղասպանությունները, որոնք ընդունում են ցեղասպանության ուսումնասիրության տեսաբանները (օրինակ, Վիլյամ Շաբարը), հայերի նկատմամբ իրագործված դեպքեր են 1915թ., հրեաների՝ 1940-1945թթ. և թուրքիների դեպքը Ռուսադայում 1994թ.: Հայերի ոչնչացումը կենտրոնական տեղ է զբաղեցրել Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության՝ որպես միջազգային իրավական հանցագործության հայեցակարգի ստեղծման համար, և Լեմկինն էր, որ 1944 թ. ստեղծեց և առաջին անգամ կիրառեց Հայոց ցեղասպանություն եզրույթը: Ցեղասպանություն հանցագործությունները տասնամյակների ընթացքում գիտնականների կողմից որակվել են որպես պատմական իրադարձություններ, և՛ օսմանյան թուրքերի կողմից հա-

⁵⁸ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեքստը տե՛ս հետևյալ հղումով՝ http://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf.

յերի նկատմամբ իրագործված հանցագործությունները 1915թ., և՛ այն հանցագործությունները, որոնք նացիստների կողմից իրագործվել են ընդդեմ հրեաների 1940-ական թթ. Լեմկինի կողմից ցեղասպանություններ են համարվել»⁵⁹:

Ի վերջո, Շվեյցարիայի կառավարությունը դիմեց ՄԻԵԴ՝ բողոքարկելու Փերինչեքի գործով որոշումը: 2014թ. հունիսի 3-ին ՄԻԵԴ-ի հինգ դատավորներից բաղկացած կազմը կայացրեց գործի քննությունը դատարանի Մեծ պալատ ընդունելու մասին որոշում: «Դոդու Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործում որպես երրորդ կողմ ներգրավվեցին նաև Հայաստանի և Թուրքիայի Հանրապետությունները:

Փերինչեքի պաշտպաններին և Թուրքիային հատկապես անհանգստացնում էր այն փաստը, որ շվեյցարական կառավարությունն իր հիմնավորումները ներկայացնելու գործում կարևորում էր Հայոց ցեղասպանության առանցքային դերակատարությունը Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանություն հասկացությունը ստեղծելու հարցում, դրա մասին է վկայում նաև թուրքական «Դեյլի Սաբահ»-ում «Լեմկինի փոսը շվեյցարական գործում» վերնագրով Թալ Բունեսուի հոդվածը, որում նա նշում է. «Լեմկինը կարևոր տեղ է զբաղեցնում շվեյցարացիների համոզմունքում, որ ՄԻԵԴ-ի՝ 2013 թ. դեկտեմբերի որոշումը արհեստական տարբերություններ է ստեղծում Հոլոքոստի և Հայկական ողբերգության միջև: Երկու իրադարձությունների միջև տարբերությունը կարևոր է, քանի որ Շվեյցարիայի կառավարությունը ձգտում է արդարացնել իր դաշնային դատարանի որոշումը՝ նշելով, որ եթե Հոլոքոստի ժխտումը հանցագործություն է, ապա պետք է վերանայվի ՄԻԵԴ-ի որոշումը Շվեյցարիայի դեմ, որ Դոդու Փերինչեքը մեղավոր էր հանցագործության համար՝ մերժելով ցեղասպանությունը՝ որպես Հայկական ողբերգությունը նկարագրող եզրույթ: Շվեյցարիայի գործով Լեմկինի փոսը կարևոր ռեֆլեկտոր է Շվեյցարիայի կառավարության անխոհեմ հայտարարության համար, թե Հոլոքոստը և Հայկական ողբերգության միջև տարբերությունը «կասկածելի է»: Բազմաթիվ հայ համայնքների տառապանքը հայտնի է որպես ողբերգություն, որովհետև դրա անխուսափելիության զգացումը բերում է նրան, որ Անտանտը և հայ անպատասխանատու ազգայնական առաջնորդները համառ փորձեր էին կատարում՝ ոչնչացնելու օսմանյան պետությունը: Ցեղասպանության պատմությունը Լեմկինի սեփական պատմությունը չէ, և այն պետք է գտնի նոր խորհրդանիշ, որն այլևս անճշտություններ չի կատարի»⁶⁰:

2015 թ. հոկտեմբերի 15-ին Եվրոպական դատարանի Մեծ պալատը հրապարակեց «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով դատավճիռը, որով վճռեց, որ Շվեյցարիան խախտել է Դոդու Փերինչեքի խոսքի ազատության իրավունքը:

⁵⁹ Scholars Call for Reexamination of ECHR Judgment on Genocide Denial Case, 16.02.2014, (<https://armenianweekly.com/2014/02/16/scholars-call-for-reexamination-of-echr-judgment-on-genocide-denial-case/>, դիտվել է՝ 15.03.2015):

⁶⁰ Buenos T., “The Lemkin hole in the Swiss case,” Daily Sabah, 01.08.2014, (<https://www.dailysabah.com/opinion/2014/08/01/the-lemkin-hole-in-the-swiss-case>, դիտվել է՝ 18.03.2015):

Վճռում նշվում է, որ հայցվորը՝ տվյալ դեպքում Փերինչեքը, ներկայացրել է, որ 1915թ. և հետագա տարիների իրադարձությունների վերաբերյալ ուսումնասիրությունները շարունակվում են, և դրանց շուրջ գիտնականների միջև փոխհամաձայնություն չկա: Ցեղասպանություն եզրույթը, որը սահմանվել է միջազգային իրավունքի մեջ, չի համապատասխանում Ռաֆայել Լեմկինի մշակած հասկացությանը, որի վերաբերյալ նրա հայտարարությունները ցույց տվեցին, որ եզրույթը ստեղծելիս նա ներշնչվել է բազմաթիվ պատմական իրադարձություններից⁶¹: Պատահական չէ, որ «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» դատավարության ընթացքում Փերինչեքը, պատասխանելով «Ազգ» օրաթերթի հարցերին, նշել է, թե Ռաֆայել Լեմկինը «ցեղասպանություն» բառեզրը ստեղծելիս նկատի չի ունեցել 1915 թ. իրադարձությունները, ավելին՝ Հայոց ցեղասպանությունը բնորոշել է որպես կոտորած: «Լեմկինը իրավաբան չէր: 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայից հետո կարող ենք խոսել ցեղասպանության մասին»⁶², - ընդգծել է Փերինչեքը:

Փաստորեն ստացվում է, որ Փերինչեքը դատական գործընթացի ընթացքում կեղծ փաստարկների և Լեմկինի գործունեությունն աղավաղելու միջոցով հետապնդել է այն նպատակադրումը, թե դատարանը կարող է հարցականի տակ դնել հայերի նկատմամբ կատարված ոճրագործության՝ ցեղասպանություն որակումը, սակայն այս հարցում նրա փայփայած հույսերն ի դերն ելան:

Հրապարակված վճռում Եվրոպական դատարանը նշեց, որ այս գործով դատարանի խնդիրը չէ որոշելու՝ արդյոք Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայ ժողովրդի նկատմամբ կատարված զանգվածային կոտորածներն ու տեղահանումները կարող են որակվել ցեղասպանություն՝ միջազգային իրավունքում այդ հասկացությանը տրված բովանդակության տեսանկյունից: Գործին մասնակցելով երրորդ կողմի կարգավիճակում՝ ՀՀ-ն ակնկալում էր, որպեսզի Եվրոպական դատարանի վճիռը բացառվեն այն ձևակերպումները, որոնք կարող են որևէ կերպ կասկածի տակ առնել Հայոց ցեղասպանության փաստը⁶³:

Բացի դրանից հարկ է ընդգծել, որ հոգուտ Փերինչեքի կայացած ՄԻԵԴ-ի վճիռը առավելապես պետք է դիտարկել քաղաքական հարթության վրա, քան իրավական՝ հաշվի առնելով Թուրքիայի կարևորությունը Եվրոպայի համար: Որոշման քաղաքական լինելու մասին է փաստում այն հանգամանքը, որ Դոդու Փերինչեքը ձերբակալվել էր 2008 թ. «Էրգենեկոն»-ի գործով և ցմահ ազատազրկման դատապարտվել առանց վաղաժամկետ ազատման իրավունքի: Եվ պատահական չէ, որ 2014 թ. մարտի 10-ին դատարանի որոշմամբ նա ազատ արձակվեց, իսկ 2015 թ. սկզբին Թուրքիայի կառավարությունը Փերինչեքի վրայից հանեց երկիրը լքելու արգելքը՝ նրան հնարավորություն տալով մասնակցելու հունվարի 28-ին ՄԻԵԴ-ի

⁶¹ ՄԻԵԴ Մեծ պալատը հրապարակած «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով դատավճիռը տե՛ս հետևյալ հղումով ([https://hudoc.echr.coe.int/eng#{%22tabview%22:%22document%22%22,itemid%22:%22001-158235%22}}\)](https://hudoc.echr.coe.int/eng#{%22tabview%22:%22document%22%22,itemid%22:%22001-158235%22}})).

⁶² «Ազգ» օրաթերթ #3, 30/01/2015, (<http://www.azg.am/AM/2015013006>, դիտվել է՝ 18.11.2015):

⁶³ Տե՛ս ՀՀ դատախազության մեկնաբանությունը ՄԻԵԴ վճիռի կապակցությամբ՝ (<http://www.prosecutor.am/am/mo/4065/>).

Մեծ պալատում դատալսմանը: Պետք է հաշվի առել նաև այն հանգամանքը, որ վերջինս «Թալեաթ փաշա կոմիտեի» ղեկավարն է, և ինքն ու իր թիմը իրենց քաղաքական արշավի ընթացքում բացահայտ ատելություն են սերմանում հայերի նկատմամբ:

Պատմաբան Թաներ Աքչամը թուրքական «Taraf» թերթում փետրվարի 18-ին հրապարակված «Հոլոքոստը չեք կարող ժխտել, իսկ Հայոց ցեղասպանության ժխտումն ազատ է» վերնագրով հոդվածում իրավացիորեն ՄԻԵԴ-ին մեղադրում է երկակի չափանիշների կիրառման մեջ: Ըստ ՄԻԵԴ-ի՝ ցեղասպանություններից մեկը (Հոլոքոստը) ժխտելը հանցանք է, մյուսը (Հայոց ցեղասպանությունը) կարելի է ազատորեն ժխտել: Աքչամի տեսակետով Հոլոքոստի ժխտումը պատժելու համար կիրառվող ցանկացած փաստարկ Հայոց ցեղասպանության համար նույնպես վավերական է⁶⁴:

* * *

Թուրքական քարոզչամեքենան Հայոց ցեղասպանության իրագործումը և Լեմկինի մասնագիտական ունակությունները կասկածի տակ դնելու համար օգտագործում է նաև նացիստների և հայերի համագործակցության մասին խեղաթյուրված փաստարկները: Իսրայելցի գիտնական Յաիր Արոնը նշում է, թե Հայոց ցեղասպանության ճանաչումը խոչընդոտելու թուրք ազգայնականների ջանքերը հանգեցրել են Հայկական լեգեոնին վերաբերող տարբեր քարոզչական հրապարակումների տարածմանը՝ նպատակ ունենալով ներկայացնել հայերին բացասական լույսով⁶⁵:

Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնում (AVIM), որն Անկարայում հիմնադրված վերլուծական կենտրոն է, ժխտողական Սյուրբու Սերվեր Այան Լեմկինի գործունեությունը թուրքական քարոզչամեքենայի մոտիվներով ներկայացրած հոդվածում կասկածի տակ է դնում Հայոց ցեղասպանության խնդրի կարևորությունը Լեմկինի գործունեության մեջ՝ դրան որպես անհրաժեշտ փաստարկ հակադրելով Հայկական լեգեոնի համագործակցությունը նացիստների հետ: «Լեմկինը չգիտեր, թե ինչ է կատարվում Եվրոպայում 1941 թ.-ից հետո, նա նույնիսկ չգիտեր, որ իր հրեա հարազատները շրջապատված էին Հայկական լեգեոնի կողմից, որը հիմնադրվել էր 1941 թ. գեներալ Կանայանի հրամանատարությամբ: Լեգեոնը հետագայում կազմված էր 22.000 տղամարդկանցից, որոնցից 4.800-ը SS-ից էին: Երևում է, որ նա գիտեր հայերի մասին հեռավոր Թուրքիայում, երբ 14 տարեկան էր, բայց չգիտեր հայերի նացիստական 22.000-անոց լեգեոնի մասին, երբ 41 տարեկան էր, և գրում էր «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատությունը: Կամ նա չի տեսել, կամ չի լսել նացիստական հայերի՝ 1945 թ. փետրվարի «Հայաստան» թերթի մասին՝ Հիտլերի ֆո-

⁶⁴ Տե՛ս Թաներ Աքչամի հոդվածը՝ Սիվիլների թարգմանությամբ, (<https://www.civilnet.am/news/2014/02/23/taner-akcam-holocaust-armenian-genocide/211596>, դիտվել է՝ 21.03.2017):

⁶⁵ Տե՛ս **Aaron Y.**, *The Banality of Denial: Israel and the Armenian Genocide*, New Brunswick and London, Transaction Publishers, 2009, pp. 260-261.

տոյով և իր հաղթանակը ինքնասպանություն գործելուց երկու ամիս առաջ»⁶⁶, - գրում է Այան:

Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը հարցականի տակ դնելու նպատակով Հայկական լեգեոնի և նացիստների համագործակցության հարցի շահարկումն ընդամենը սեփական պատմությունից թեման շեղելու անհաջող փորձ է, որը չի կարող դիմանալ քննադատության, քանի որ նացիստական Գերմանիայի ռազմական մեքենային միայն հայկական լեգեոնը չէ, որ ծառայում էր: Նացիստների կողմից հանդես եկող արևելյան լեգեոնների շարքում էին Առաջին կազակական կապալերյան դիվիզիան, Ռուսական ազատագրական բանակը, Վրացական լեգեոնը, Թուրքեստանյան լեգեոնը, Ուկրաինայի ազատագրական բանակը, Վոլգայի թաթարների լեգեոնը, Ադրբեջանական լեգեոնը: Ըստ կրոնական պատկանելության՝ Գերմանիայի կողմից կոչվում էին նաև այլ մահմեդական, ինչպես նաև հինդուիստական և բուդդիստական զորամիավորումներ⁶⁷: Ավելին, ադրբեջանական լեգեոնն ավելի մեծաթիվ էր, քան հայկականը, 35.000-ից 45.000-ի սահմաններում: Եթե շարժվենք ըստ թուրք ժխտողականների տրամաբանության, ապա կստացվի, որ նացիստների իրագործած հանցագործությունների և ցեղասպանության գործում իրենց մեղքի բաժինն ունեն նաև թուրքերն ու ադրբեջանցիները: Պատահական չէ, որ 1941 թ. աշնանը Արևելյան Պրուսիայի շտաբում Հիտլերին այցելած թուրքական պաշտոնաթող գեներալ Էրքիլեթը նրան կոչ էր անում միջնորդել հոգուտ գերմանացիների մոտ գերի ընկած ԽՍՀՄ թուրքալեզու գերիներին: Հիտլերը համակրում էր թուրքերին, դրա համար էլ 1941թ. նոյեմբերին թույլատրեց Թուրքեստանի լեգեոնի ստեղծումը⁶⁸:

Կարևոր հանգամանք է, որ, ի տարբերություն թուրքական զորամիավորումների, Հիտլերը չէր վստահում հայկական և վրացական լեգեոններին: Վերջինս, խոսելով խորհրդային ժողովուրդների ռազմական միավորումների մասին, նշել է. «Ես չգիտեմ՝ ինչպես կվարվեն վրացիները: Նրանք թուրքական ժողովուրդներին չեն պատկանում... Ես կարծում եմ՝ միայն մահմեդականներն են վստահելի... Մնացածին անվստահելի եմ համարում: Այս պահին ես կարծում եմ, որ զուտ կովկասյան գումարտակների ձևավորումը շատ ռիսկային է, մինչդեռ ես ոչ մի վտանգ չեմ տեսնում զուտ մահմեդական զորամիավորումներում... Չնայած Ռոզենբերգի և զինված ուժերի բոլոր հայտարարություններին՝ ես չեմ վստահում նաև հայերին»⁶⁹: Իսկ նացիստական առաջատար տեսաբան Ալֆրեդ Ռոզենբերգը 1938 թ. հրապարակած իր ելույթների ժողովածուում նշում էր, որ 1921 թ. Բեռլինում Թավելաթ փաշայի սպանությունից հետո, «միջազգային մամուլում» հայերի կողմից քարոզարշավ

⁶⁶ Aya S. S., Raphael Lemkin's Armenianism & "G" Witnessing Unfolded!, Avrasya İncelemeleri Merkezi (AVİM) - Center for Eurasian Studies, Blog No: 14. 20.08.2015, p. 4.

⁶⁷ Ավելի մանրամասն տե՛ս Munoz A. J., The East Came West: Muslim, Hindu & Buddhist Volunteers in the German Armed Forces 1941-1945, New York, Axis Europa Books, 2002, 330p.

⁶⁸ Littlejohn D., Foreign Legions of the Third Reich, San Jose, R. James Bender Publishing, vol. 4, 1987, p. 250

⁶⁹ Auron Y., նշվ. աշխ., էջ 263: Տե՛ս նաև Dallin A., German Rule in Russia, 1941-1945: A Study in Occupation Policies, London and Basingstone, Macmillan, 1981, pp. 29, 251.

է տարվել մարդասպանի ազատ արձակման համար՝ հայերի և թուրքերի պայքարի պատմության պատճառով: Ռոզենբերգը հավանություն էր տալիս հայերի ինքնավարության պահանջների նկատմամբ թուրքերի դիմադրությանը՝ համեմատելով հայերին հրեաների հետ, որովհետև նա պնդում էր, որ հայերը ներգրավված են Թուրքիայի դեմ լրտեսության մեջ, ինչպես հրեաները՝ Գերմանիայի դեմ⁷⁰: Նացիստական պարագլուխների համար, ինչպիսիք են Հիտլերը և Ռոզենբերգը, հայերը հավասար կամ նույնիսկ ավելի վատն էին, քան հրեաները⁷¹:

Իսկ Թուրքիան իր հերթին նպատակադրվել էր հոգուտ իր շահերի օգտագործել Գերմանիայի տարած հաղթանակները: 1942 թ. Թուրքիան 26 դիվիզիա էր կենտրոնացրել սահմանի մոտ և պատրաստ էր Ստալինգրադի անկման դեպքում ներխուժել Հայաստան, որը կարող էր ողբերգական հետևանքներ ունենալ հայ ժողովրդի համար, կասկած չկա, որ Թուրքիան կշարունակեր հայերի նկատմամբ իրագործած ցեղասպանությունը:

Ինչ վերաբերում է Սյուքրու Սերվեր Այայի այն կասկածներին, թե ինչպես է ստացվել, որ երբ Լեմկինը պատանի էր, լսել էր Օսմանյան կայսրությունում հայերի ոչնչացման մասին, սակայն չգիտեր Հայկական լեգեոնի և նացիստների համագործակցության մասին, ապա նշենք, որ հայության միայն չնչին մասն է, որ համագործակցել է նացիստների հետ, Նժդեհն ու Դրոն գործակցել են նացիստների հետ՝ ելնելով համակենտրոնացման ճամբարներից հայ ռազմագերիներին փրկելու նկատառումներից: Ավելին, պատերազմի ընթացքում հայ լեգեոնականները վերածվեցին խորհրդային պարտիզանների, ֆրանսիական, հոլանդական, հունական դիմադրական շարժումների⁷²: Սրան զուգահեռ Երկրորդ համաշխարհային պատերազմում միայն Խորհրդային Հայաստանից մասնակցել է շուրջ 300.000, ԽՍՀՄ-ից՝ 500.000, իսկ ամբողջ աշխարհից միասին վերցրած 600.000 հայ, որոնցից 200.000-ը գոհվել են մարտերում⁷³: Այսպիսով, եթե շարժվենք Սյուքրու Սերվեր Այայի առաջ քաշած տրամաբանությամբ, ապա Լեմկինն ավելի շատ Հիտլերյան Գերմանիայի դեմ տարած հաղթանակի գործում հայերի ներդրման մասին կարող էր իմանալ, քան հակառակը:

Այն տեսակետը, թե Լեմկինի հարազատները շրջապատված էին Հայկական լեգեոնի կողմից, հաստատված չէ, և ոչ մի փաստ չկա այդ մասին, նույն հաջողությամբ նրանք կարող են շրջապատված լինել հենց թյուրք-ադրբեջանական ջոկատների կողմից:

Ժխտողականների կողմից առաջ քաշվող մյուս կեղծ դրույթն այն մասին է, թե Լեմկինի վրա մեծ տպավորություն է թողել Հիտլերի հայտնի ելույթը՝ «Ո՞վ է, ի վերջո, այսօր խոսում հայերի ոչնչացման մասին», որը կեղծվել է հայ լեգեոնա-

⁷⁰ **Travis H.**, Did the Armenian Genocide Inspire Hitler? Turkey, Past and Future, in *Middle East Quarterly*, Winter 2013, vol. 20, N.1, p. 33.

⁷¹ **Ihrig S.**, նշվ. աշխ., էջ 312:

⁷² Տե՛ս **Հարությունյան Կ.**, Հայ ժողովրդի մասնակցությունը ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ.), Երևան, «Ջանգակ-97» հրատ., 2002, էջ 120-122:

⁷³ Նույն տեղում, էջ 126:

կանների կողմից. «1923 թ., երբ Լեմկինը 23 տարեկան էր և փիլիսոփայություն էր ուսումնասիրում Հայդելբերգի համալսարանում, ընդհանրապես հետաքրքրություն չունեի հայերի նկատմամբ: «Հայոց ցեղասպանությունը» հիշատակվեց 1948 թ.՝ Նյուրնբերգյան դատավարության ժամանակ՝ հիմնվելով կեղծ փաստաթղթի վրա, որը վերաբերում էր Հիտլերի ելույթին: Այս փաստաթուղթը մերժվեց տրիբունալում: Լեմկինը չգիտեր, որ այդ փաստաթուղթը կեղծվել էր նացիստական բանակում մնացած Հայկական 22.000-անոց լեգեոնի կողմից: Նրանք կարևոր դեր էին կատարում հրեաներին շրջապատելու և մահվան ճամբարներ ուղարկելու հարցում», - գրում է Սյուքրու Սերվեր Այան՝ իր տեսակետն առավել հաստատուն դարձնելու համար ընդգծելով, թե Վիլյամ Շիրերի նացիստական Գերմանիայի պատմությունը՝ «Երրորդ ռեյխի ծագումը և անկումը» գրքում⁷⁴, որը Հիտլերի գործունեության ամբողջական պատմությունն է՝ սկսած 1925 թ.-ից, որևէ տեղ չկա «հայ» բառը: Հետևաբար՝ Հայոց ցեղասպանության մասին Լեմկինի հայտարարությունները գիտական նշանակություն չունեն⁷⁵:

Թուրք ժխտողականի այս փաստարկը շատ թույլ է և ոչ հիմնավոր: Նախ և առաջ Հիտլերի հայտնի ելույթի տեքստի փաստականության մասին վկայում են մի քանի սկզբնաղբյուրներ, որոնք լավագույնս ներկայացրել է պրոֆեսոր Գևորգ Բարդակյանը «Հիտլերը և հայերի ցեղասպանությունը» գրքում⁷⁶: Վերջինս, հիմնվելով ցայժմ անհայտ արխիվային փաստաթղթերի վրա, տվել է անառակելի ապացույցներ, որ Հիտլերը, ծրագրելով հրեաների զանգվածային ոչնչացումը, որպես նախադեպ նկատի է ունեցել Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև թուրքերի անպատժելիությունը մարդկության դեմ գործած հանցագործության համար:

Այս համատեքստում հատկանշական է, որ Լեմկինը Հայոց ցեղասպանության շուրջ իր մտահոգությունը հայտնել էր այդ զագրելի հանցագործությունը կանխելուն միտված իր գիտական գործունեության սկզբից, երբ Հիտլերը նույնիսկ իշխանության չէր եկել, ուստի Հիտլերի հայտնի ելույթի տեքստը չէր կարող շարժիչ լինել Լեմկինի համար ցեղասպանությունը կանխելու իրավական մեխանիզմների ստեղծման հարցում:

Փաստերի նենգափոխման հետ մեկտեղ Սյուքրու Սերվեր Այան անուղղակիորեն ընդունում է, որ Լեմկինը ցեղասպանության հայեցակարգը ստեղծելիս նկատի է ունեցել հենց Հայոց ցեղասպանությունը՝ նշելով. «Ռաֆայել Լեմկինը հայերի մասին գիտեր այն, ինչ նա կարդացել էր կողմնակալ արևմտյան մամուլում՝ միսիոներների և հայերի մասին լուրերը: Լեմկինի հատուկ «անձնական կարծիքը» չի փոխում պատմական փաստը: Արդյոք նա դիմել է հակառակ մեկնաբանությունների և

⁷⁴ Տե՛ս **Shirer W.**, Rise and Fall of the Third Reich: A History of Nazi Germany, New York, Simon and Schuster, 1990, 1249 pp.

⁷⁵ Տե՛ս **Aya S. S.**, Twisted Law Versus Documented History Geoffrey Robertson's Opinion on Genocide Against Proven Facts, Belfast, Athol Books, 2013, pp. 11-12.

⁷⁶ Տե՛ս **Bardakjian K.**, Hitler and the Armenian Genocide, Toronto, Zoryan Institute, 1985, 81 pp.

փաստաթղթերի համար»⁷⁷: Նմանատիպ տեսակետ է հայտնում նաև ժխտողականության մեկ այլ ներկայացուցիչ, պրոֆեսոր Քեմալ Չիչեքը, թե Լեմկինը պատմաբան չէր, և նա կարողում էր միայն պատմության հայկական տարբերակը⁷⁸: Չիչեքի այս մոտեցումը ևս շատ պարզունակ է, քանի որ ամբողջ միջազգային մամուլը հեղեղված էր Հայոց ցեղասպանության սարսափները նկարագրող տեսարաններով, և այլ իրողության Լեմկինը ծանոթ լինել չէր կարող:

Քանի որ թուրքական կողմին մեծապես անհանգստացնում է այն փաստի արձանագրումը, թե Հայոց ցեղասպանության իրողությունն էական նշանակություն է ունեցել իրավաբան Ռաֆայել Լեմկինի գործունեության մեջ՝ այդ սարսափելի հանցագործությունը կանխելուն միտված պայքարում, ուստի թուրքական պետության կողմից խրախուսվող ժխտողական քաղաքականությունը փորձում է Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը կեղծող փաստարկներ ներկայացնել, և այդ գործում փորձ է կատարվում աղավաղել Լեմկինի գործունեությունը՝ մի կողմից «հիմնավորել», թե Լեմկինը ցեղասպանություն եզրույթը ստեղծելիս նկատի չի ունեցել Հայոց ցեղասպանությունը, իսկ մյուս կողմից ներկայացնել, թե Լեմկինն իր աշխատություններում անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը, բայց ոչ այն համատեքստում, ինչ որ ներկայացված է «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն:

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԽՏՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Նարեկ Պողոսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության իրողության կարևոր նշանակությունը Ռաֆայել Լեմկինի գիտական գործունեության մեջ լուրջ անհանգստություն է պատճառում ժխտողականներին: Ուստի Թուրքիան, առաջ տանելով իր ժխտողական քաղաքականությունը, Հայոց ցեղասպանությունը ժխտող հետազոտողների միջոցով փորձում է Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը կեղծող փաստարկներ ներկայացնել՝ աղավաղելով Ռ.Լեմկինի գործունեությունը: Հոդվածում փաստերի միջոցով ի հայտ է բերվում ժխտողականների կեղծարարության փորձերի ողջ սնանկությունը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Ռաֆայել Լեմկին, ժխտողականություն, թուրքական քարոզչամեքենա, կեղծ փաստարկներ, ցեղասպանության

⁷⁷ Aya S. S., The Genocide Of Truth, Istanbul, Istanbul Commerce University Publications, 2008, p. 524.

⁷⁸ Çýçek K., Refutation of the Armenian Resolution, Article By Article-4, Today's Zaman, 02 April 2007, (<http://www.eraren.org/index.php?Lisan=en&Page=Print&MakaleNo=2336&Yer=Makaleler>, դիտվել է՝ 25.03.2015):

հայեցակարգ, «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիա:

RAPHAEL LEMKIN'S GENOCIDE STUDIES WITH THE INTERPRETATION OF DENIALISTS

Narek Poghosyan

SUMMARY

The importance of the fact of the Armenian Genocide in Rafael Lemkin's scientific activity is of great concern to the denialists. Therefore, Turkey, through its denying policy, is trying to present arguments to falsify the historical fact of the Armenian Genocide by denialist researchers distorting R. Lemkin's activities. Throughout the article, the whole bankruptcy of denialist fraud attempts is revealed.

Keywords: Armenian Genocide, Raphael Lemkin, denialism, turkish propaganda, false arguments, the concept of genocide, The Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

ИССЛЕДОВАНИЯ ГЕНОЦИДА РАФАЭЛЕМ ЛЕМКИНОМ И ИХ ИНТЕРПРЕТАЦИИ СО СТОРОНЫ ОТРИЦАТЕЛЕЙ

Нарек Погосян

РЕЗЮМЕ

Важность факта Геноцида армян в научной деятельности Рафаэля Лемкина вызывает большую озабоченность у отрицателей геноцида. Поэтому Турция посредством своей политики отрицания пытается фальсифицировать исторический факт Геноцида армян путем искажения деятельности Р. Лемкина. В статье последовательно раскрывается несостоятельность этих попыток.

Ключевые слова: Геноцид армян, Рафаэль Лемкин, дениализм, турецкая пропагандистская машина, ложные аргументы, концепция геноцида, Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него.

ԿԱՐԻՆԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1881- 1919ԹԹ.)

Քրիստինե Նաջարյան

Հայոց ցեղասպանության տարիներին հայ ժողովուրդը, մարդկային վիթխարի կորստից բացի, զրկվեց մշակութային հարուստ ժառանգությունից: Դրանք կամ հիմնահատակ ավերվեցին, կամ բռնագրավվեցին ու սկսեցին օգտագործվել այլ նպատակներով:

Հոդվածի նպատակն է Արևմտյան Հայաստանի բնակավայրերում Կարինի Սանասարյան վարժարանի օրինակով ցույց տալ կրթական կյանքի կազմակերպման, զարգացման առանձնահատկությունները և անկման պատճառները:

Կրթական կյանքը Կարինում

Մինչև XIX դարի սկիզբը Կարինում ազգային ուսումնառությունը ու կրթական կյանքը բացակայում էին. կրթությունը սահմանափակվում էր միայն վանքերում երեխաներին տրվող դասերով:

1820-1825 թվականներին Կարինում աշխարհիկ ուսումը սկսվում էր «Տունուտեղով», այսինքն՝ կանայք էին իրենց տներում փոքրիկներին սովորեցնում կարդալ: Միայն 1850-ական թվականներին աստիճանաբար իրավիճակը փոխվեց: Դա պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող փոփոխություններով¹: 1876թ.՝ օսմանյան սահմանադրության ընդունումից հետո, դպրոցների ղեկավարությունն անցավ թաղային խորհուրդների և նրանց կողմից նշանակված հոգաբարձուների ձեռքը: 1878թ. սկսած՝ դպրոցներն աշակերտներին տալիս էին ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ գիտելիքներ: Միայն Կարինում գործում էր 10 վարժարան, որից 7-ը՝ խառը, 2-ը՝ արական, մեկը՝ իգական²:

Տարիներ հետո Կարինի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտակայքում կառուցվեցին շենքեր, և հատկացվեցին վարժարաններ, ինչպիսիք էին՝ Արծնյան մանչերի վարժարանը, Թարգմանչաց վարժարանը կամ Հոփսիսիյան աղջկանց վարժարանը, իսկ ավելի ուշ՝ Սանասարյան վարժարանը:

1856 թվականին առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Ջորաբեյյանը ծրագրում և 1857 թվականին հաստատում է «Ժառանգավորաց» վարժարանի ստեղծումը: Սուրբ Աստվածածին եկեղեցու ընդարձակ գավթի մեջ գտնված հոգեւորները նա վերածում է վարժարանի (կեդրոնական) և սկսում կրթական բեղուն գործունեություն³:

¹ Ղազար Չարբըզ, *Յուշամարեան Բարձր Հայքի, Կարինապարտում*, Պեյրոթ, 1957, էջ 161:

² Հովհաննես Զատիկյան, *Կարինի նահանգը XIX դ. երկրորդ կեսին*, Երևան, 2013, էջ 70:

³ Ղազար Չարբըզ, նշվ. աշխ., էջ 162:

Այնուհետև վարժարանի անունը փոխում է «Արծնյան վարժարան»՝ ի հիշատակ ավերված Արծն⁴ քաղաքի:

Հետագայում Կարնո ազգային իշխանությունները կառուցում են երկհարկանի քարաշեն մի վարժարան, որի առաջին հարկը զբաղեցնելու էին «Արծնյան» մանկապարտեզի սաները, իսկ երկրորդ հարկը՝ իր լուսավոր և ընդարձակ դասարաններով, Արծնյան բարձրագույն նախակրթարանին՝ իր յոթը կարգերով⁵: Արծնյան վարժարանի շենքի կառուցումից հետո Վեհապետյան Սրբազանը և ազգային իշխանությունը, հոգալով իգական սեռի ուսման և դաստիարակության մասին, կառուցեցին Կարնո՝ աղջկանց առաջին վարժարանը և անվանեցին «Սուրբ թարգմանչաց» վարժարան: Ուշագրավն այն էր, որ կարինցիները համոզված էին, թե ազգի իրական առաջադիմության համար բացառիկ նշանակություն ունեն նաև իգական սեռի կրթությունն ու դաստիարակությունն արականի կողքին: Կարևորելով իգական սեռի կրթությունը՝ հետագայում կառուցվեցին նոր և խոշոր վարժարաններ՝ հատուկ աղջիկների համար:

1881 թվականին արդեն իսկ երևում էր Կարինի ազգային կրթական կյանքի վերելքը: Եվ այդ եռուզեռը, առաջադիմությունը, երկսեռ աշակերտների ավելացումը կարևոր առաջընթաց էին դիտվում: Սակայն կրթական կյանքն իր բարձրակետին հասավ, երբ Սանասարյան միջնակարգ վարժարանը վերջնականապես հաստատվեց Կարինի մեջ և սկսեց իր բեղմնավոր աշխատանքը⁶:

Կարինի կրթական կյանքն ընդհանուր առմամբ կարող ենք բաժանել երկու շրջանի՝ 1830-1877թթ. և 1877-1914 թթ.:

Առաջին շրջանի կրթական գործունեությամբ զբաղվում էին առաջնորդ վարդապետներ և եպիսկոպոսներ, որոնք իրենց կողքին ունեին պատվելի ժողովականներ: Այս շրջանի կրթական պաշտոնյաներն էին՝ տնօրեն, ուսուցիչ, վանականներ, ովքեր իրենց պատրաստակամությամբ և համառ աշխատասիրությամբ պատրաստ էին անընդհատ սովորելու և սովորեցնելու:

Երկրորդ շրջանն ընդգրկում է 1887-1914 թթ.: Ազգային մարմինները, որոնք ունեին հեղինակություն և իրենց գործի գիտակն էին, ջանում էին կրթական գործը բարելավել՝ իրենց կողքին ունենալով բարձր կոչման գիտակից և աշխատունակ առաջնորդներ: Այս ամենի հետ կային նաև Սանասարյան վարժարանի ավարտական երիտասարդ ուսուցիչները և տնօրենները, որոնք պետք է, համաձայն Մկրտիչ Սանասարյանի «**անմահն կտակի**», նվիրվեին հայ կրթական գործին՝ դառնալով ուսուցիչներ, ուսումնական խորհուրդների անդամներ⁷:

⁴ Արծնը քաղաքի է վերածվել միայն X դարից, երբ Հայաստանում վերելք էին ապրում արհեստագործությունն ու առևտուրը: XI դարի առաջին կեսին Արծնը հասնում է իր զարգացման գագաթնակետին: Ժամանակի հարուստ, բազմամարդ, սակայն անպարիսպ քաղաքը 1049 թ. սելջուկյան արշավանքի ընթացքում, չնայած հերոսական պաշտպանությանը, հիմնահատակ ավերվում է (մանրամասն տե՛ս **Հակոբյան Թ. Խ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 58-63):

⁵ Ղազար Չարըզ, նշվ.աշխ., էջ 164:

⁶ Ղազար Չարըզ, նշվ.աշխ., էջ 169:

⁷ Նույն տեղում, էջ 198:

Սանասարյան վարժարանը՝ որպես Կարինի կրթական կյանքի կենտրոն

1870-ականների վերջին և 1880-ականների սկզբին կրթական կյանքի վերելքը նշանավորվեց կրթական կազմակերպությունների ի հայտ գալով, որոնց նպատակն էր հայկական գավառների մեջ ուսում և դաստիարակություն տարածել: Այդպիսիք էին «Արարատեան», «Դպրոցասիրաց», «Արևելեան» և «Կիլիկիա» ընկերությունները, որոնք կազմեցին Հայոց Միացյալ Ընկերություն⁸: Սակայն այս ամենը կենտրոնացած էր նախնական կրթության վրա, և անհրաժեշտ էր հայկական նահանգներում ստեղծել երկրորդական վարժարան, որը մտավորականներ էր պատրաստելու: Այս դժվարին գործն իրենց ձեռքը վերցրին ռուսահայ բարերար Մկրտիչ Սանասարյանը⁹ և նրա խորհրդական ու կտակակատար Կարապետ Եզյանցը: Նրանք տարիներ առաջ մտադրված են եղել հայկական նահանգներից մեկում բացել երկրորդական վարժարան. Մկրտիչ Սանասարյանը լավ գիտեր, թե որքան կարևոր է կրթված, ժամանակակից ազատագրական գաղափարների կրող և հայրենասեր երիտասարդների դաստիարակությունն Արևմտյան Հայաստանում: Իսկ նման նվիրյալներ կարող էր տալ բարձրակարգ վարժարանը: Նպատակն ազնիվ էր, ուղին՝ հստակ: Նա սկսում է հովանավորել ուշիմ և խելացի բազմաթիվ հայ երիտասարդների՝ Ռուսաստանի և Եվրոպայի համալսարաններում սովորող բազմաթիվ ուսանողների՝ պայմանով, որ նրանք բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադառնան հայրենիք և նվիրվեն իրենց ազգի կրթության գործին: Այս ամենը, ի վերջո, դառնում է հստակ ծրագիր:

Մկրտիչ Սանասարյանը, այդ ուսանողների կրթության և կենցաղային պայմանների ապահովման համար դրամական մեծ հատկացումներ է անում, որպեսզի հայ ուսանողները Եվրոպայում բարոյապես և նյութապես ընկճված չլինեն: Ահա այդ սաներից մի քանիսի անունները՝ Պողոս Դելփեյան (Արաբկիրից), Հովսեփ Մադաթյան (Մամուռից), Գևորգ Աբուլյան (Թիֆլիսից), Սարգիս Սողիկյան (Խարբերդից), Դավիթ Ումիկյան (Կովկասից), Աստվածատուր Խաչատրյան (Հին Բայազետից)¹⁰:

Մկրտիչ Սանասարյանը, իր նախապատրաստական աշխատանքները, հանգամանակից քննարկումներն ու խորհրդակցություններն ի մի բերելով, 1881թ. որոշում է Կարին քաղաքում հիմնել երկրորդական, այսինքն՝ ավագ վարժարան (սկզբնական շրջանում որպես վարժարան եղել է «Կանայ-ճամբայ» թաղի Բյուրքճիբաշյան-Մակարյան ընտանիքներին պատկանող վարձու տունը):

Վարժարանն ուներ գիշերօթիկ ուսուցման հնարավորություն, ինչը հայ պատանիներին հնարավորություն էր տալիս Հայաստանի տարբեր քաղաքներից և գյուղերից գալու ու սովորելու այդտեղ:

⁸ Նույն տեղում, էջ 172:

⁹ Մ. Սանասարյանի մասին տե՛ս նաև Tarbassian Hrach A., *Erzurum(Garin): Its Armenian History and Traditions*, U.S, 1975, p.103-104, Pamela J. Young, *The Sanasarian Varzharan: Making a People into Nation*, Armenian Karin/Erzerum, ed. By Richard G. Hovhannisian, California, 2003, p. 267.

¹⁰ Սանասարյան վարժարանի վերոհիշյալ սաների, իսկ հետագայում վարժարանի ուսուցիչների կենսագրության մասին տե՛ս Tarbassian Hrach A., *Erzurum(Garin): Its Armenian History and Traditions*, p. 109-112.

Իր բացման տարում Սանասարյան վարժարանն ուներ 9 դասարան, որոնցից 3-ը՝ նախակրթարան, իսկ 6-ը՝ միջնակարգ: Վարժարան էին հաճախում 198 աշակերտ, որոնցից 85-ը կարնեցի էին¹¹:

1881-1901թթ. վարժարանը տվել է 110 շրջանավարտ, որոնցից 94-ը՝ ուսումնական, 16-ը՝ արհեստագիտական բաժիններից¹²:

Սանասարյան վարժարանի մասին հուշեր ունի հայ մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Նրա վկայությամբ վարժարանն ունեցել է նաև ձեռագրերի արժեքավոր հավաքածու, որոնց թիվը 1895 թ. հասնում էր 43-ի¹³:

1883 թվականին վարժարանի խորհուրդը որոշում է վարժարանը տեղափոխել Հոփսիսիյան վարժարանի տարածք, քանի որ հետզհետե ավելանում էր աշակերտության թիվը: Ահա այստեղ էլ հաստատվում է Սանասարյան վարժարանը¹⁴:

1899-1900թթ. Սանասարյան վարժարանը Կարնո պետական-կրթական տնօրինության կողմից հատուկ պաշտոնագրով ճանաչվում է որպես բարձրագույն նախակրթարան և միջնակարգ վարժարան (րիշտիէ-խտատի)¹⁵:

Սանասարյան վարժարանի նոր կառույցը բաղկացած էր երեք մեծ շենքերից, որոնք բավարարում էին գիշերօթիկ հաստատության բոլոր պահանջները՝ սեփական արհեստանոցով, փողով, լվացարանով, ընդարձակ խաղավայր, մարզարան, չմշկելու ընդարձակ տարածք՝ բոլոր հարմարություններով:

Վարժարանն ուներ իր մատենադարանը, թանգարանը, հին մագաղաթյա Ավետարան (986 թվականի), լաբորատոր սարքավորումներ, հիվանդանոց, դեղատուն, փուռ, ներկատուն, հայոց, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն և ռուսաց լեզուներով հրատարակություններ:

Մ. Սանասարյանն իր ջանքերով ստեղծված հարուստ գրադարանը, գեղարվեստական ալբոմները, թանգարանային հավաքածուները, որոնցով կրթվելու դաստիարակվել են վարժարանի սաները, նվիրաբերել է Սանասարյան վարժարանին:

Սանասարյան վարժարանը երեսուն տարվա կյանք ունեցավ Կարինում: 1912 թվականին Կոստանդնուպոլսի խնամակալության կարգադրությամբ Կարինից տեղափոխվեց Մերաստիա (Սվազ):

Այնուամենայնիվ, երկար հորդորներից հետո էլ 1912թ. Կարինի հայությունը վարժարանների ընդհանուր տեսուչ Ռոստոմ Զորյանի գլխավորությամբ դեմ է կանգնում այդ որոշմանը. Գույքի մի մասը թողնվում է տեղում, և շուտով նույն

¹¹ Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տետր Ա., պատրաստել է Յուսումնական խորհրդոյ Ազգային կեդրոնական վարչութեան, Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1901, էջ 14:

¹² Քսանամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի, էջ 14:

¹³ Աճառյան Հ., նշվ., աշխ., էջ ԺԷ:

¹⁴ Ղազար Չարըզ, նշվ., աշխ., էջ 201:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 204:

շենքում սկսում է գործել Նոր Սանասարյան վարժարանը, իսկ Սեբաստիայում՝ Սանասարյան գիշերօթիկը¹⁶:

Սանասարյան վարժարանի կրթական առանձնահատկությունները

Իր հիմնադրման թվականից սկսած՝ Սանասարյան վարժարանը եղել է կրթական կարևոր կենտրոն Էրզրումի նահանգում:

Սանասարյան վարժարանի ուսումնական ծրագիրը պատրաստվել էր գերմանական, ֆրանսիական, անգլիական բարձրագույն վարժարանների տնօրենների կողմից¹⁷: Վարժարանն ուներ հատուկ կրթական ծրագիր, որը համապատասխանում էր գերմանական «Realschule» կոչված միջնակարգ վարժարանների ծրագրին ու նախակրթարանների և երկրորդական վարժարաններին:

Ըստ օսմանյան կառավարության պաշտոնական արտոնագրով ճանաչված բարձրագույն ծրագրի՝ Սանասարյան վարժարան կարող էին ընդունվել այն աշակերտները, ովքեր գիտեին հայերեն վարժ կարդալ, ընթերնելի գրել, խոսքի մասերը որոշել, թելադրություն գրել առանց ուղղագրական կոպիտ սխալների և վարժ կատարել թվաբանական չորս գործողություններ¹⁸:

Սանասարյան վարժարանի կանոնագրում նշվում էր. «Սանասարեան վարժարանի նպատակն է դաստիարակել հայ մանուկները՝ հայ առաքելական եկեղեցույ ոգույն եւ կանոնաց համաձայն, աւանդել անոնց ընդհանուր ուսում եւ կրթութիւն, նաեւ կրթել զանոնք արհեստագիտութեան եւ արուեստագիտութեան մէջ»¹⁹:

Վարժարանում, ուսումնական և դաստիարակչական աշխատանքներից բացի, առանձին աշխատանք էր կատարվում՝ պատրաստելով ուսանողներին որպես ապագա հանրային գործիչներ, մտավորականներ՝ ակնկալելով, որ Կարինի և գավառների մեջ նման գործիչների պահանջը մեծ է լինելու²⁰:

Աշակերտները սովորում էին մայրենի լեզու, աշխարհաբար և գրաբար, թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բնական գիտություններ, մաթեմատիկա, ինչպես նաև ջութակ, դաշնամուր, ձեռարվեստ:

Վարժարանը, ուսումնական, մանկավարժական և գիշերօթիկ բաժիններից

¹⁶ Սանասարյան վարժարանի հարցի շուրջ կաթողիկոսը գրություն է ուղարկել Կարինի առաջնորդարանի Ս. Սմբատ եպիսկոպոսին, որտեղ նշվում է, որ միջնորդում են Սանասարյան դպրոցի մի ճյուղը տեղում բացելու համար, և պարզ է դարձել, որ Նորին Սրբությունը 1912 թվականի հուլիսի 3-ին 403-րդ Ս. կոնդակով համաձայնվել է վարժարանի՝ Սեբաստիա փոխադրվելուն և ցանկություն է հայտնել, որ խնամակալությունը Կարինում պահի ցերեկօթյա վարժարանը: Նույն տարվա հունվարի 11-ի 432 գրության համաձայն՝ Կարինի Սանասարյան վարժարանի չբացելու պատճառները նշվում են. «Տեղի ժողովուրդը կարծում է, թե Սանասարյան վարժարանը Կարինի մենաշնորհն է: Խնամակալությունը պարտավոր էր նաև, ըստ կտակի, Սանասարյան վարժարանը շինել վարժարանի սեփական շենքում, որի գումարը կհասնի 5000-10000 ոսկի Սեբաստիայի մեջ հիմնելու համար»:

Այդ մասին տե՛ս «Այլք», օրական Կարնոյ Հ. Ե. Միություն թիվ 1, հինգշաբթի 12 հունիս, 1914 թ.:

¹⁷ Ղազար Չարբզ, նշվ., աշխ., էջ 225:

¹⁸ Քառամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի 1906- 1910 Կարնոյ, էջ 18:

¹⁹ Ղազար Չարբզ, նշվ., աշխ., էջ 203:

²⁰ Նույն տեղում, էջ 225:

բացի, ունեցել է նաև արհեստագիտական բաժին, որտեղ սովորում էին կահագործություն, կոդպարարություն, կազմարարություն: Արհեստագործական բաժինն ուներ 69 աշակերտ, որոնք հետագայում դարձան վարպետ արհեստավորներ:

1909-1911թթ. վարժարանը հաստատում է իր ուսուցչանոցը, որի ուսանողները դարձան ազգային վարժարանների ուսուցչական կազմի անդամներ. նրանք թվով հասնում էին 55-60-ի²¹: Վարժարանն ուներ ուսուցողական, մանկավարժական և արհեստագիտական բաժիններ: Ուսուցողական բաժնում դասավանդում էին մայրենի լեզու (աշխարհաբար, գրաբար), պատմություն, աշխարհագրություն, մատենագիտություն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, հանրահաշիվ, երկրաչափություն, բնագիտություն, քիմիա և այլ առարկաներ: Մանկավարժական բաժնի հիմնական առարկաներից էին մանկավարժությունը, հոգեբանությունը, տրամաբանությունը, իմաստասիրությունը, մեթոդաբանությունը, դպրոցական առողջապահությունը: Արհեստագիտական բաժնում սովորել են կազմարարություն, ատաղձագործություն և գավառի պահանջները բավարարող այլ արհեստներ:

Սանասարյան վարժարանի երևելիները

Վարժարանի հաջողությունները և կրթադաստիարակչական գործում գերազանց արդյունքները մեծապես կապված են եղել նաև վարժարանի երախտավորների անվան հետ:

Վարժարանն ուներ վերատեսուչներ, փոխվերատեսուչներ, ներքին տնօրեն, գլխավոր և օգնական ուսուցիչներ²²: Սակայն վարժարանի գլխավորը հիմնադիր Մկրտիչ Սանասարյանն էր, ով ջանք ու եռանդ չխնայեց սերունդներ դաստիարակելու հարցում:

Մկրտիչ Սանասարյանն իր պատանեկության շրջանից սկսած, ուսման և դաստիարակության ոգով տոչորված, թափանցում է հայության ներքին ցավերի, ազգային ու քաղաքական ոգորումների մեջ: Հային բնորոշ աշխատասիրությամբ և համառությամբ, հոգևոր ազնիվ արժանիքներով և առաջադեմ գիտելիքներով օժտված լինելով՝ նա օտար երկրում հասնում է հասարակական բարձր դիրքի: Սանասարյանը հաջողակ է եղել իր ձեռնարկած գործերում, որին նպաստել են նաև հասարակության համընդհանուր սերն ու պատկառանքը, ու դարձել է նշանակալի հարստության տեր: Նա ամբողջ կյանքում իր հարստությունը հատկացրել է բարեգործությունների՝ իր բարեպաշտությամբ շատերի համար դառնալով օրինակելի: Նա նյութական մեծ օժանդակություն է ցուցաբերել Էջմիածնի Գևորգյան ճեմարանին, Վանի Խառակոնիս գյուղի դպրոցին, բարեգործական տարբեր կազմակերպությունների, մշակութային հաստատությունների:

Նրա ծախսերով վերաշինվել է Վանի Սանդուխտյան իգական վարժարանը, որը վանեցիները վերանվանեցին «Մարիամյան» վարժարան, ի հիշատակ Սանասարյանի մոր՝ Մարիամի: Մի քանի գյուղերում հիմնում է դպրոցներ և ապա-

²¹ Նույն տեղում, էջ 204:

²² Քառամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի 1906- 1910 Կարնոյ, էջ 25:

հովում դրանց ծախսերը: Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» թերթի քսանհինգամյակին նվիրված տոնակատարություններին օժանդակելով՝ խմբագրին՝ Պետրոս Սիմոնյանին, հատկացնում է տարեկան 600 ռուբլի թոշակ՝ ամրագրված կտակով²³: Սանասարյան վարժարանի ուսուցչական կազմի մեջ առաջնակարգ տեղ են զբաղեցնում երեք տեսուչներ՝ Գ. Աբուլյանը, Հ. Մադաթյանը, Ս. Սողիկյանը, որոնք նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների խնդիրներով էին զբաղվում:

Մկրտիչ Սանասարյանի խորհրդական և կտակակատար Կ. Եզյանցը՝ կրթական գործում որպես հմուտ մասնագետ, վճռական դեր կատարեց վարժարանի վարչության, ուսուցչական կազմի ընտրության, ինչպես նաև ուսումնական ծրագրի և կանոնագրության պատրաստության մեջ: Նա դարձել է կովկասահայ կյանքի առաջավոր դեմքերից ամենահեղինակավորը: Մկրտիչ Սանասարյանի մահից հետո Կ. Եզյանցը դառնում է բարերարի կտակի միակ լիազոր գործադրողը. զբաղվում էր աշակերտների կրթության հարցերով, տնօրինության և ուսուցչական կազմի աշխատանքներով ու դասավանդմամբ: Նրա գլխավորությամբ կազմվեց վարժարանի կառավարման վարչություն:

Ուսումնադաստիարակչական և տնտեսական գործունեությունը ղեկավարելու համար ստեղծվեց ուսումնական խորհուրդ, որի կազմի մեջ էին Մ. Օրմանյանը (նախագահ), իսկ անդամներ՝ Գ. Աբուլյանը, Հ. Մադաթյանը, Ս. Սողիկյանը, որոնք միաժամանակ վարժարանի տեսուչներ էին, և յուրաքանչյուրը պատասխանատու էր ուսման և դաստիարակչական աշխատանքների առանձին բնագավառների համար: Սանասարյան վարժարանի համար իր՝ կտակակատարի հանգամանքը դարձավ ոչ միայն նյութական բարիք, այլ նաև վարժարանի ուսման և դաստիարակության գործին իմաստ և ընթացք տվող ազդակ: Մկրտիչ Սանասարյանն ազգային բարձր գիտակցությամբ և իր պատկառելի հարստությամբ հիմք դրեց վարժարանին, իսկ Կարապետ Եզյանցը եղավ այդ հարստությանը շունչ և ոգի տվող անձը²⁴:

Կ. Եզյանցի հիշատակը հավերժացնելու համար 1907 թվականին ստեղծվեց մատենադարան՝ նրա անունով²⁵:

Սանասարյանի համալսարանական սաներից էր Դելիյանը, ով մինչև վարժարանի բացվելը նախապատրաստական աշխատանքներ է կատարել վարժարանում, նաև առանց վարձատրության դասավանդել է Արծնյան վարժարանում, որտեղ իր կարողություններով և զոհաբերությամբ ծանոթացել է քաղաքի հայության հետ և դարձել բոլորի կողմից սիրված անձնավորություն²⁶:

Ընդհանուր առմամբ Կարնոտ նահանգի կրթական գործի համար իրենց անգնահատելի ներդրումն ունեն ինչպես Պ. Դելիյանը, Հ. Մադաթյանը, Գ. Աբուլյանը, Ս. Սողիկյանը, Դ. Ումիկյանը, Ա. Խաչատրյանը՝ Սանասարյանի սաները, իսկ ապա՝ ուսուցիչներն ու ղեկավար պաշտոններ զբաղեցրածները, ինչպես

²³ Չարըզ, նշվ., աշխ., էջ 192:

²⁴ Նույն տեղում, էջ 196:

²⁵ Քառամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի 1906-1910 Կարնոյ, էջ 34:

²⁶ Չարըզ, *Յուշամարտն Բարձր Հայքի, Կարինապարում*, Պեյրութ, 1957, էջ 200:

նան՝ Հարություն Ղզեզյանը, Տեր Գրիգորի Արծնյանը, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանը, Բարթող Թաթարյանը, Սիմոն Գյունեշյանը, Գևորգ Չիլինգիրյանը, Եղիշե Տուրսունյանը, Հովհ. Խեչոյանը, Մեհրուժան վրդ. Աշխարհունին, Բարթող Օտապաշյանը, Եղիշե Թովչյանը, Ռոստոմ Զոդյանը²⁷:

Անվարան կարելի է նշել, որ Սանասարյան վարժարանի բոլոր ուսուցիչները²⁸ եղել են հավատարիմ իրենց կոչումին և բարերարի իդեալներին:

Հարկ է փաստել, որ 1881-1912թթ. Սանասարյան վարժարանն ուներ 1,007 աշակերտ: Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան կառավարությունը դադարեցրեց վարժարանի գործունեությունը՝ շենքը ծառայեցնելով որպես հիվանդանոց²⁹:

Ցավոք, Սանասարյան վարժարանի ողջ անձնակազմն Օսմանյան կայսրության ոճրագործ քաղաքականության զոհը դարձավ: 1919 թ. հուլիսի 23-ին Քեմալ Աթաթուրքը Կարինի Սանասարյան վարժարանի շենքում գումարեց թուրք ազգայնականների համազումարը:

Ամփոփելով փաստենք, որ վարժարանին պատկանող պատմական շենքը Թուրքիայի Հանրապետությունը տարբեր ժամանակներում ծառայեցրել է ամենատարբեր նպատակների համար: Այսպես, 1920-1921 թթ.՝ արվեստի դպրոց, 1922-1923 թթ.՝ լսարան, 1924-ին՝ նախակրթարան, 1940-ին՝ Աթաթուրքի անվան արվեստի դպրոց, 1960 թվականից՝ Աթաթուրքի և Էրզրումի կոնգրեսի թանգարան, ապա՝ ազգային վարչության կենտրոն: Մեր օրերում Սանասարյան վարժարանը ծառայում է որպես թանգարան³⁰:

Եզրակացություն

Կարինի Սանասարյան վարժարանի հիմնադրման պատմության, կրթական կյանքի կազմակերպման, վարժարանի զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սանասարյան վարժարանն

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 186:

²⁸ Գևորգ Աբովյան- պատմության, աշխարհագրության և գերմաներենի Հովսեփ Մատաթեան-բնապատմության, գերմաներենի և գծագրության Սարգիս Սողիկեան- կրոնագիտության, դաշնակի և ֆրանսերենի: Գլխավոր ուսուցիչներ՝

Դավիթ Ումիկեան-թվաբանություն, տոմարակալություն, երկրաչափություն
Աստվածատուր Խաչատրեան- հայերենի ուսուցիչ, տոհմ. և եկեղեցական պատմության
Գևորգ Ճիլերճեան- տարրաբանության, բնաբանության և բնապատմության
Սիմոն Աղապալեան-բնաբանության, թվաբանության, տարրաբանության, գծագրության, մարմանմարզի և բնապատմության
Ժան Քրեյսեյ - ֆրանսերենի ուսուցիչ
Իսմայիլ Էֆենտի - օսմաներենի, օրենսգիտության, օսմ. պատմության
Հաֆրդ Ալի Էֆենտի- օսմաներենի, օրենսգիտության և օսմ. պատմության
Մուստաֆա Էֆենտի- օսմաներենի և օսմ. գեղագրության
Լևոն Փասպանեան - ֆրանսերենի
Հարյուրապետ Ահմետ Էֆենտի- նվագախմբի: Տե՛ս Հնգամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի 1901-1906, Կ. Պոլիս, 1908, էջ 27-30:

²⁹ Tarbassian Hratch A., *Erzurum(Garin): Its Armenian History and Traditions*, p. 106.

³⁰ <http://horizonweekly.ca/news/details/4195>

անգնահատելի ներդրում ուներ երիտասարդների շրջանում որակյալ կրթության ապահովման գործում: Ավելին, վարժարանի սաների՝ արտասահմանում ուսանելը և ապա սեփական կրթօջախում դասավանդելը Սանասարյան վարժարանի առաքելությունն էր ու մեծագույն նվաճումը, կրթության շարունակականության ապահովումը: Սանասարյան վարժարանը հայապահպանության կարևորագույն օրինակ էր, իսկ նրա գործունեությունը՝ մեծարժեք ներդրում ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթի մեջ:

ԿԱՐԻՆԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1881- 1919թթ.)

Քրիստինե Նաջարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվում Արևմտյան Հայաստանի բնակավայրերից մեկի՝ Կարինի Սանասարյան վարժարանի կրթական կյանքի կազմակերպման, զարգացման առանձնահատկությունների և անկման պատճառների հիմնախնդիրներին:

Ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Սանասարյան վարժարանի հաջողություններն ու ձեռքբերումները, առանձնացվում է կրթական կյանքի կարևորությունն Արևմտյան Հայաստանում:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Սանասարյան վարժարան, կրթություն, ուսուցում, վարժարան:

THE ACTIVITIES OF SANASARIAN COLLEGE (1881- 1919)

Kristine Najaryan

SUMMARY

The article refers to the organization of the educational system of Sanasarian College in Karin; a region in Western Armenia, the system of organization, development peculiarities and the causes of the decline.

The article presents and analyzes the successes and achievements of Sanasarian College and highlights the importance of the educational life in Western Armenia.

Keywords: Armenian genocide, Sanasarian college, education.

ДЕЯТЕЛЬНОСТЬ КОЛЛЕДЖА САНАСАРЯН (1881- 1919)

Наджарян Кристине

РЕЗЮМЕ

В статье рассматриваются вопросы организации, развития и причин упадка Санасарянского колледжа, важного института в образовательной жизни одного из областей Западной Армении - Карина.

Представлены и проанализированы успехи и достижения колледжа, а также важность образовательной жизни в Западной Армении.

Ключевые слова: Геноцид армян, колледж Санасарян, образование.

**«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՀՈՐԵԼՅԱՆԻ» ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐՈՒՄ**

Տաթևիկ Ղալթախյան

Շուրջ մեկ դար առաջ աշխարհի տարբեր հայաբնակ վայրերում հայ ժողովուրդը մեծ շուքով տոնեց հայ գրերի գյուտի 1500-ամյա և հայ տպագրության 400-ամյա հորելյանները¹:

Գրերի գյուտի հորելյանը մեծամասշտաբ նշելու գաղափարը առաջ էր քաշել պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան), ով 1911 թ. իր «Համազգային հորելյան» հոդվածում առաջարկում էր 1912 թ. ընթացքում տոնել հայ տպագրության 400-ամյակը՝ որպես համազգային հորելյան, ինչպես հայրենիքում, այնպես էլ բոլոր գաղթօջախներում². «Տպագրութիւնը լոյս է... Հայ ընթերցողներ, ուր որ դուք կաք, ներսը, ձեր տանը, թէ դուրսը, երկրագնդի երեսին ցրուած, գլուխ իջեցրէ՛ք այս մեծ լոյսի առջև և տօն կատարեցէ՛ք... որպէս զի ցոյց տանք մեզ ու մեզ, որ ապրել ենք ուզում, մեռնող չե՛նք...»³: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ գրերի գյուտի 1500-ամյակը լրացել էր դրանից մի քանի տարի առաջ, սակայն պատշաճ հանդիսությամբ չէր նշվել, Արշակ Չոպանյանն առաջարկում էր հայ տպագրության 400-ամյա հորելյանին կցել նաև հայ գրերի գյուտի 1500-ամյա տարելիցը, որով և այս հորելյանը կդառնար «Հայ մտքի տոն»: «Պէտք է մեր ամբողջ սէրը, յարգանքն ու խանդավառութիւնը շոյալենք՝ մեծարելու համար մեր այն նախնիքը, որ մեզի պարգևեցին գիր, գրականութիւն, տպագրութիւն, որ հետեւաբար մեզի տուին մարդկութեան մէջ իբր մտաւոր տարր պատուաւոր տեղ մը գրաւելու կարելիութիւնը: Մեր ունեցած միակ իրական ուժն է, մեզի մնացած միակ ինչքն ու մեծութիւնն է, որ պիտի տօնենք»⁴:

Հայկական շրջանակներում քննարկվում էին գույգ հորելյանները կազմակերպելու և նշելու բազմաթիվ տարբերակներ: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հանդիսանալով հայ ժողովրդի հոգևոր և վարչական կենտրոն, ստանձնեց հայ տպագրության 400-ամյա և գրերի գյուտի 1500-ամյա տարելիցի կազմակերպչական աշխատանքները: Կ. Պոլսում, Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլ հայաշատ քաղաքներում

¹ 1512թ. Վենետիկում Գուտենբերգի տպագրության գյուտից ընդամենը վեց տասնամյակ անց Հակոբ Մեղապարտը լոյս ընծայեց առաջին հայկական տպագրի գիրքը: Օսմանյան կայսրությունում հայկական տպագրությունը սկիզբ է առել 1567թ. Արգար Թոքթաթեցու ջանքերով: Կ© Պոլսում տպագրված առաջին գիրքը §Փոքր քերականութիւն՝-ն է (1567): Ժամանակի ընթացքում Կ. Պոլսը դարձավ հայ գրատպության հիմնական կենտրոններից մեկը՝ տալով տպագրիչների, տպարանատերերի ու լրագրողների հարյուրավոր անուններ, ովքեր մեծ ավանդ ունեցան ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ Օսմանյան կայսրության զարգացման պատմության մեջ:

² «Հորիզոն», Թիֆլիս, 3 հունիսի, 1911:

³ Թէոդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, «Վ. եւ Հ. Տէր. Ներսէսեան», 1912, էջ 17:

⁴ «Հայ գրականութիւն», Զմյոռնիա, 1/14 յունիսի, 1912, էջ 22:

ստեղծվեցին միջոցառումները համակարգող հոբելյանական հանձնաժողովներ: 1912 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի հատուկ շրջաբերական կոնդակով ընթացիկ տարին հայտարարվեց հոբելյանական. որոշվեց միջոցառումները սկսել 1912 թ. հոկտեմբերի 13-ին և ուղիղ մեկ տարի հետո՝ 1913 թ. հոկտեմբերի 13-ին (Ս. Թարգմանչաց տոնին), կազմակերպել հոբելյանական տարվա հանդիսավոր փակումը⁵: Մշակվեց հոբելյանական տոնակատարությունների ծրագիր, և նախատեսվեց հրատարակել հայագիտական ծավալուն ժողովածու⁶: Այն ստացավ համահայկական բնույթ, ուստի և կոչվեց «Համագգային մեծ հոբելյան»: Քանի որ արևմտահայությունը քաղաքական անբարենպաստ պայմանների բերումով չէր կարողացել 1912 թ. կազմակերպել հոբելյանական միջոցառումներ, ուստի և հայրապետական այս կոնդակով 1913 թ. ևս համարվում էր հոբելյանական⁷:

Կ. Պոլսի հոբելյանական հանձնաժողովի նախագահ նշանակվեց պոլսահայ բժիշկ, հասարակական գործիչ Վահրամ Թորգոմյանը: Կ. Պոլսում գրեթե միաժամանակ տոնակատարություններ կազմակերպվեցին Հայոց պատրիարքարանում, Բերայի «Փթի Շան» թատրոնում, Թաքսիմի հրապարակում, Կետիկ փաշայում, Սկյուտարում, Սամաթիայում, Գատրեյուղում, Թոփգաբում և այլուր⁸: Հանդիսություններ եղան Թոքատում, Խարբերդում, Սասունում, Վանում, Մերաստիայում, Մարզվանում, Արմաշում, Բրուսայում, Մեզրեում, Մուշում, Ադանայում, Սիսում և այլուր: Այդ բազմահազարանոց միջոցառումներին ներկա են եղել նաև կառավարության և օտարերկրյա հաստատությունների ներկայացուցիչներ: Բանախոսները ներկայացնում էին հայ գրի և տպագրության պատմությունը, շեշտում հայ տպագրական մշակույթի կրողների մեծ ավանդը Օսմանյան կայսրության ժողովուրդների և մասնավորապես թուրք ժողովրդի լուսավորության, տպագրական գործի և տարբեր բնագավառների զարգացման պատմության մեջ:

Տոնի գլխավոր եռօրյա միջոցառումները սկսվեցին 1913 թ. հոկտեմբերի 11-ին: Այդ օրը Կ. Պոլսի Ս. Աստվածածին Մայր եկեղեցում արևմտահայ հասարակական գործիչ Նազարեթ Տաղավարյանի նախագահությամբ Ազգային ժողովի բացառիկ նիստ գումարվեց, որտեղ ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիները արևմտահայության քաղաքակրթական զարգացումն ապահովելու համար պետք է համախմբվեին Սահմանադրությամբ նվիրագործված ներքին ինքնավարության շուրջ՝ պահպանելով իրենց կրոնական և վարչական անկախությունը: Նախատեսվում էր կրթական, բարեգործական, ազգային ու քաղաքական բոլոր ոլորտներում համագործակցել միմյանց հետ⁹: Այս համաձայնագիրը կարևոր ձեռքբերում էր, քանի որ ազգային տարբեր հատվածներին պատկանող անհատներն այժմ պետք է սկսեին համագործակցել նույն իրավունքներով և պարտականություններով: Սակայն, ինչպես նշում է «Դաշինք» օրա-

⁵ «Բիզանդիոն», Կ. Պոլիս, 12/25 հոկտեմբերի, 1913:

⁶ «Արարատ», Ս. Էջմիածին, հոկտեմբեր-նոյեմբեր, 1912, էջ 1052:

⁷ «Դաշինք», Զմիռնիա, 27 մարտի, 1912:

⁸ Տե՛ս «Ժամանակ», Կ. Պոլիս, 15/28 հոկտեմբերի, 1913:

⁹ «Ավետարներ», Կ. Պոլիս, 1 նոյեմբերի, 1913, էջ 1041:

թերթի հոդվածագիր Ավոն, տոնակատարություններից հետո այդ մերձեցումը չշարունակվեց, և համաձայնագիրը ստորագրած հայ բողոքականները հայտարարեցին, որ իրենք ի պաշտոնե չեն ստորագրել, այլ որպես անհատներ¹⁰:

Դեռևս նախորդ դարի վերջից սկսված արևմտահայ ազգային ուժերի համախմբման փորձերը որևէ էական արդյունք չէին տվել¹¹: Միայն համազգային տոնի միջոցառումների շրջանակում 1913թ. հոկտեմբերին Կ. Պոլսում հայ քաղաքական կուսակցությունները հանդես եկան հայտարարությամբ, ըստ որի՝ պետք է համերաշխ գործելին ազգային հարցերում, համատեղ հանդես գային օսմանյան խորհրդարանի պատգամավորների ընտրություններում և որ ամենակարևորն է, միասին ձեռնամուխ լինելին հայկական նահանգներում բարենորոգումների իրականացմանը: Չնայած այդ հայտարարությանը՝ 1914թ. սկզբներին՝ ընտրություններից առաջ, հայ քաղաքական կուսակցությունները վերսկսեցին իրար դեմ անհանդուրժող պայքար մղել, և ազգային ուժերի համախմբման փորձը կրկին չկայացավ¹²:

1913 թ. հոկտեմբերի 13-ի առավոտյան Կ. Պոլսի Ս. Աստվածածին Մայր եկեղեցում տոնի առթիվ եռաձայն պատարագ մատուցվեց: Երգեցողությունը վարեց Փարիզի կոնսերվատորիայի սան Արմենակ Շահմուրադյանը («Տարոնի սոխակ») Կոմիտաս վարդապետի մասնակցությամբ: Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստի արարողություն հայ գրի և տպագրության երախտավորների հիշատակին: Հրավիրյալների թվում էին օտարերկրյա դիվանագետներ, կառավարության ներկայացուցիչներ և բարձրաստիճան այլ հյուրեր: Հորեյանական հանձնաժողովի նախաձեռնությամբ լույսերով էին զարդարվել Կ. Պոլսի բոլոր հայկական եկեղեցիների ու վարժարանների դռները: Այդ օրը մայրաքաղաքի ողջ հայությունը հավաքվել էր եկեղեցու բակում և շրջակա փողոցներում, ինչի հետևանքով դժվարացել էր կարգուկանոնի պահպանումը միջոցառումների ընթացքում:

Նույն օրը՝ երեկոյան, հորեյանական տարվա փակման առիթով Կ. Պոլսի «Լեշիկի» թատրոնում ելույթ ունեցավ Կոմիտասի «Գուսան» 200-հոգանոց երկսեռ երգչախումբը, որը դարձավ այս կրկնակի հորեյանի տոնակատարության կարևոր օղակներից մեկը: Համերգին ներկա էին օտարերկրյա դիվանագետներ, թուրք մտավորականներ և պետական այրեր, որոնց թվում էին ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթը, ով նաև շնորհավորական խոսք հնչեցրեց կառավարության անունից, փոստ-հեռագրատան նախարար Օսկան Մարտիրոսյանը, գյուղատնտեսության և առևտրի նախարար Սուլեյման Էլբիսթանին, փոխարտգործնախարար Էնվեր փաշան, Շեյխ-ուլ-իսլամ Բեհա բեյը, ֆինանսների նախարար Մահմուդ Էսաֆը, Ազգային ժողովի և օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գրիգոր Զոհրապը և այլ պաշտոնյաներ, ինչպես նաև թերթերի

¹⁰ «Դաշինք», Զմիտնիա, 1913, 20 ապրիլի:

¹¹ Տե՛ս Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, XIX դարի վերջ-XX դարի սկիզբ, Երևան, «Հայաստան», 1990, էջ 405:

¹² Նույն տեղում, էջ 425:

արտոնատերեր, մտավորականներ, հոգևոր դասի ներկայացուցիչներ¹³: Հյուրերը, շնորհավորելով հայ ժողովրդին համազգային կրկնակի հորելյանների առթիվ, ընդգծեցին հայ ժողովրդի կատարած դերը Սահմանադրական Թուրքիայի զարգացման գործում¹⁴:

Այս արժանահիշատակ հորելյանի առթիվ պոլսահայ հայտնի երաժշտական տոհմի ներկայացուցիչ Հարություն Սինանյանը գրել է «Մեսրոպյան քայլերգ և մեղեդի» դաշնամուրային ստեղծագործությունը: Կ. Պոլսի հայ ոսկերիչների կողմից Զ. Յադուբյանը Հայոց պատրիարքարանին է նվիրել եգիպտական հաղթապան նմանությամբ պատրաստված աղամանդազարդ հայկական այբուբենով ոսկյա հուշանվեր, որը պետք է ուղարկվեր Էջմիածին: Կոմիտասը պատրաստել էր «Ով մեծաքանչ դու լեզու» երգի ձայնագրությունը, որը նախատեսվում էր տպագրել և վաճառել ողջ տարվա ընթացքում: Այս կրկնակի տոնի առիթով թողարկվեց նաև հորելյանական բացիկ¹⁵: Լույս տեսան հայ գրի ու տպագրության պատմությունը ներկայացնող հրատարակություններ¹⁶:

Ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ գավառներում միմյանց հաջորդեցին կրոնական և գրական մի շարք հանդիսություններ: Հաճնում միջոցառումների սկիզբն ազդարարվեց հոկտեմբերի 11-ին քաղաքի բոլոր հայկական եկեղեցիներից մեկ ժամ շարունակ հնչող դողանջներով: Բրուսայում մեծ հորելյանը նշվեց հոկտեմբերի 25-ին Ազգային վարժարանում, Բիթլիսում՝ հոկտեմբերի 26-ին Ս. Գևորգ և Խնդրակատար վանքերում: Տարոնի կենտրոնական հորելյանական հանձնաժողովը բազմամարդ միջոցառումներ անցկացրեց Ս. Սահակի գերեզմանի մոտ, Ս. Թարգմանչաց ու Ս. Կարապետ վանքերում և քաղաքի տարբեր հատվածներում: Որոշված էր միջոցառումների ժամանակ հանգանակություն կազմակերպել հոգուտ Սասունի պարբերական մամուլի զարգացման: Աղաբազարում հոկտեմբերի 13-ին՝ Ս. Հրեշտակապետ եկեղեցում միջոցառումների ավարտից հետո, տոնական թափորը հայրենասիրական երգերի նվագակցությամբ երթով շրջեց քաղաքի հայկական կենտրոններով: Երթի մասնակիցները կանգ առան դաշնակցականների ակումբի առջև, որը դրսից և ներսից զարդարված էր հայ թագավորների, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Վարդան Մամիկոնյանի և այլ նշանավոր հայերի նկարներով: Ինչպես հիշում է այդ միջոցառման մասնակից, Հայոց ցեղասպանությունը վերապրող Հովհաննես Կարապետյանը (Օսիկ Յուսուֆ), ակումբի պատուհաններից բոցաշունչ

¹³ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Tuğlacı P., Tarih boyunca Bati Ermenleri, cilt III, (1891-1922), Istanbul, «Pars Yayın», 2004, էջ 610: Տե՛ս նաև Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 504:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ Թեղդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, «Վ. եւ Հ. Տէր. Ներսէսեան», 1914, էջ 249:

¹⁶ Կ. Պոլսում հրատարակվեցին Թեղդիկի «Տիպ ու տառ» գիրքը (Կ. Պոլիս, 1912), Վահան Զարդարյանի «Յիշատակարան: Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները եւլն. եւլն. 1512-1912» (Կ. Պոլիս, 1910-1912) եռահատոր պատկերազարդ գիրքը, Խաչիկ Թահտաճյանի «Ոսկետետր ասեղնագործութեան» ալբոմը (1913), Մելքոն Յովսէփեանի Համազգային տօնը եւ պարտիզակցին (Ատա-Բազար, 1913) և այլ հրատարակություններ:

ճառեր էին հնչեցվում, որոնցում փառաբանվում էր սահմանադրությունը. «Կեցցե՛ր ազատությունը, արդարությունը, հավասարությունը, կեցցե՛ր ազգը» կոչերով¹⁷: Հայության ոգևորությունը դադարեցնելու նպատակով քաղաքապետի հրամանով երթի ճանապարհը փակվում է, և ճանապարհը փակած զինվորի և թափորի միջև տեղի է ունենում ընդհարում, որն էլ պատճառ է դառնում թուրք զինվորի մահվան, և տոնական թափորն անմիջապես ցրվում է: Այս միջադեպով Ադաբազարում տոնակատարությունները ընդհատվեցին¹⁸: Կառավարությունը պարզաբանեց, որ քաղաքը գտնվում էր պաշարման վիճակում, ուստի անհրաժեշտ էր երթի թույլտվություն: «Բիւզանդիոն»-ի արտոնատեր և խմբագիր Բյուզանդ Քեչյանը, մեջբերելով «Tanin» թերթի թղթակցի գոհունակությունն այս միջադեպի հանցագործներին արագ ձերբակալելու համար, հույս է հայտնում, որ ոստիկանությունը միևնույն աչալրջությամբ ձեռնամուխ կլինի արդարության հաստատմանը Ադաբազարի մոտ գտնվող Էլմալը գյուղում 70-ամյա հայ ծերունուն սպանելու և խոշտանգելու դեպքի հետ կապված¹⁹: Եղան բազմաթիվ այլ դեպքեր, երբ չեղարկվեցին նմանատիպ միջոցառումները, արգելվեց հայ թագավորների ու հերոսների նկարների ու ազգային զինանշանների վաճառքը, անգամ որոշ վայրերում հավաքեցին նման նկարներով լույս տեսած թերթերը: Գորտելիոյում (գյուղաքաղաք Զմյուռնիայի մոտակայքում) մի հայ լրագրավաճառի ձերբակալեցին, ով վաճառում էր Ս. Սահակի և Մեսրոպի պատկերները՝ պատճառաբանելով, որ դա հին օրերը հիշեցնող վնասակար (*միսգիր*) բան է²⁰:

Արևմտահայ մամուլը կարևորեց զույգ հորելյանների խորհուրդը և մանրամասն լուսաբանեց իրականացվող բոլոր միջոցառումները: Պարբերական մամուլի ամբողջական թողարկումներ նվիրվեցին զույգ հորելյաններին՝ ներկայացնելով գրի և տպագրության նշանակությունը հայ ժողովրդի կյանքում²¹: Ականատեսները նշում էին, որ հայ ժողովուրդն էլ ավելի ոգևորված ու խանդավառ էր, քան սահմանադրության հռչակման ժամանակ²²: Ժամանակի արևմտահայ մամուլը բարձր գնահատեց հատկապես այն հանգամանքը, որ միջոցառումներին ակտիվ մասնակցություն ունեցան նաև հայ կաթոլիկներն ու բողոքականները, ինչպես նաև հայկական բոլոր քաղաքական կուսակցությունները, և հայ ժողովրդի պատմության

¹⁷ Կարապետյան Հ., Վերապրած կյանք մը. իրական և երևակայական սարսափների արանքում, Երևան, 2010, էջ 28:

¹⁸ Նույն տեղում, էջ 29: Տե՛ս նաև «Ժամանակ», Կ. Պոլիս, 15/28 հոկտեմբերի, 1913:

¹⁹ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 19/1 հոկտեմբերի/նոյեմբերի, 1913:

²⁰ «Դաշինք», Զմյուռնիա, 1913, 20 հոկտեմբերի:

²¹ Զմյուռնիայի «Հայ գրականություն» հանդեսի՝ 1912թ. 12-րդ համարը, Կ. Պոլսի «Երկունք» ամսագրի 1913թ. 4-5 բացառիկ թիվը, Կ. Պոլսի «Շանթ» պատկերազարդ հանդեսի 1913թ. հոկտեմբերի թողարկումը, Կ. Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթի հոկտեմբերի 12-ի և հաջորդող տասը համարները և այլն:

²² «Աշխատանք», Վան, 2 նոյեմբերի, 1913:

մեջ առաջին անգամ համերաշխություն ստեղծվեց հայության բոլոր հատվածների միջև²³:

Հոկտեմբերի 13-ին Կ. Պոլսի թուրքական և ֆրանսիական բոլոր թերթերը ևս ծավալուն պյունակներ նվիրեցին «Հայկական մեծ հորելյանին»: Թուրքական «Tanin» օրաթերթը հաղորդեց, որ հայ հայրենակիցները մեծ տոն կատարեցին և ողջ աշխարհին ցույց տվեցին, թե իրենք որքան մեծ դեր են կատարում Օսմանյան կայսրության մեջ²⁴, իսկ «La Turquie» թերթը, ներկայացնելով տոնական միջոցառումները, հիացմունքով է խոսել Կոմիտասի երգչախմբի ելույթի մասին՝ փաստելով, որ Կ. Պոլիսը նման երգչախմբի երբևէ չի տեսել²⁵: Հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակների առթիվ հայ մշակույթի կենտրոններում կազմակերպված միջոցառումներին է անդրադարձել նաև մոսկովյան «Искры» շաբաթաթերթը: 1913 թ. հոկտեմբերյան համարներից մեկում թերթը լուսաբանել է Կ. Պոլսի Թաքսիմի հրապարակում արևմտահայության շուրջ հիսունհազար հոգանոց բացօթյա միջոցառումը և թերթում զետեղել միջոցառման մեծադիր մի լուսանկար²⁶:

1912 թ., երբ տոնվում էին հայ գրերի գյուտի և տպագրության կրկնակի հորելյանները, հատուկ հանձնախումբ ստեղծվեց՝ հայերենի ուղղագրությունը մշակելու համար: Առաջարկություններ եղան նաև հորելյանի առթիվ հիմնելու հայկական ինստիտուտ՝ նման եվրոպական ինստիտուտի (Մադաքիա Օրմանյան), գրական ֆոնդ (Թիֆլիսի հանձնախումբ), հայոց պատմագրության ու հայագիտության ազգային ֆոնդ (Պետերբուրգի հայկական համայնք): Ի վերջո, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրության համաձայն՝ որոշվեց հիմնել «Դպրոցական ֆոնդ»՝ հայկական դպրոցների զարգացման նպատակով հանգանակություն կազմակերպելու համար: Այդ դրամահավաքին մասնակցեց նաև արևմտահայությունը²⁷:

Հորելյանական հանդիսությունները, բացի իրենց ստեղծած ընդհանուր ոգևորության մթնոլորտից, ունեին նաև մնայուն արդյունք. կրթական ֆոնդին հանգանակված գումարները պետք է օգտագործվեին հայկական դպրոցների զարգացման նպատակով: Հայ քաղաքակրթության զարգացումը հատկանշող այս մեծ հորելյանը նոր շունչ տվեց հայության շրջանում ազգային ավանդույթներին, մայրենի լեզվի, գրականության ու պատմության ընկալմանը: Թեև պետք է նշել, որ արևմտահայ ազգային ուժերի վերջնական համախմբում տեղի չունեցավ, ինչը հետագայում կարող էր նպաստել դիմադրական ճակատի ամրապնդմանը:

Հանդիսավոր միջոցառումները շատ ակնառու էին, որոնց ընթացքում կարևորվում էին սահմանադրությունը, ազատությունը, արդարությունն ու հավասարությունը, և ևս մեկ անգամ ընդգծվում էին հայերի կրթական բարձր մակարդակն

²³ «Ավետաբեր», Կ. Պոլիս, 25 հոկտեմբերի, 1913, էջ 1026: Տե՛ս նաև «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 27/6 հոկտեմբերի, 1913: Տե՛ս նաև «Տաճար», Կ. Պոլիս, 12 հոկտեմբերի, 1913, էջ 551:

²⁴ «Ժամանակ», Կ. Պոլիս, 16/29 հոկտեմբերի, 1913:

²⁵ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 14/27 հոկտեմբերի, 1912:

²⁶ «Искры», Москва, 1913, N 42.

²⁷ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 23/5 հոկտեմբերի, 1913:

ու քաղաքակրթական գերակայությունը բոլոր ոլորտներում, ինչը հանգեցնում էր հայերի նկատմամբ թուրքական կողմի նախանձախնդրությանն ու անհանդուրժողական վերաբերմունքի խորացմանը: Երիտթուրքերի կողմից իրագործված Հայոց ցեղասպանության տարիներին հայ ժողովրդի բնաջնջմանը զուգընթաց, ի թիվս մշակութային բազմաթիվ հուշարձանների և արժեքների, ոչնչացվեցին նաև Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներում գործող հարյուրավոր տպարաններ, գրադարաններ և մատենադարաններ:

**«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՀՈԲԵԼՅԱՆԻ» ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԲՆԱԿ
ՎԱՅՐԵՐՈՒՄ**

Տաթևիկ Ղալտախչյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը քննարկում է հայ գրերի գյուտի 1500-ամյակին և հայ տպագրության 400-ամյակին նվիրված միջոցառումները Օսմանյան կայսրությունում: Շուրջ մեկ դար առաջ արևմտահայությունը մեծ շուքով տոնեց այս հոբելյանները ինչպես մայրաքաղաք Կ. Պոլսում, այնպես էլ Արևմտյան Հայաստանի գավառներում: Հայ քաղաքակրթության զարգացումը հատկանշող այս կրոնական և գրական հանդիսությունները նոր շունչ տվեցին հայության շրջանում ավանդույթների պահպանմանը և ազգային ինքնության վերախմաստավորմանը:

Բանալի բառեր՝ Գրատպության 400-ամյակ, տոնական միջոցառումներ, արևմտահայ մամուլ, «Համազգային մեծ հոբելյան», տպարաններ, հոբելյանական հանձնաժողով:

**CELEBRATIONS OF "GREAT NATIONWIDE JUBILEE" IN WESTERN ARMENIA AND
IN ARMENIAN-POPULATED REGIONS OF OTTOMAN EMPIRE**

Tatevik Ghaltakhchyan

SUMMARY

The article concerns the events in the Ottoman Empire dedicated to the 1500th anniversary of the Armenian alphabet and the 400th anniversary of the Armenian printing. Almost a century ago, Armenians celebrated these jubilees with great enthusiasm both in Constantinople and in the provinces of Western Armenia. These religious and literary events, characterizing the development of Armenian civilization, gave a new impetus to the preservation of national traditions and the redefinition of identity.

Keywords: 400th anniversary of book printing, festivities, Western Armenian press, “Great Nationwide Jubilee”, printing houses, jubilee commission.

ПРАЗДНОВАНИЯ «ВСЕНАЦИОНАЛЬНОГО ВЕЛИКОГО ЮБИЛЕЯ» В ЗАПАДНОЙ АРМЕНИИ И АРМЯНОНАСЕЛЕННЫХ РАЙОНАХ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

Татевик Калтахчян

РЕЗЮМЕ

Статья посвящена событиям в Османской империи, посвященным 1500-летию армянского алфавита и 400-летию армянского книгопечатания. Почти сто лет назад армяне с большим энтузиазмом отмечали эти юбилеи как в Константинополе, так и в провинциях Западной Армении. Эти религиозные и литературные события дали новый импульс сохранению национальных традиций и переопределению идентичности.

Ключевые слова: 400-летие книгопечатания, праздничные мероприятия, западноармянская пресса, “Всенациональный великий юбилей”, типография, юбилейный комитет.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շուշան Խաչատրյան, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտ, ՀՅԹԻ հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտական աշխատող: Պատրաստում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության հետազոտման կրոնագիտական խնդիրները» թեմայով: Ուսումնասիրություններ՝ Օսմանյան կայսրության կրոնական իրավիճակի, կրոնների բախման, ցեղասպանության աստվածաբանության, Հոլոքոստի փիլիսոփայության ոլորտներում:

Սուրեն Մանուկյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: 2012-2013 թթ. Ֆուլբրայթ հետազոտական ծրագրի կրթաթոշակառու: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության սոցիալ-հոգեբանական ասպեկտը և համեմատական ցեղասպանագիտություն:

Գոհար Խանումյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Ռբախավաք աշխատանքներն Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության տարիներին»:

Նարեկ Պողոսյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետազոտության թեման է Հայոց ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ:

Միհրան Մինասյան, ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության երկրորդ փուլը (Միրիայի տարածքում), հայ գրքի և ձեռագրերի պատմություն, հալեպահայ գաղթօջախի պատմություն և այլն: Յոթ մենագրության և բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

Քրիստինե Նաջարյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Զբաղվում է արևմտահայության կրթական կյանքով:

Տաթևիկ Ղալթախյան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական աշխատող, Գրադարանի և արխիվի բաժնի վարիչ: Զբաղվում է 1908-1914 թթ. Արևմտահայ մամուլի պատմության ուսումնասիրությամբ:

Հրատ. խմբագիր՝ Ազատուհի Սահակյան:

Համակարգչային էջադրումը՝ «Կոլլաժ» ՍՊԸ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 11.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «Կոլլաժ» տպագրատանը
Երևան, Սարյան 4 • Հեռ.՝ (+374 10) 52 02 17
Էլ. փոստ՝ collagetd@gmail.com • Էլ. կայք՝ www.collage.am